

ԴՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽՈՏԱԲՈՒՅՑԱՆ

ԳՅՈՒՂՂՋԱՆ

1935

ԵՐԵՎԱՆ

ج

ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ի Ռ Ս Ա Բ Ո Ւ Ց Ա Ե Ր

~~H~~ $\frac{\pi}{2407}$



ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
1935

1935



ԱՌՎՈՒՅՏ (Փյուշերna-Medicago sativa L.)

Ցենթաղբիտմ և, վոր սովորական առվույտի հայրենիքն արևմտյան Պարսկաստանն և (Միջիա): Այնտեղ գոնզվել և վայրի տափույտ, վոր շատ նման և կուլտուրականի: Առվույտը ցանում—մշակում են վորքը Ասիայում, Հնդկաստանում, Ավղանստանում, միջին Ասիայում և այլն: Հնագիտական ու պատմական աղբյուրները նշում են, վոր այն մշակվել և ձին Բաքելոնուա, Ասորեստանում ու Պարսկաստանում:

Գլխիոսի հաղորդածի համաձայն, մեր թվաղբությունից մոտ 407 տարի առաջ, պարսկական պատերազմների ժամանակ առվույտը Միջիայից Հռոմաստան և ընթացական Այսպիսով, հնագույն ժամանակներից սկսած մինչև վերջներս գրավույտը միակ կերպարույն և հանդիսացել արևելյան ժողովուրդների մոտ: Հռոմաստանից հռոմայեցիներն ամփույտը մուծեցին Խտալիա, զրանից հետո՝ Սպանիա ու Ֆրանսիա (XVI դարում), այնուհետև Գերմանիա ու Անգլիա (1650 թ.): Սպանիայից ամփույտը տարվել և Հարավային Ամերիկա ու Մեքսիկա, վերջիններին զրագման ժամանակներում սպանացիների, փորթուրալացիների կողմից:

Առվույտը Միացյալ Նահանգներ ու Կանադա մուծել են նաև Յեզրուղայից զնացած զաղութականները: Ներկայումս առվույտը տարածված և աշխարհի բոլոր յերկրներում: Առվույտի ցանքատարածությամբ առաջին տեղը բանում և Արգենտինան, վոր 1926 թվյն մոտ 8 միլիոն հեկտար առվույտացանք ուներ (մշակվող ամբողջ տարածության 37%): Այնուհետև գտին են Միացյալ Նահանգները ($4,474$ հազ. հեկտ.— $3,2\%$), Ֆրանսիան ($1,142$ հազ. հեկ.— 5%), Խոտալիան (565 հեկ.— $4,2\%$) և այլն:

Եորհըդային Միության մեջ 1930 թվին հաշվվում եր մոտ 500 հազար հեկտար առվույտացանք (Միջին Ասիայում, Աւղրեկատանում, Հյուսիսային Կովկասում և այլն):

Մեզ մոտ ել՝ գաղտային տաք գոտու, վռառզվող հողերում շատ հին ժամանակներից սկսած, առվույտը, վորպես կերպարույ-

մշակվում են տալով տարեկան 3-4 հունվար ու միջին հաջողությունը՝ 65-85 ցենտներ չոր բերք (մեկ հեկտարից): Կիսանապատային շըլ-ջանների վռառդվող հողերում առվույտը շատ բարձր բերք և տալիս է այս տեսակետից վորեն ուրիշ կերարույս նրա հետ մրցել չի կարող:

Ենք լեռնային շրջանների (Լեռնինականի ու Սխիֆանի) ցուցադաշտերում 1925-1928 թվերին 1500-2000 մետր բարձրության վրա կատարած ցանքսերը ցույց են տվել, վոր գոռողվող ու բերբի հողերում ամառային յերկու հնձից 65-75 ցենտներ չոր առվույտ ե տարացվում: Այստեղ նրան մրցակից ե գուրս զալիս դորիդ ու բազմամյա կերաբույս կորնզանը (EСПарцет-օպօծիչիս L.), վոր տարածման ավելի մեծ հեռանկարներ ունի լեռնային բոլոր շրջանների ամեն տեսակի հողերում, և այս վոչ միշան վռառդման պայմաններում, այլև անջրդի տեղերում:

Կորնզանը կարող է աճել քարքարոտ, կոտիճամակոր ու չոր այնպիսի հողերում, գորտեղ առվույտ բուսացնելու մասին մտածելն ել ափելորդ եւ:

Առվալյան ու կիխման.—Առվույտը Հարավային տաք կիխմայի բույս եւ նրա նորմալ միջավայրը վաղի մշակության շրջանն և համարվում է Բայց մեզ մոտ՝ Հայաստանում առվույտը մշակվում է նաև ցուրտ շրջաններում: Այստեղ, լավ ձյունածածկոցի չնորդիվ, նա ցրտահարության չի յինթարկվում, ինչպես, որինակ՝ Լեռնինականի ու Սևանի ցուրտ ձմեռ ունեցող շրջաններում, վորտեղ սառնամանիքները համեստ են 29°8 (Ն. Բայազետ) և նույնիսկ-35-38° 8-ի (Լեռնինական): Այս հանգամանքը հարատառուն ձյունածածկոցի առկայությամբ և բացատրվում ցրտաշունչ բոլոր ամիսների ժամանակաշրջանում: Հաշվում են, վորձյունածածկոցի ըացակայության ժամանակ առվույտը դիմանում է մինչև 20° 8-ի, իսկ- 25°8-ի ժամանակ վոշնչանում եւ Առվույտի ցրտակայունությունը կախված ե, բացի նրա տեսակեց, ինարկե, մի շաբաթ ուրիշ հանգամանքներից, այն են նրա սերմի ծագման վայրից, խոտածածկի խոռոչունից, ողի ու հողի խոնավությունից, ձյունածածկոցից ու հողակաղմից:

Ամենամեծ ցրտակայունությամբ աշխի յին ընկնուս մանգաղաձև առվույտը (*Medicago falcata* L.) և դեղնածաղիկ շվեդական առվույտը:

Առվույտը շատ հակամետ ե բարձր ջերմաստիճաններին, ինարկե վռառդման առկայության պայմաններում: Այս շատ լավ:

յերնում և այն բանից, վոր Հայաստանի ու Թուրքեատանի տաք դուռամ առվույտը հիանալի աճում և 4—5 հունվար և տալիս Խորհ. Միության հարավային մասերում, սակայն, չոգ ու չորսային ամռան ժամանակ առվույտը յերեխն շորանում—վոչնչանում է. Այս հանդամենքը հողի մեջ դռնվող խռնավության բացակայությամբ և միայն բացատրվում, յերբ, առվուտից զատ, այրվում են թե հացարույսերը և թե մնացած բոլոր մշակույթներն ու բնական խոտերը. Այսպիսի տարիներին, չնայած իր հզոր արմատներին, յնըստակայտն առվույտն ել չի դիմանում առեղծված չորային պայմաններին ու վոչնչանում և (ինչպես 1921 թվին):

Սովորական կապտածաղիկ առվույտի նկարագրությունը.—Առվույտը բազմամյա, բարձրականող բույս և առվույտի լավ զարգացած թուփը 20—30 վաստ և ունենում, վորոնց բարձրությունը 45—90 սանտիմետրի յե հասնում, ցողունները քառակիցունի, բաց-կանաչ գույնի յեն. ծաղկում և փնջաձն, բաց-մանուշակագույն-կապտավուն դույնով: Տերեխները յեռաթերթ են՝ ներքեցում նեղ, վերնում լայնացող. ծայրատերներն ավելի յերկար կանթ ունի, քան յեղեքերինը. ցուղուններն ուղղաձիգ ու վեր բարձրացող են: Առվույտաթփի տերեսու մակերեսը շատ և զարգացած, վորի շնորհիվ նա շատ խռնավություն և ծախսում գոլորշիացման վրա: Առվույտի պտուղը թափ մակերեսով ու մուղ-դարչնագույն, պարսւրածև-վոլորուն պատիճ և սերմերը մասն են՝ 2—2¹/₂, մմ յերկարությամբ ու 1 մմ լայնությամբ. սերմերը կլոր-ձվաձև են ու դեղնա-դարշնավուն գույն ունեն: Կարմիր, կինամոնագույն ու նվազ սերմերը ծուն չեն. կարմրա-դարշնագույն, անձեւի տակ ընկած կամ յերկար ժամանակ պառկած մերմերը վատածիլ են:

Արմատախատներ.—Առվույտի արմատները խոր թաղփում են հողի մեջ. միջին խորությունը մոտ 1¹/₂—2 մետր եւ Սակայն դյուրաթափանց հողերում առվույտի արմատները 4—5 մետր և



Նկ. 1. Սովորական առվույտ.

Նույնիսկ ել ավելի յեն խորանում, վորի պատճառով, ինչպես և հողի ամենախոր շերտերից ջուր վեցնելու կարողության շնորհիվ, այս կերարույսը յերաշտից չի վախենում: Դանում են, վոր առվույտը տարեկանից 12 անդամ, իսկ վարսակից 8 անդամ ավելի շատ խոնավություն և դոլորշիացնում: Չնայած այս բանին, նա յերաշտակայուն բույս եւ Ցերաշտաշատ շրջաններում տափույտը մի վորոշ չափով փախվում եւ, նրա տերեւները մանրանում, կոպտանում, սեղմվում ու յերկու լերեսից ել թագուտում են: Այս բանի հետեւնքով, տերեւների միջոցով կատարվող զորությացումը նվազում եւ, և առվույտն ավելի դյուրությում և դիմանում յերաշտին, մանավանդ, վոր նրա հզոր արմատները հողի ամենախոր շերտերից են ջուր առնում:

Գիսդ ու անթափանց հողերում առվույտի արմատները 25—40 սանտիմետրից ավելի խօսք չեն թազվում, այլ սկսում են աճել ու նյուղավորվել զիմավոր արմատի շուրջը:

Հոդի մակերեսից գոչ շատ ցած, ոլլավոր արմատից ճյուղավորվում են մեծ քանակությամբ արմատաթնելիկներ ունեցող յեղբարձատները Հերկաշերտում առվույտի արմատասիստեմն ավելի թույլ և դարձանում: Բույսի սննդառությունը դիմավոր ու յեղբարձատների միջոցով և կատարվում:

Արմատավիզ. —Այն տեղը, վորից արմատն եւ սկսվում և ընձյուղն և դուրս գալիս: Նա տարեցտարի խորանում և հոդի մեջ, վորի շնորհիվ, առվույտի բողբոջներն ու մատադ ընձյուղները պաշտպանվում են հնձվելուց, արածեցվելուց, վնասատուներից ու ցրտերից: Արմատավիզն վրա պահեստաբողոջներ կան, վորոնք առվույտը հնձելուց հետո նոր ընձյուղներ են տալիս, և առվույտն ուժգնորեն թփակալում եւ:

Առվույտի պահանջը նոդի ու յենքանոդի նկատմամբ. —Առվույտը սիրում ու գերազառում և կրային ու թեթև հողեր և նույնպիսի յենթահողեր, ուստի նա հաջողությամբ և դարդանում կավախառն-կրային ու կավային-մերգելաշատ և նույնիսկ ավազոտ ու ավազախառն հողերում, յնին միայն յենթահողը կավային եւ վոչ առանձնազես անբերբի: Անհրաժեշտ են նաև, վոր յենթահոդը դյուրաթափանց լինի առվույտի խոր գնացող արմատների համար:

Ցերե հողաշերտն ու յենթահոդը կավառման —խիստ են, ապա առվույտը ջուռով վոչնչանում եւ, նրա համար անպետք են նաև քարքարոտ ու կոպիճոտ մանրահոդերը. նա չի դիմանում նաև այն վայրերում, վորտեղ ստորերկրյա ջրերը մտեկ են:

Յեթի այդ ջրերը հոսուն են, այդ գեղքում առվույտը լավ է անում Հոսուն այդ ջրերն այն ժամանակ են անցանկալի, յերբ առվույտի մշակության նպաստելը սերմ ստանալն եւ Այս գեղքում սերմի ցածը բերք և ստացվում, վորովնեսոն ջրայտության շնորհիվ անընդհատ նոր ընձյուղներ են դոյցանում, վորոնք սերմերից խօսում են աննդանյութերը և ստվերում են մինչ այդ աճած ընձյուղները, վորոնք իր հերթին փոխում են հողի վրա ու քիչ թվով պատճեներ են տալիս:

Ավագաղուտ հողերում առվույտը բավականաչափ լավ է պարզանում. այսպիսի հողերի ջրածածկ վուուումները հերկաշերտից լվանում են վնասակար աղերը, վորոնք ավելի խոր հողաշներտերի մեջ են անցնում:

Առփայի նախակուրլութք.—Հայաստանի գաշտային-բամբակագործական գուտում առվույտն անազին նշանակություն ունի. այստեղ բնական արոտներ ու մարգագետիններ չկան, իսկ լեռնարոտները հեռու յեն ընկած նրանից. Սերմափիխության մեջ առվույտը բացառիկ խոտաբույս և հանդիսանում գաշտային գուտու համար. Առվույտի կարևոր մյուս նշանակությունն այս ջրանի համար նրա պարարտացուցիչ հատկությունն եւ

Ուշդափոր բույր բույսերը, նրանց շարքում նուև առվույտը, իրենց արմատների վրա ունենում են պալարիկներ, վորոնց մեջ ապրում են անտեսանելի մանր եյտկներ—բականքիաներ. Սրանք սղից յուրացնում են աղատ աղոտը և այն վերամշակում են վորպես աղոտանյութ: Մի վորոշ ժամանակ անց՝ բականքիաները մահանում են, և նրանց կուտակած նյութերը մնում են առվույտի արմատամացորդների մեջ: Մինենույն դաշտում մի քանի տարի շաբունակ առվույտ մշակելուց հետո նրա արմատամացորդների քայլքայման հետևանքով, հողի մեջ մեծ քանակությամբ առվտանյութեր են կուտակվում, վորոնք և պարարտացնում են հողը Այս և պատճառը, վոր առվույտի ցանցներից հետո բարձրանում և բամբակենու և ուրիշ մշակությունների բերքատվությունը:

Բերքատվության այս բարձրացումը վոչ միայն աղստանյութերի ավելացումով, այլև այն բանի հետևանքով և բացարկում, վոր առվույտն իր խորաթափանց արմատներով մննդանյութ. և քաղցում խոր հողաշերտերից ու բարձրացնում և այն գեղիք հերկաշերտը. Այնուհետև, առվույտի ցաղուններով մնաստեններին հերակրելուց հետո, այդ նյութերը գոմաղրի մի-

Հողով հողի մեջ են մտնում: Արանից զատ, գաշտային բամբակագործական գոտու ընկած հողերում առվույտն ուժնորեն կրաքելավիթ նրանց ֆիզիկական հատկությունները շնորհիվ այն բանի, զոր մահանալուց հետո ապլույտի արմատախոտեմը կավելացնի այդ հողերի ծակոտկենությունը:

Իր հերթին այս նպաստելու յե հողի ընդհանուր բերքատվության բարձրացմանը ընդ սմին նկատված ե, զոր առվույտատեղը վարելուց հետո բերքն ուժգնորեն բարձրանում և վոչ միայն 1-ին տարում, այլև հաջորդ 2-րդ ու 3-րդ տարիներում, թեպեսև հետզհետեւ ավելի թույլ չափով: Առաջին տարում բերքի ավելացումը կարելի յե հաշվել 100% , յերկրորդում՝ 50% և յերրորդում՝ 25% : Այս թվերը, ինարկեն, մոտավոր են, քանի զոր այս հարցի վերաբերյալ ավելի ստույգ ու լավ մշակված տվյալներ գետես չկան մեղ մոտ:

Խնչպես վերևում հիշատակվեց, խոսային (կերի) ու սերմ-նափոխության նշանակությունից զատ, առվույտը մի քանի շրջաններում մելիորատիվ բույսի նշանակություն ունի: Աղարկը հողերում համատարած ցանքսերի ժամանակ, խիտ բուսակալության շնորհիվ, առվույտը նպաստում և հողի ապահղեցմանը: Առվույտն արագիսով կարգի յե բերում աղիքացած հողերը և կարելի յե դարձնում մի քանի տարի շարունակ ուրիշ մշակույթներ վարել, վորոնց ժամանակ հողերը կրկին աղիանում են:

Վերջապես, առվույտասերմի արագորությունն արդյունաբերական նշանակություն կարող է ունենալ ներկայաւում, յեր Խորհրդային Միության կոլտնտեսություններում ամենուրեք խոտացանությունը զարգանում է, իսկ խոտասերմերը, մասնավորապես առվույտի սերմը, չեն բավարարում պահանջը, առվույտասերմի ստացումը կոլտնտեսություններում մեծ նշանակություն ու լայն հեռանկարներ ունի Խորհրդային պահանջմունքների համար:

Բամբակագործության զարգացումը և Միության հարավում և անասնապահության զարգացումը մյուս շրջաններում՝ առվույտաբուծության ուժեղ զարգացման պահանջն են դնում մեր տռաջ:

Եթերաբակեցուրբյունը: — Առվույտի յերկարակեցությունը աեղական պայմաններից ու նրա տեսակից և կախված: Զոր շըրջաններում առվույտի արտն ընդամենը 3—4 տարի յեն պահում: Ցեղը ուղարկայում առվույտի ցանքից ոդտվում են 4—10 տարի, Բայց նպաստավոր պայմաններում նա դիմանում է 9—12 տարի, հաղ-

վաղեայ՝ նաև 15—20 տարիի Վորպես բացառություն, առվույտի
25—30 տարիմա յերկարակեցության գեղքեր են նշվում ինչպես
Ելզրուայտը, նույնպես և Ամերիկայում։ Առվույտի յերկարա-
կեցությունը կախված է նաև մշակման կանոնավոր յեղանակ-
ներից ու հոգտատար խնամքից։ Մեզ մոտ ել՝ բամբակագործական
գոտում, առվույտը բավականաչափ յերկարակյաց մշակույթ և
(6—8 տարի)։

Հոդի պատրաստումը.—Հաջող զարգացման համար մատաղ
առվույտը բավարար խոնավության ու մոլախոտերից զերծ լի-
նելու կարիք ունի Արմատներն ազատորեն տարածելու համար
նա պահանջում է մաքուր հող։ Այս պատճառով ել առվույտը
խորը հերեդած—մշակված (18—25 ամ) հող և սիրում Յերբեմնե
նրա համար հողն ավելի խոր են հերկում և, գութանից զատ,
հողը խորացնող գործիք ել են կիրառում։ Աշնանից հերկած հողն
ամրագլ խորությամբ թողնում են տանց փոցինելու։ Այս գրու-
թյամբ հողն ավելի ջատ խոնավություն և ծծում և իր խոր-
դուրորդներով ավելի լավ ու ավելի ջատ ձյուն և պահում իր մեջ։
20—25 ամ. խորությամբ հերկելիս մոլախոտերի արմատները մնն
մասամբ վաշնչանում⁴ են։ Ավելի լավ և, մանավանդ յեթե առ-
վույտը հացահատիկներից նոր ազատված հոդի վրա յե ցանցում,
խոր աշնանավարից առաջ հողի նախնական կենցելատում կատարել,
այն ել բերքահավաքից անմիջապես հետո, քանի զեռ հողը բա-
լորովին չորացած չեւ կեղևատումը կատարվում և բազմախոփիկով
20 ամ խորությամբ կեղևատումը նպաստում և հոդի խոնավու-
թյան խնայողությանն ու ամբարմանը և մոլախոտերի ու ֆո-
ստուների վոչնչացմանը։

Հետազ խորահերկի ժամանակ թափուկարույսերը, մոլա-
խոտերը, ինչպես և ֆասատուներն ավելի ջատ կոչնչանան-
դարնանը, յերբ հողն այնքան և ցամաքում, վոր լավ աշխատելը
նրա վրա հնարավոր և դառնում, մեկ կամ յերկու անգամ պետք
և ցաքանել այն, հնարավորության գեղքում, մինչև ցաքանելն
եքստիրպատորով (սուզաթաթան փոցիներով) ել ավելի լավ պետք
և փիրեցնել հոդը։ Գարնանը նույնիսկ ավելի խոր փիրեցման
նպատակով վոչ մի դեղքում չպնտք և գութնահերկ անել, վո-
րովնետև հոդն արդարիսով չափազանց ցամաքում և, և առվույտի
ծլելն անհուսալի յե դառնում։ Գարնան փոցինումը մի կողմից
նպաստում և խոնավության պահպանմանը հոդի մեջ, իսկ մյուս
կողմից փիրեցնում և կոշտերն ու կնձիկները և համահարդարում

և հողի մակերեսը: Վերջապես այնպիսի մանր սերմերը, ինչպիսին տավույտինն են, չպետք ե 2—3 սանտիմետրից ավելի խոր դցվեն, վորովնեան նբանք առանց ծիլ տալու կարող են վոչնչանալ հողի մեջ: Գարնան փոցխումը շպետք և ուշացնել, վորպեսուի դեռնի խոնավության առտեղի ծախսում չկատարվի, վորը բացառական ազդեցություն և ունենում թե ծլելու և թե հետադախոնավության վրա:

Առվույտն ամենից ավելի վերաբմատներով բազմացող սիօնախոտից ու անքիտախրացուկից և վախենում: Առվույտը նբանց չի կարողանում հաղթահարել, վորովնեան իրենց վերաբմատներով խոտըն ճամակալելով՝ նբանք արդելք են հունդիտանում ողի ու տեղումների թափանցումին հողի մեջ: Այդ մոլախոտերը հաղթահարում են առվույտին և իրենց ընձյուղներով ծածկում նբաթիքիրի բոլոր արանքները: Այս բույսներով մոլախոտված հողերում ավելի նպատականարմաք և բույսովին հրաժարվել առվույտ ցանելու մտքից: Իսկ յեթե հողի մեջ ուրիշ, նույնիսկ տառասկի նման ուժեղ մոլախոտեր կան, այդ այնքան ել մոտանգավոր չև առվույտի համար, վորովնեան խիտ ցանելու դեպքում առվույտը նույնիսկ միջոց կարող ե լինել մոլախոտերի վոչնչացման գործում: Տառասկը և ուրիշ մոլախոտերն առվույտի խոտակալած թիքիրի տակ վոչ միայն չեն զորանում, այլև դյուրությամբ վոչնչանում են:

Կրացում.—Առվույտը շատ լավ ե ընդունում հողի կրացումը, յեթե միայն հողը կրային մասնը պակասություն ունի: Հողի կրապահանջը պարզելու բավական լավ ու հասարակ յեղանակը վեռնիճաթղթով (լակմուսօք բույրա) վորոշեն և, Մըս համար մի բուռն բավականաչափ խօսավ հողից գունդ են շինում ու հապում վեռնիճաթղթին, մինչեւ հողին կպչելը. վեռնիճաթղթը բույրութին չոր պետք ե լինի. ըստ վորում նույնիսկ քրտնած ձեռքերի հպումը սիսալ վորոշման պատճառ կարող և դաւնար Յեթե այս փորձի ժամանակ խոնավ հողագնդին կպչելուց հնառ կարմիր վեռնիճաթղթի գույյնը կապույտի փոխվի, կամ կապույտ վեռնիճաթղթի գույյնն անփոփոխ մնա, պետք և ընդունել, վոր փորձարկվող հողանմուշը կրային մասնը պակասություն չունի: Իսկ յեթե վեռնիճաթղթի կապույտ գույյնը կարմը փոխվի, ուրեմն հողի մեջ կրային մասնը պակասում են:

Հողի կրացման համար կարելի յե գործածել չանգած ու հանգած կիր, աղացած կրաքար, մերգել ու գիպս: Մեկ տոնն

Հնանգած կիրը չեղոքացուցիչ իր ներգործությամբ համար և
1 1/2 տոնն հանդած կրի ու 2 տոնն աղացած կրաքարի:

Մեկ հնկամը հողի մեջ սովորաբար շաղ են առյիս մեկ
տոնն չհանդած կիր, կամ, համապատասխան չափով՝ այլ տեսակի
կրանցություն:

Եթե հնարավոր ե, հողին կիր պետք ե տալ առվույալ
ցանելուց մի տարի տառաջ, մանավանդ. յերբ աղացած կրաքար
և զորձածվում, վոր չհանդած կրից ավելի դանդաղ և լուծվում
ու ներգործում. Հողին կիրը տալն ամենից լավ և կատարել հեր-
կելու ժամանակ՝ ցանքից 2—3 շաբաթ առաջ:

Մեր լեռնային շրջանների բոլոր հողերն ել բավականաշահ
կրային են, ուստի և կրացման կարիք կարող ե ամենելին չըդ-
գացվել, իսկ ինչ վերաբերում և դաշտային գոտան, ապա այս-
տեղ առյօնից ցանքերի կրացման ու գիրասացման փորձեր
պետք ե կատարվեն: Կարող ե պատահել, վոր կրացումը դրական
իմաստով ընդունեն դաշտային գոտու հաստակերտ ու տղմարեր
այն հողերը, վորոնք՝ դրա հետ միասին նատունակ են ու դյուրու-
թյամբ կնոջեն կաղմում, վորի շնորհիվ ոդդն ու ջուրը դյուրու-
թյամբ հողի մեջ չեն անցնում, կիրը բարելավում և ծանր հո-
ղերի ֆիզիկական հատկությունները, ավելի փուլիր և ավելի թա-
փանցիկ ե դարձնում հողը: Այս պատճառով ել դաշտային գոտու
հողերին կիր տալը կրկնակի ոգտակար կարող և լինել, նախ,
վորպիս պարաբռանյութ՝ առվույտի համար և, ապա վորպիս
հողի ֆիզիկական հատկությունները բարելավող միջոցառում:

Պարագագաւմը.—Լավադրույն գարզացման համար առվույտը
բավականաշահ հումուս պարունակող հարուստ հողի պահանջ-
ունի: Առվաւյտի բերքատվության բարձրացման վրա հատկապես
լավ են ազդում ֆոսֆորաթթվալին պարաբռանյութերն ու հու-
մուսը (այսինքն՝ քայլայված որգանանյութերը):

Ամեան սկզբնական շրջանում առվույտն ազդույտի վերոշ,
քանակության կարիք և զգում, բայց հետագայում նա ինքն և
ձեռք բերում աղոտը՝ շնորհիվ այն բականական կրի, վորոնք
փոքրիկ սիսևնահատիկի և ունեցող հատուկ ուռուցքների մեջ
զետեղված են նրա արմատների վրա:

Գոմազրի կամ կոմպոստային լավ պարաբռացութիւնը,
վորոնք նախորդող մշակույթների ժամանակ են տրվում, վոչ
միայն հումուս են մատակարարում հողին, այլև հարստացնում

Նրան նաև ուրիշ սննդատու նյութերով, վորոնց պահանջն առվույտն ել եղում,

Դոմադրի հետ միասին հողի մեջ նաև մոլախոտերի սերմեր գցելուց խուափելու համար, դոմադրը նախապես պետք է պատրաստեր կազ և նույնպես, դոմադրից բացի, հողին կոմպոստալը: Դոմադրի կամ կոմպոստի քչության ժամանակ վորոշանակությամբ աղոտ չպարունակող հանքային պարաբանյութ են ավելացնում զինալորապես փոսֆորա թթվային նյութեր, իսկ ավագանողերում ավելացնում են նաև կալիումի պարաբանյութեր:

Դոմադրը կարելի յի դաշտ տանել նաև աշնանը: Այս ձեռվ պարաբացրած արտն առվույտացանից առաջ պետք ե հերկվի:

Առաջերթութաւած: — Առվույտի համար ամենալավ պարաբանյութը սուպերֆոսֆատն ե, զոր 100—200%՝ ովք բարձրացնում ե նրա բերքատվությունը:

Փոսֆատային այս պարաբացումը յերկու տեսակ ե լի նույն սովորական ու կրկնապատիկ: Վերջին դեպքում ֆոսֆորի քանակը, վորի պահանջն առվույտը հատկապես զգում ե, յերկու անգամ ավելի յի սովորական սուպերֆոսֆատի մեջ յեղածից: Սուպերֆոսֆատով կարելի յի առվույտանոցը պարաբացնել վաղ դարնանը, մինչև աճեցողությունն սկսվելը, կամ քաղերից անմիջապես հետո: Առաջին դեպքում սուպերֆոսֆատը բերքն ավելացնում ե հենց միենույն տարրում, իսկ 2-րդ ու 3-րդ քաղից հետո աված պարաբացումն ուժեղ կերպով ազգում ե հաջորդ տարրուց: Սուպերֆոսֆատը հողին են տալիս հատկապես այդ նպատակին հարմարեցրած սերմիչի միջոցով, առվուտացանի հետ միաժամանակ: Յեթե սերմիչ չկա, շաղացան են կառարում, բայց այդ ավելի վատ արդյունք ե տալիս:

Նիտրատինով վարակելը: — Արմատների վրա գտնվող պարաբիկների բացակայության դեպքում առվույտն սկզբում մինչեւ 10—25 սմ բարձրության հասնելը զարգանում ե, իսկ այնուհետև դեղնուամ ու վոչնչանում ե: Նոր առվույտացանքի այդպիսի բակտերիաներով վարակումը կամ նիտրատինացումը հետևյալ ձեռվ ե կատարվում: առվույտ կամ իշառվույտ լավ աճած տեղի հողը բերում ու առվույտին հատկացված արտի մեջ են շաղ տալիս Այդպիսի հողն առվույտասերմի հետ հավասար չափով իրար խառնելու: և շաղ տալու դեպքում նիտրատինացման չափ արդյունքներ են ստացվել: Հողի ու սերմի այս խառնուրդը

յրում են կամ ձեռքով—շաղացան, կամ թե չե չարքացանի միւջոցով. վերջին դեպքում հողը մաղում են. խառնուրդը ցանելիս ժամանակ ու ժամանակ սերմն ու հողը պետք ե շատ լավ խառնել իրար հետ. Առվույտի զարգացմանը նպաստող այդ բակաերիաներն ամենից ավելի այն հողերի մեջ են լինում, վորտեղ առաջներում առվույտ ե անել. Նրանց չեն լինում, կամ աննշան քանակությամբ են լինուն, վորտեղ առվույտ յերբնք չի ցանգել:

Ունղավոր բույսերի և նրանց շարքում նաև առվույտի զարգացման անհրաժեշտ պայման հանդիսացող այդ բակաերիաները բազմացնում են նաև արհեստական կերպով—լարարատորիաներում: Հենց այս միջոցով պատրաստված ու մեծ քանակությամբ բակատերիաներ պարունակող հեղուկը կոչվում է նիտրատին:

Ցանելու ժամանակը.—Ելիմայական և ուրիշ պայմանների կապակցությամբ, առվույտը ցանգում և գարնանը կամ ամառվա վերջին, կամ թե չե վաղ աշնանը: Գարնան առվույտացանը կարելույն չափ վաղ են կատարում, վորպեսզի հողի վերնաշերտը շորացած չլինի, և առվույտի սերմերը դեռևս խոնավ հողի մեջ ընկնեն. այդ սերմերի աճման համար շատ խոնավություն և պետք, իսկ մինչև —⁴ ցրտերը վտանգավոր չեն առվույտի համար:

Հարավային, ավելի տաք ցրջաններում առվույտացաննեկառում են փետրվարի վերջին, իսկ ավելի ցուրտ ցրջաններում, նայած տեղական պայմաններին՝ մարտի կամ ապրիլի սկզբին:

Մեղմ ձմեռ ունեցող ցրջաններում, յերբ հողն ել բավարար չափի խոնավությամբ ապահովված ե, պետք ե գերազանցել ամռան վերջին կամ աշնան սկզբին կատարվող առվույտացանը: Աշնանացան առվույտն այն առավելությունն ունի, վոր հաջորդ ամռան իսկ լավ հունձ և տալիս, այնինչ գարնան ցանած առվույտը նույն հունձը չի տա: Այսպիս լինելով հանդերձ, հարկ է զգացվում հրաժարվել աշնանը կատարվող առվույտացանից, վորովնետե հողի մշակությունն այդ ժամանակ դժվար ե կատարվում, հողը կոշտացած և լինում, այդ ժամանակ հացահատիկների հետ խառը կատարված առվույտացանին, ապա հաճախ այդ անհաջող և լինում, վորովնետե առվույտը նոսր ե դուրս գալիս ու դյուրությամբ խեղդվում և մոլախոտերի մեջ:

Մեծ արդյունավետությամբ առվույտ են ցանում գարնանը՝

աշնանացան հացարույսերի վրա: Այս վերջին գեպքոռմ աշնանացանը դարնանը փողիսելուց հետո ցանում են առվույտանըմերը, ապա, սերմերը ծածկելու համար, նորից փողխում են:

Այսպիսի ցանքաձևն և հենց, զոր մեծ մասամբ կիրառվում և մեզ մոտ՝ դաշտային—բամբակագործական շրջաններում: Հացարույսերի հետազա վոռոգամն չնորհիվ, առվույտն այս շրջաններում լավ և զարգանում և միննույն տարին, հացարույսերի բերքահավաքից հետո, մեկ անգամ քաղվում եւ:

Մեզ մոտ՝ բամբակագործական գոտում առվույտի միանդամայն հաջող աշնանացան ել և կատարվում: Գարնանացան հացարույսերի՝ վարսակի, գարու և այլ ցանքերի հետ ել առվույտ են ցանում: Այս ավելի հաջող և լինում, քան աշնանացանի հետ սերմած առվույտը, վորովհետեւ աշնանացանն ավելի արագ անելու հետևանքով նորարույս առվույտին խեղդում եւ:

Գարնանացան հացարույսերի՝ զարու, վարսակի և այլ ցանքերի հետ առվույտ սերմելու դեպքում այս հացարույսերի սերմի քանակը սովորականից $\frac{1}{2}$ -ով ավելի պակաս են վերցնում. այսպիս չանելու ժամանակ առվույտասերմերը սաստիկ տուժում են: Հաճախ, մանավանդ յերաշտաջատ շրջաններում, առվույտը ցանում են առանձին, առանց ուրիշ բուսածածկոցի: Այս շրջաններում բուսածածկոց ունեցող առվույտացանը ցանկալի ել չի, վորովհետեւ հատկապես չոր տարիններում առվույտի հունձը—րիբը, սաստիկ ընկնում եւ: Սրա պատճառն այն է, զոր հողի մեջ յեղած խոնավությունը խանացանին չի բավականացնում, վորովհետեւ առվույտն ինքը շատ խոնավություն և ծախսում, այնինչ խօնավության մի մասն ել ծածկոցային բույսերն են խղում (գարին, վարսակը և այլն): Այսպիսով, հողի մեջ յեղած խոնավությունը չի բավականացնում յերկու մշակույթի, թույլ զարգացում են ունենում թե ծածկոցարույսերը և թե առվույտը: Այս յերեսույթն ինտրկի միայն առաջին տարին և առջի ունենում, բայց նա թուլացնում և նաև հետազա տարինների առվույտարերը: Հազվագեց չեն նաև այնպիսի յերեսույթները, յերբ սաստիկ չոր տարիններին ծածկոցարույտը հաջաքելուց հետո առվույտը յերաշտին չի զիմանում ու վանշանում եւ Առվույտն ուրիշ խոնարույսերի հետ ցանելն ել անբարենպատ աղղեցություն և ունենում նրա անման ու զարգացման վրա, այդ պատճռով ել առվույտն ամենից հաճախ անխառն կերպով են ցանում:

Առավույշ ցանելը. — Առվույտը ձեռքով պետք է ցանել միայն այն հողամասերում, վորտեղ սերմիչ մեջենա աշխատեցնեն անհնարին եւ Մանր տավույտասերմը, համաշափ սերմանման համար, ցանելուց առաջ խառնում են հողի կամ ավազի հետ. Ել ավելի համահավասար—միապաղազ ցանք ստանալու համար այդ խառնութիւնի կեսը սերմում են ըստ հողամասի յերկարության, իսկ մյուս կեսը՝ ըստ լայնության. Ձեռքով կատարած շաղացանի ժամանակ մեկ հեկտար հողի վրա ցանում են 24—40 կգ սերմ. յեթե հողը լավ և մշակված և ազատ և մոլախոտերից, այդ դեպքում սերմի նշված քանակությունը շաղացանի համար իշխում է մինչև 20 կգ.-ի (90—95%/^o ձրւակության պայմանում), Շաղացանի համար ավելի լավ և գործածել կրունի ձեռնացանիչը՝ Նրա միջացով որվա մեջ ավելի շատ ցանք և կատարվում. ավելի սերմ և ծախսվում, ցանքն ել ավելի միապաղազ ու համաշափ և լինում:

Առվույտասերմը ծածկում են (ցանելուց հետո) — մի-յերկու անգամ ցաքանելու միջոցով հողածածկ են անում. Առվույտասերմերը գցում են 1—2 սմ խորությամբ, սակայն հողի վերնաշերտի չորությունը կարող է հարկազրել ավելի խոր ցանել սերմերը, բայց վոչ ավելի 3—4 սմ-ից, վորովնետե և սմ-ից ավելի խոր ընկած սերմերի ծիլերը հողի յերեսը դուրս գալ չեն կարող. Առվույտի ծիլերը գուրսու են դալիս ցանելուց 7—8 որ անց. տաք յեղանակին ու խոնավ հողի մեջ սերմերն ավելի վաղ են ելում. Մյուս բոլոր հողամասերի համար սերմի մեջենան ունի բոլոր տապիկությունները.

Սերմիչով շարքացան կատարելու ժամանակ ավելի քիչ առվույտասերմ և գնում՝ 12—16 կգ. 50—60 սմ լայնություն ունեցող լայն շարքերով կատարվող շարքացանի ժամանակ մեկ հեկտար առվույտ ցանելու համար 7—8 կգ սերմ և պահանջվում. Այս ձևով կատարված առվույտացանը նաև այն առավելությունն ունի, վոր այդ դեպքում հնարավոր և միջարքային մշակությունն կատարել իսկ այդ կարևոր և նախ մոլախոտերի դեմ կռվելու, ազատառ ընդունու շատ սերմ ստանալու համար:

Հայաստանի դաշտային—բամբակացան գոտում, վորտեղ վոռագող ջրի ամեն մի կաթիւը թանգ արժե, այսպսի լայն շարքերով կատարվող շարքացանը հնարավորություն և ընձեռում շատ ավելի քիչ քանակությամբ ջուր ծախսել, քան շաղացանի ժամանակ և ծախսվում. Սերմ ստանալու նպատակով, մանավանդ,

առվույտ ցանելիս, շարքացանը լավագույն յեղանակը պիտի համարել, վորովճեան այս դեպքում առվույտի սերմերը հիմնալի դարդանում են Առվույտախոտ ստանալու համար կառարջող ցանքերի ժամանակ լայն շարքեր թողնող շարքացանը հաղիվ թե ուշադրության արժանի յեղանակ ճանաչվի յերաշաւազար ըրջանակում, այս դեպքում թեև բերքին վոչ մեծ հավելում և լինում, բայց այն չի ծածկում լրացրւցիչ կերպով պահանջմող ծախսերը (թորիսելը և այլն); Բացի դրանից ստացված առվույտը լինում և վատորակ, փոշուտած ու դանարան կերպամասերի հետ խառնված:

Առվույտասերմի մօսկույրը.—Խոնավ կղիմա ունեցող շրջանակում առվույտի տված սերմի քանակը փոշը և լինում, բացառությամբ այն տարիների, յերբ զերակառում է չոր յեղանակը Յերաշաշատ և անջրդի շրջաններում առվույտասերմի ընթանըստ տարիների տառանգում ե. հոջող տարիները լավ մշակման և խնամքի դեպքում այդ բերքը $2-4 \frac{1}{2}$ ցենտերի յև հասնում ամեն մեկ հեկտարից. միջին բերքը 150—160 կղ են հաշվում, յերբեմն ել՝ ավելի պակաս. Այս շրջաններում նոսր կանգնացանքն ե, վոր առվույտուսերմի մշակույթի լաւադույն արդյունը և տալիս:

Առվույտասերմը գլխավերապես չոր ամառ ունեցող շրջանակում զրաբը հսղերում. և ստացվում ։ Մաղկման ստաղիայի հասնելուց հետ աեղացած անձը ևները կամ արհեստական վառողումը նոր ընծյուղներ են տռաջ բերում նաև արմատավազիկների մոտից, իսկ այս պակասեցնում և սերմատվությունը Վերջինիս վրա աղղում են առվույտի խոռոչությունը, խոնավության մատուկարաման չափն ու ծաղիկների բեղմնավորմանը նպաստող պայմանները, և ունավության պակասությունը կը բոլոր և սաստիկ նվազեցնել առվույտասերմի ընթացքը, որը կախված են նաև այն բանից, թե առվալ վայրում կան արդյոք բեղմնավորմանը նպաստող միջատներ (գլխավորապես մեղուներ, իշամեղուներ, ըղողներ և այլն),

Սերմ առանալու համար առվույտը, հատկապես այդ նպաստակի համար լայն շարքերով ցանածը, մի տարի առանց քաղելու յեն թողնում, և յերկըսրդ տարվանից արդեն կը բելի յև սերմ առանալ:

Սերմատվության համար առանց քաղելու յեն թողնում առվույտի 2 բոլ հունձը, իսկ ավելի տաք շրջաններում՝ 3 բոլ հուն-


ձը, վոր տալիս եւ լավորակ, համաշափ հասունացող և արևից ավելի քիչ վասկած սերմերը Միայն յերաշտի տարիներին եւ, վոր հենց առաջին հնձի առվույտից սերմ են առնում, Յերբեմ սերմ են վերցնում 2—3 տարեկան առվույտից, ավելի վաղ սերմ վերցնելն այնքան ել արդյունավետ չեւ, վորովհետև լավ սերմ-նարերը ստանալու համար առվույտը դեռ բավականաշափ զարդացած չի լինում: Դրանից զատ, սերմատվությունը սաստիկ նոսրացնում եւ առվույտը, ուրեմն և նվազեցնում եւ սերմահավաքին հաջորդող առվույտախոտի բերքը

Առվույտասերմի լավ բերք ստանալու համար մինչև սերմ-նահավաքը չպետք է ջրել: Խոնագության շատությունը պակասեցնում է սերմատվությունը, զլիավորապես շնորհիվ այն բանի, վոր վոռոգման հետեանքով, ի հաշիվ սերմի չորացման ու զարդացման, առվույտը նոր ընծյուղներ եւ արձակում ու զարդացնում:

Առվույտասերմի նողամաները.—Լինում են բոլորովին առանձին, կամ թե չեւ առվույտաշախից ջոկամ են ամենալավագույն հողամասերը և առանց հնձելու յեն թողնում այն, վորովեսպի առվույտը սերմակալի խնչպես վերելում ասվեց, առվույտասերմի լավ բերք ստանալու համար առվույտը պիտի եւ ցանված լինի 50—60 սմ լայնություն ունեցող շարքերով: Ամառվա ընթացքում շարքերի արանքը թրիխում են փետատով, կամ ձիու ողլանետա սիստեմի միջնահերկիչով: Հոգատար խնամքից զատ, առվույտասերմի լավ բերքին նպաստում են բարեհնաջող յեղանակ-ները՝ ծաղկման ժամանակի, նույնպես և միջատները (զլիավորապես մեղուները և այլն):

Առվույտասերմի նաօսւնանալը.—Սերմերի հասունանալը համաշափորն չի կատարվում, ուստի սերմակալության համար թողնված առվույտը քաղում են, յերբ սերմերի մեծ մասը լիովին հասունացած եւ, պատիճներն ամրացած են, չեն ըացվում ու բացդարչնավուն գույն ունեն: Ավելի շատ նպասել չի կարելի, վորովհետև վաղ հասունացած սերմերը կոկոն թափվել: Առվույտը հնձում են հնձող մեքենայով կամ գերանդիով, հավաքում են ձեռնափոցիով, խրձեր են կապում ու թողնում դաշտում, մինչև վոր վերջնականապես չորանաւ: Վորովեսպի սերմերը չթափվեն, ավելի լավ եւ բերքը հավաքել վաղ առավանդեց:

Առվույտի սերմերն ավելի խոշոր են, քան յերեքնուկինը,
Խոտարույներ—3



Նրանք գեղին գույն ունեն: Հին, նույնպես և կնճռոտած սերմերը վոչ պարզ կարմրա դարձնավուն գույն ունեն: Սովորական վաճառվող առվույտասերմի մեջ այլ տեսակի՝ իշակվույտի սերմերի խառնուրդ ել և լինում, վորոնք լավ առվույտասերմին շատ նման են: Իշակվույտի սերմերը կարելի յն ճանաչել կումարինի առանձնահատուկ հոտով, վորն իսկույն զդացվում և մի քանի հատիկ ճմլելու միջոցով:

Ավելի գժվար և ամենավաճավոր մոլոխոտերին բաղեղասերմի և մյուսների յելիկվան բերելը: Բաղեղի կամ պատառուեկի սերմերը կարելի յն ջոկել խոշորացույցով, ամենամանրակրկիտ հետազոտության ժամանակի: Ամենից լավն այն ե, վոր բաղեղասերմի բայցակայության հանգամանքը: Ինչպես և սերմերի ուրիշ հատկությունները, հետազոտելու համար առվույտասերմերը սերմազերահսկողության կայան ուղարկվեն:

Ավագույթասերմի ծլունակուրյունը: — Առվույտասերմերը յերկար տարիներով պահպանում են իրենց ծլունակությունը: Ուրիշ պայմաններից զատ, ծլունակության վրա աղդում են սերմերի պահպանման պայմանները:

Նոր ժողոված թարմ սերմերն ավելի նվազ ծլունակություն ունեն, քան նախորդ տարվա բերքից հավաքած սերմերը (մեկ տարեկան): Սովորաբար առվույտասերմի մեջ լինում են ոպինոց, չուռչող սերմեր, վորոնց քանակն առանձնապես շատ և լինում նոր հավաքած, միանգամայն թարմ առվույտասերմի մեջ: Այսպիսի «պինոց» սերմերը լավ չեն ուռչում և միայն յերկրորդ կամ յերրորդ տարում են աճում: Այս տեսակի սերմերը հատկապես շատ են լինում տաք յերկրներում: Վորովինեան նման սերմահատիկների մաշկը շատ ամուր և լինում, ապա նրանց մաշկը քերծելով այն արդյունքին են հասնում, վոր նրանք մասցած սերմի հետ միաժամանակ են ծլում:

Պինոց սերմերի ամուր մաշկը քերծելու — պատռելու: Համար այդ սերմերը խոչը ավաղի հետ խառնելով, լցնում են պարկի մեջ և սկսում են փայտով ծեծել այն: Այս գեղքում պարկը շուռառում են տալիս մերթ մեկ, մերթ մյուս կողմը, վորպիսդի նրա մեջ յեղած պինոց սերմերի մաշկերը համահավասար կերպով քերծվեն: պատռվեն:

Լավ առվույտասերմը ծլում և 5—6 որվա մեջ, իսկ նրանց մեծ մասը ծլում և 2—3 որվա ընթացքում: Նվազագույն սերմերն ավելի թույլ բռւսակազմ են տալիս:

Լավ առվույտասերմն իր արտաքին տեսքով փայլուն, դեղնագորշավուն գույն պետք ե ունենա՞ ծայրին սաղմականթով, Յերենուկի հման առվույտասերմերն ել բակլայաձև են լինում:

Առվույտի խնամքը.—Առաջին տարվա ընթացքում առվույտի ցանքերին հետեւյալ խնամքը պետք ե ցույց տրվի 5—6-րդ որը յերենվացող առվույտի ծիլերը շատ թույլ են լինում, այս իսկ պատճառով պետք ե ջանալ, վոր մինչև ծիլերի յերեան գալը հողի յերեսը տեղացող անձրեներից չկեղեակալի՛ Կեղերը պետք ե փշը ի փոցինվ կամ, ավելի լավ ե՝ աստղաձև ցաքանով:

Առվույտի հետագա խնամքը մոլախոտերի դեմ պայքարելն ե, մանավանդ ցանքի առաջին տարում, յերը առվույտի աճեցողությունը զիռ շատ թույլ ե: Շազացան առվույտադաշտում մոլախոտերը ձեռքով են քաղնանում, իսկ շարքացանը թուրխում են միջաբային ձեռնապլանետով: Այս դործիքով մեկ բանվորն որական կարող ե քաղնանել մինչև կես հեկտար առվույտադաշտ Այսուհետեւ, յեթե մոլախոտերը շատ են, դիմում են առվույտը վերեից հնձելու միջոցին, վորը թուլացնում ե մոլախոտերի հետագա զարգացումը, դրանից հետո առվույտը մոլախոտերից շատ ավելի արագ ե աճում, ուստի և շատ լավ թփակալում ե և, չուրանալով, խեղղում ե մոլախոտերին Այնինչ այդպիսի հունձ չկիրառված դեպքում հակառակն ե կատարվում, այն ե՝ մոլախոտերն են խեղղում դեռևս թույլ զարգացած առվույտին: Այսպիսի հնձի համար քաղիչ մեքենա բանեցնելիս քաղիչի բերանն այնպես պետք ե դնել, վոր գետնից մոտավորապես 12 սմ բարձր լինի: Հնձելու զնորդիվ, կարճ ժամանակում արմատավիկի վրա գոնզած պահեստի աչքերից նոր ճյուղեր են առաջանում, վորոնք փարթամացնում են առվույտի թուփն ի վեա մոլախոտերի: Պարզ ե, իհարկի, վոր առվույտադաշտը կարելի յէ թորիսել քաղնանել ու հնձել յեթե այն առանց ուրիշ բուռածածկոցի յէ ցանված, այսինքն՝ յեթե այն խառնացան չե:

Յերկրորդ տարվանից սկսած՝ առվույտադաշտերի խնամքն այն ե, վոր յերկու-յերեք անգամ թկթե յերկաթափոցխով պետք ե փոցխել արտերը: Յերբորդ տարվանից սկսած, յերը առվույտն արդեն շատ լավ ամբակալան ե լինում, փոցխելը կատարում են ծանր յերկաթափոցխով, ըստ վորում փոցխում են 3—4 անգամ, մինչև հողի սեանալը. առանց նկատի ունենալու առվույտին վնասելու յերկյուղը:

Ուժեղ փոցխումը նպաստում ե հողի վերնաշերտի փխրեց-

մանը, վորի հետևանքով հողն ավելի շատ խռնավություն ե պահում, ավելանում ե ողի թափանցումը զեղի հողի հետավոր խորքերում տարածված առվույտի արմատները, հողը մաքրված ե մոլախոտերից, Առը փոցխումը պետք ե կատարել այն ժամանակ, յերբ հողը գենես չի կեղեակալել, բայց նրա յերեսը բավականաշափ ցամաքել է: Մի քանի տարվա առվույտի արմատավղիկները ճեղքունը չնորհիվ, առվույտը նորօգվում է, ուժգնորեն սկսում են նոր ճյուղեր առաջ գալ, առվույտը թփակալում է, և այս ամենի հետևանքով շատանում ե առվույտի ու սերմի բերքը: Առվույտագաղտը պետք ե փոցխել ամեն գարուն և ամեն մի համար անմիջապես հետո Վորքան փոցխումն ավելի ուժեղ կատարվի, մանավանդ դարնանը, առվույտն այնքան արագ կանի և այնքան ամելի ուժգնորեն կթափվի:

Առվույտի խռանավաեր. — Վորպես կեր դ բծտելու համար, առվույտը պետք ե հնձել մինչև նրա ծաղկելը, համեսայն դեպք, ծաղկելն սկսվելուց վոչ ուշ, այլապես՝ կոչառ ու սակալ սնազարը կեր և ստացվո, մ:

Կերի համար նշանակված առվույտի բերքահավաքը տարբերվում ե սովորական խոտանավաքից: Առվույտահավաքի ժամանակ զլխավոր ուշադրությունը պետք ե այն բանի վրա դարձնել, վոր առվույտի տերեւները խիստ չչորանան ու չմափեն, այլապես՝ նրա սննդավետությունը նկատելիորեն նվազում է, և կերի համար միայն կոչառ ցողուններն են մնում: Առվույտի տերեւները քնքուչ են, շուտ են չորանում, իսկ համեմատարար կոշտ ցողունները դյուրությամբ չեն չորանում: Սովորական խոտանավաքի յեղանակով առվույտը հավաքելու զնագրում, փոցխելու և շրջելու ժամանակ, թե տերեւները և թե ծաղիկները ջարդվում ու թափվում են գետին, և մնում են լոկ կոպիտ ցողունները:

Առվույտահավաքն այնպես պետք ե կատարել, վոր տերեւները փափուկ մնան ու շաղ գալուց չկորչեն: Պետք ե նկատի ու հենալ, վոր զլխավոր սննդանյութերը տերեւների մնջ ե դարձնվում: Ուստի առվույտահավաքի ժամանակ անհրաժեշտ ե տերեւներն զգուշորեն պահպանել թափվելուց ու կորչելուց: Հպետք և ուշացնել նաև բերքահավաքը, վորովհետեւ ուշ հնձած առվույտի տերեւները դեղնած կամ թափված են լինում:

Հնձելուց հետո ել առվույտի տերեները պետք և կանաչ էն. թարմ պահպեն այն պատճառով, վոր ցողունների խոնավությունն ել տերենների ծակոտինների միջոցով և գոլորշիանում. յիթե տերեններն արեի տակ մրկվում են, այն ժամանակ նրանք կորցնում են զորոցիացման ռենտկությունը, վորի հետևանքով համացյա անկարելի յև դաշնում ցողունների չորացումը:

Այս նկատի առնելով՝ լավ յեղանակին առվույտ հավաքելիս, հենց հնձելու որը, ինչպես առում են, հենց զերանդիի տակ, կամ ծայրահեղ դեպքում հաջորդ որը, պետք և առվույտը հավաքել կույտերի և նեղ ու փոքր շեղջեր դնելը Այս ձեմով դրված շեղջերում առվույտը շատ արագ չօրանում է: Մի-յերկու որից հետո, նայած յեղանակին, կարելի յի փոքրիկ շեղջերը միացնել, մեծեր կազմել Շեղջելուց հետո առվույտից դեղեր են դնում, կամ այն լցնում են խոտանոցը: Չորացման այստեղ մատնանշված պայմանների կիրառման ժամանակ ստացվում և հիանալի վորակի, կանաչ գույնի, տանց տերենների կորստի, բուրավետու համեղ կերառվուքտ, այնինչ սովորական յեղանակով, բաց արեի տակ չօրացնելիս, առվույտի կանաչ տերենները դժգունանում ու դեղնում, բուրավետ ու համեղ նյութերն անհետանում, տերենները թափվում են, և այս ամենի հետևանքով կերի մննդարությունը նկատելիորեն նվազում են:

Թուրքեստանում՝ տերենները պաշտպանելու համար, զյուդացիք առվույտախոտերից ուղղակի դեղ են դնում, իսկ մնացուա զեղ դնելուց առաջ փնջում կամ խուրձ են պատրաստում, վորի ժամանակ առվույտի տերեններն առնվում են խրձի մեջ, իսկ դուրսը միայն ցողուններն են մնում:

Ամերիկայում՝ արդյունաբերական խոշոր տնտեսություններում՝ տերենները պահպանելու համար, կանաչ առվույտը թարմ զինակում կըուժ են ազարակները, վորտեղ արհեստական չորացման յենթարկելուց հետո աղում և ալյուր են՝ պատրաստում նրանից կավ հատկության այսպիսի այսուրը սիսեռականաչավուն գույն և ունենում, վորով և վորովով և, թե ալյուրը լավորակ առվույտից և պատրաստվել Առվույտի ալյուրը նաև այն առավելությունն ունի, վոր այն դործածելիս կերի վոչ մի կորուստ չի լինում, այնինչ չաղացած առվույտով կերակրելիս նկատելի կորուստ և լինում: Առվույտի ալյուրով կերակրում են տագարին, խոզերին ու թռչուններին, Ամերիկացիք այդ ալյուրը նաև

արտահանում են՝ զլիսավորապես դերմանիայի թռչնարուծական տնտեսությունների համար.

Կարող ե պատճել, վոր անձրեսոտ յեղանակներին պովույտաշեղջերը տաքանան, ստակայն այդ բանից առանձին վտանգ չկա, մինչև այն ժամանակ, քանի տաքությանը ձեռքը դիմունում եւ Սաստիկ տաքացած շեղջերը բաց են անում, վորից հետո նրանք արագորեն չորանում են. չորանալուց հետո առվույտը կրկին պետք է շեղջեր Այսպիսի պայմաններում ստացված առվույտը վոչ թե կանաչ, այլ գորշավուն դույն է ունենաւմ, բայց նրա հատկությունը շատ լավ ուստանալում է, և տերեններն անթաս են մնում. Այսպիսի առվույտն այն ժամանակ է են դեղ գնում, յերբ նրանից տանգած փնջիկը վորորելիս հյութ չի դուրս գալիս, իսկ յեթե վորորելիս թացություն է նկատվում, պետք է թույլ տալ, վոր չորացման գործողությունը լինի առվարտվի. Առվույտաշեղջերը մեծ չեն անում, նրանք պետք է ունենան յերեք մետր լայնություն ու 4—6 մետր բարձրություն, յերկայնությունն ըստ ցանկության ու դիզի հարմարության:

Առվույտի սննդավետուրյանը.— Առվույտը շատ սննդարար կեր է, ժամանակին հավաքած առվույտն ավելի սննդավետ է.

Ամեն տեսակի կերի զլիսավոր սննդամասն սպիտակուցային նյութեր են, ներքենում ըերգող աղյուսակից յերեսում ե, թե առվույտը վճրքան սննդալատ կեր է՝ սովորական մասշած կերամիջոցների համեմատությամբ:

	Կերատեսակը 100 կգ տոսք	Նրա մեջ գանգած սպիտակուցի բանակը
1	Տարեկանի ծղոտ կոմ դաշտան	3 կդ
2	Դարձնանացով հացաշույսերի լովազույն ծղոտ կոմ գարման	7 >
3	Միջին հատկության մարդաբառ	9 1/2 >
4	Վարսակ (հատիկ)	10 1/2 >
5	Լավ հատկության ցործուիախոտ	12 >
6	Տարեկանի թեփ	12 1/2 >
7	Լավագույն ցործութեփ	14 >
8	Առջույտ	14 1/2 >

Սպիտակուցից դատ, առվույտը պարանակում է. անազոտ նյութեր՝ $36^{\circ}/_0$, փայտանյութ՝ $26^{\circ}/_0$, ճարպանյութեր՝ $2,2^{\circ}/_0$, մոխիր՝ $5,3^{\circ}/_0$.

Հանապան կերամիջոցների մեջ գտնված սպիտակուցանյութը մերին մասին բերված վերոնիշյալ տվյալներից յերեւմ ե, վոր տառաջին տեղն առվույտն և զրավում։ Առվույտն այնքան սննդավես կեր ե, վոր ձիերին առվույտով կերակրելիս կարելի յէ կերահատիկ (գարի, վարսակ) չտալ նրանց, ըստ վորում դրանից չի թուրանա ձիու աշխույժությունը և վոչ ել նրա ուժը։

Պրոֆ. Պրյանիշնիկովի գիտողությունների համաձայն, առավույտի մեջ գտնված սպիտակուցանյութների քանակությունը մեծ կախում ունի առվույտացանքի տարիքից ու հնձելու ժամանակից։ Սառըն մեջ բերվող տվյալներն այդ են ցույց տալիս։

Կերամիկություր պարահանձել ե	Մասադ առվույտ	Մինչև ժադ- կելը հնձել	Նիսկառար ժադ-
			կման ժամանակ հնձել առվույտ
Փարանյութեր	19,3 %	28,5 %	42,5 %
Ազոտանյութեր	29,9 %	21,9 %	15,5 %
Աւագու նյութեր ու նորդ	29,1 %	30,8 %	21,9 %

Թվերը ցույց են տալիս, վոր ամենից սննդավես կերը մատադ ու մինչև ծաղկելը հնձած առվույտն ե տալիս։

Առվույտի արությ.— Առվույտը վորպես արոտ կարող ե ուղարկութիւն անասունների բոլոր տեսակների համար։ Այս նպատակին հատկացնում են կամ հերկման յենթակա հին առվույտաշահարը և կամ նրանց այն մասները, վորոնք սաստիկ մոլախոտված են։ Արոտը նույնիսկ հին առվույտաշահարին վեստ և պատճառում։ Այս պատճառով առաջին յերկու տարում առվույտն արածեցնել չե կարելի, փորովհետև վոտնահարություննու ցածրաբերան արոտը վեստում և առվույտի անեցողությանն ու դարպացմանը։ Ամենից ավելի առվույտին վեստում են ձիերն ու վոչխարները, վորոնք չատ ցածրից կրծելով առվույտը, զրկում են նրան արմատավզիկից յելած մատղալ ընձյուղներից։ Հին առվույտաշահարում անտունն արածեցնելիս պետք ե խուսափել թաց յեղանակի, ինչպես և ուշ աղնան արոտից։ Անասունն առվույտի մեջ չի կարելի տանել նաև վաղ առավոտյան, յերբ արոտը գեռն ցողապատ ե լինում։

Տափարի հիմանդանարուց խուսափելու համար անհրաժեշտ ե աստիճանաբար վարժեցնել կանաչ կերառվույտին՝ արոտի թողնելուց առաջ չոր կեր տալով անասունին։ Մի շաբաթ այսպես անելուց հետո անասունը վարժվում է կանաչ առվույտին, փորի

ռւաչելու վտանգն անցնում եւ Զպեաք թույլ տալ, վոր տավարը լիուլի հազենա առվույտով, ինչպիս և արոտի դուրս կա անձրեկց կամ ցողից թաց առվույտի վրա Այս բոլոր նախազգուշացումներից հետո ել տավարն ու վոչխանը կարող են փորուռուցք կամ աղիքախիթ ունենալ:

Կանաչ կերավույթ.— Առվույտը հիանալի կանաչ կեր և հատկապես կաթնառու կովերի, մատղաշ անասունների ու խոզերի համար Սակայն չպետք եւ կանաչ առվույտն ավելի հաճախ քաղել քան սովորական բերքահավաքի կարգով և կատարվում։ Հաճախակի քաղելը սաստիկ թուլացնում եւ առվույտը և նույնիսկ նրա փշացման պատճառ եւ դաշնում։ Նոր քաղած առվույտով կերակրելու ժամանակ ել, ինչպիս նաև կանաչ արոտի ժամանակ, անասունների փորն ուռչում եւ Ռւատի հարկավոր և նաև այս դեպքում անասուններին վարժեցնել կանաչ առվույտի։

Առվույտածզուք.— Առվույտի սերմահանությունից հետո ստացվող կերը (ցողունները) շատ ավելի պակաս արժեք ունի, և կալսելուց հետո նրա դարմանն ավելի վատ և լինում քան այն կարող եր լինել յեթե ուշադիր վերաբերմունք յերեվան բերգվեր դեպի նաև Հաջող սերմարերքից զպտ նաև բավարար կեր ստանալու համար, ավելի լավ և առվույտը հավաքել պատիճների մեծ մասի հասունանալուց անմիջապես հետո։ այս դեպքում կանաչ տերեներ շատ են մեռմ նրա վրա, ուրեմն և դարմանը կերային ավելի բարձր արժեք և ունենում։ Պատիճների վերջնական հասունացնումից հետո՝ առվույտը հավաքելու դեպքում հակառակ արդյունը և ստացվում, վորովհետեւ պատիճների լիուլի հասունացման ժամանակաշրջանում տերեներն ամրադրվին թափվում են։

Առվույտի պարագատացուցիչ ներգրծաւրյամբ նոդի նամար— Առվույտի նշանակությունը վոչ միայն այն եւ, վոր նա յերաշակայուն բույս և ու հիանալի կեր՝ անասունների համար, այլև այն, վոր նա իրենից հետո չի ուժասպառում հողը, ինչպիս մյուս բույսերը, Ընդհակառակը, վորպիս ունդավորների թվին պատկանող բույս, նա հարստացնում և հողն ողի մեջ դանված աղոտով, վոր նա ծծում ու հողին և տալիս իր արմատների վրա յեղած առանձին մանր ու կնձկանման ուռուցքներում բնակվող աղոտահավաք բակտերիաների շնորհիվ։ Այս բակտերիաներն ողի աղատ աղոտն ուստագործելու ընդունակություն ունեն, վորպիսի աղոտն արմատամնացրդների հետ միասին առվույտը թողնում և հողի մեջ՝ տարրեր շերտերում։

Յեզ իրառք, դիտական վերլուծությունները հաստատում են, վոր ունդորյուսւերից հետո հողի մեջ ազդային ու որգանկան նյութեր ազնիլի շատ են մասմ, քան հացանատիկներից հետո Գիտնական Վեյսկեյի ուսումնասիրությունների շնորհիվ, հետեւալ պատկերն ե պարզվել.

Բույսի անունը	Այդ բույսից հետ հողի մեջ մասնակիությունը	
	Որդանական նյութեր	Ա. դ. մ. մ.
	Կ. ի. լ. + զ. ը. = մ. ն. կ. ը. + զ.	
1 Առվույտից հետ	6.000	98
2 Կորնզանից հետ	6.000	88
3 Կարմիր կոր. >	5.000	187
4 Ցորենից >	1.700	17
5 Դարչուց >	1.150	16.5

Այս նույնը հաստատել են նաև ուրիշ գիտնականներ՝ յեզի պատցորենի, կարտոֆիլի, ճակնդեղի նկատմամբ, վորոնց մշակության ժամանակ հողն ամեն տարի բավականաչափ (100—250 կղ) աղու և կորցնում:

Այնինչ առվույտն իրենից հետ հողի մեջ թողնում և մեծ քանակությամբ ազդանյութեր, վորոնց պահանջը հատկապես հացարույսերն են զգում: Առվույտից հետ հողը կնձկայնանում է, վորի շնորհիվ ողն ու թացությունը զյուրությամբ են թափանցում, իսկ խոնավությունը շատ լավ և պահպանվում հողի մեջ: Այս ամենի շնորհիվ, առվույտից նոր աղաւազն հողերում հացարուսերը, վուշը, շաքարի ճակնդեղը և այլն, շատ հաջող են առնելու ու հիանալի բերք են տալիս: Այս դեպքում, բերքի բարձրացումից զատ, բարելավվում են նաև հացանատիկների վորակ: Հատիկները լինում են տառող, նրանց մեջ ավելանում ե աղոտանյութերի քանակը և այլն:

Առվույտի վառոգտմբ.— Զրի այն ավելցումը, վոր առվույտի վոռոգման ժամանակ հաճախ գործ ե ածվում, թաս և հացնում նրան, վորովհետև ավելորդ խոնավությունն անբարենը պատաստ ազդեցություն և ունենում առվույտի զարգացման վրա: Ջրի այդպիսի առատության պայմաններում հողի ներքին շերտերի լուծվող ալկալի աղերը վեր են բարձրանում և սրա հետեւանքով հողի վերնաջերտի աղիացման հնարավոր վտանգն են:

առաջ ըերում: Սրանից զատ, դաշտային գոտում ջրի այդ ամել-ցուկը ճանճացման պայմաններ և ստեղծում առվույտի ցանքե-րում, զորով գուռ և բացիցում ջերմախտի տարածման ու զար-գացման առաջ: Այս պատճառով առվույտն այնպէս ու այնքան պետք և վոռորդել, վորպեսզի լավ բերք ապահովելով հանդերձ՝ ջրի ավելցուկ չառաջանա առվույտազաշտում: Այս դեպքում ան-հրաժեշտ ջրաքանակը հողի հատկությամբ ու գոլորշիացման մեծությամբ և վորոշվում, ըստ վորում գոլորշիացումն այնքան ավելի մեծ ու շատ ե, վորքան բարձր և ողի ջերմաստիճանը, վորքան պակաս և նրա մեջ յեղած խոնավությունը և վորքան ավելի ուժեղ են, քամիները:

Եերաշտաշատ շրջաններում առվույտը միշտ ել վոռոգում են յուրաքանչյուր հնձից հետո, բայց վոչ անմիջապես, այլ հնձից մի քանի ժամանակ տնց, վորպեսզի առվույտը փոքր էնչ աճի, բարձրանա ու ստվերի հողը: Այսպես անելը, մի կողմից վորոշ չափով նվազեցնում և վոռորդվող առվույտադաշտում կուտակվող խոնավության անմիջական գոլորշիացումը, և, մյուս կողմից՝ մինչև նոր վոռոգումն ընկած ժամանակամիջոցում հնձած, առվույ-տագաշտի չորության հետեւանքով՝ նկատելիորեն տուժում—վոչն-չանում են հողի վերնաշերտերում թույլ կերպով արմատակալած մոլախոտերը: Վերջապես, նոր հնձած ու գեռնս չթփակարած առ-վույտանոցում ուժեղ ու արագ գոլորշիացման հետևանքով հողը չորանում՝ կոչտանում ե, վորն իր հերթին դժվարացնում և առ-վույտի նորմալ աճեցողությունն ու դարձացումը:

Եերաշտաշատ շրջաններում անհրաժեշտ են նաև լրացուցիչ վոռոգութերը. ըստ վորում առվույտի արտաքին տեսքով կարելի յի վորոշել, թե վոռոգման կարիք կա, թե վոչ: Յեթե առվույտի աճեցողությունը դադարում ե, տերեները թշնում ու լավ աճող բռյուխի համեմատությամբ ավելի դժգույն կերպարանք են ընդունում, նշանանակում և գոռոգումն անհրաժեշտ ե: Հանձնարար-վում և նույնպես հողի հետազոտությունը կատարել 15 սմ խո-րության վրա: Յեթե հողը սեղմում ենք բռի մեջ, և ափը բանա-լուց հետո նա չի կորցնում իր դնդանությունը, ուրիշն յեղած խոնավությունը դեռ բավական ե, իսկ յեթե հողը չաղ և դալիս, ապա վոռոգումն անհրաժեշտ ե:

Առվույտի վոռոգման ամենաբարենդաստ ժամանակաշրը-ջան աճման որից մինչև ծաղկելու ժամանակն եւ Այդ միջնորդին ե, վոր առվույտն ուժգնորեն աճում եւ Մաղկման ժամանակ առ-

վույարի տճեցողությունը՝ համարյա թե կանգ և առնում, ուստի և զոռոգումն առանձին արժեք ու նշանակություն չունի նրա աճման ու զարգացման համար:

Սերմատվույտանոցն ել ավելի վաղ ու քիչ են ջրում, վոռոգումն այս դեպքում կատարվում և առվույտի կոկոնելուց վոչ ուշ, այսինքն՝ մինչև ծաղիկների բացվելը։ Ավելորդ վոռոգումն այդ շրջանում նպաստում և նոր ընձյուղների ու ճյուղերի գոյանալուն, վոր իր հերթին սաստիկ նվազեցնում և առվույտի սերմատվությունը։

Վերջապես, քանի վոր Հայաստանում գարնանը և ամռան սկզբին և, վոր ջրերն առաջ են լինում, ապա ավելի լավ և առաջ ու հաճախակի վոռոգումը հենց այդ ժամանակամիջոցում կատարել և դրանով նվազեցնել բույսի ջրի պահանջը՝ նրա հետագա անեցողության շրջանում։

Զմեռային վոռոգում. — Հայաստանի գաշտային շրջաններում, վորտեղ ձմեռը համեմատաբար մեղմ, ու ճյունաշատ և լինում, ավելի լավ և ձմեռն ել վոռոգում կատարել Այս պետք և կատարվի, վորպեսզի ձմեռային խոնավությունը խնայվի ու մեծ քանակությամբ պահպանվի հողի մեջ՝ բույսի ամառային կարիքների համար։ Այսպիս անելիս ամռանը ջրի մեծ տնտեսում և տեղի ունենում, վորովհետև առվույտի վոռոգման պահանջն այնքան մեծ չի լինում։ Ձմեռային վոռոգման յերկրորդ ասավելությունն այն և, վոր ջրակալած հողը սարչելով՝ սւերդացնում և իր ցրտության շերմաստիճանը, վորի հետևանքով կոտորվում՝ վոչնչանում են ամեն աեսակի վնասատու միջատները։ Խիստ ցրտաշռուչ ձմեռ ունեցող հրջաններում ձմեռվա ընթացքում հողի մեջ ամբարվող խոռավության մեծ քանակությունը պատճառ և զառնում առվույտի ցրտահարության, ուստի և այդպիսի շրջաններում ձմեռային վոռոգումներն անընդունելի յեն։

Ցեղե ամառային վոռոգման ժամանակ առվույտը գեռ բավականաչափ չի թփակալի ու ծածկել գետինը, ապա ջրելուց հետո հողն արագորեն և ուժեղ կերպով չորանում ու կոչտանում և, այդպիսի հողերում առվույտը վատ և դարձանում։

Շարքացան առվույտն ամեն ժամանակ կարելի յի վառոգել, քանի վոր միջարքային մշակության միջոցով կոչտացած հողաշերտերը կարելի յն փխրացնել։

Առվույտի անեցողությանը զուգընթաց պետք և ուժեղաց-

Ներ նաև նրա վոռոզումը, վորպեսպի բռւյսի դարգացումն ավելի լավ ընթանաւ:

Նայած հողի խորությանն ու հատկություններին և հնձի քանակին, առվույտի վոռոզումը կատարվում է 4—12 անգամ։ Ավելի կամ պակաս անգամ վոռոզելը կախված է նաև ջերմասահմանի տատանումներից, տեղումներից, խոնավությունից ու քամբների առկայությունից և ուժից։

Բաղեղի կամ պատառուկ պօւլիկա (*Cuscuta sativa* ssp). — Առվույտի ամենալավագործագործ թշնամին բաղեղն եւ Սա պարագիտային բռւյս եւ, այսինքն՝ իր սնունդը վոչ թե հողից և տոնում, այլ ծծում և այն բռւյսի հյութերը, վորի հաշվին նա ապրում եւ նրա սերմերն առվույտից շատ մանր, մոխրագույն ու կորածներն են, նրանք մեկ կամ յերկու կողմից սեղմած են՝ բջիջափոսիկով մեջ-տեղում։

Բաղեղն իր արմատները չունի, իր մանրիկ ծծիչներով նա կպչում է առվույտին ու քամում և նրա հյութերը Բաղեղի ցողունը վորորուն եւ, զժգույն-վարդագույն յերանգին Բաղեղի ցողունով փաթաթված առվույտն սկսում է թուլանալ, իսկ այսուհետեւ վոչնչանում եւ։

Սերմերի միջօցով տարածվելուց դատ, բաղեղը բազմանում է նաև ճյուղավորվելով՝ ծիլեր ու ընձյուղներ տալով։ Առվույտի մեջ ընկնելով՝ բաղեղը շատ շուտով տարածվում է, վորից առվույտը սաստիկ տուժում, փշանում ու մոլախոտերով և ծածկվում եւ։

Հենց վոր առվույտի վրա նկատվում է բաղեղի վարակման գեղին բիծը, անհրաժեշտ եւ, քանի գեռ նրա սերմերը չեն հասունացել, հնձել վարակված առվույտը, դնել $\frac{1}{4}$ մետր հաստության ծղոտաշերտի վրա և այրել այն Բաղեղի վոչնչացման համար կիրառվում է նաև $15^{\circ}/0$ -յին յերկաթարջասպի, կամ $15^{\circ}/0$ -յին պղնձարջասպի սրսկում, վոր կատարում են կամ սովորական ցնցուղների միջօցով և կամ վերմորելի ապարատով։ Այսպիսի սրսկումներից բաղեղը վոչնչանում եւ, իսկ առվույտը՝ կրկին անում։

Բաղեղով վարակված դաշտում անասուն չպետք է արածեցնել և վարակված խոտն ել անասուններին չպետք է առլ իսկ յեթե հարկադրված են այդ անել, ապա ավելի լավ է այդպիսի պայմաններում ստացված գոմաղբը չորացնել ու վասել, վորովհետեւ բաղեղի սերմերն անցնելով անասունի մաքսողության որգան-

Ներից, Առում են անվաս, իրենց ծլունակությունը չեն կորցնում և դումաղրի հետ միասին ընկնելով հողի մեջ՝ կրկին աճում ու տարածվում են:

Ցեմք վարակված և ամբողջ առվույտանոցը, ապա այն պիտք և հերկելու մի քանի տարի չարունակ հացահատիկներ և ուրիշ բույսեր ցանել:

Բաղեղով վարակված սերմերը վոչ միայն անպետք, այլև վնասաբեր են:

Բաղեղով ամենից ավելի վարակված են Թուրքեստանի ու Կովկասի առվույտաները: Առվույտն այդ վտանգավոր մոլախոտերի վարակումից ապահովելու լավագույն միջոցն այնպիսի առվույտասերմ ընտրելն ու ցանելն ե, վորի մեջ բազեղի հետքն ամեններն չկա: Այս բանում համոզվելու համար, առվույտասերմի նմառը հետազոտելու նպատակով՝ սերմահսկիչ կայան պետք է ուղարկել, վորովն: առ սերմատերն ինքը, առանց հատուկ հմտության, չի կարող վորոշել բաղեղի սերմերը:

Թուրքեստանի առվույտասերմերի մեջ մի ուրիշ վնասակար խառնուրդ ել և հանդիպում: այդ խորարմատ սերեփուկն է ("горчак," *Centaurea picris*): Այս մոլախոտն այնքան ի իս և աճում հողի մեջ, վոր նրա տարածման վայրերում հացարույսերն ամեններն չեն դորանում և այդպիսի հողերը ըրտաբովին անպատղարեր են դաշնում:

Առվույտասերմերը լավ են համարվում, յեմե նրանց ծլունակությունը 85% պակաս չե, այսինքն՝ յեմե 100 սերմահստիկից 85-ը փորձնական հետազոտության ժամանակ ծիլ և տալիս Սերմահստիկների աճման եներգիան ել մեծ մասամբ նրանց ծլելու արագությամբ և բնորոշվում, այն ե՝ լավ սերմերը 3-րդ որը ծլած պետք և լինեն: Մնացած ծլունակ սերմերը զլուխ պիտք և հանեն տաս որվա ընթացքում, իսկ այդ ժամկետին չծլած սերմերը ծլունակությունից զուրկ են համարվում:

Առվայիթի վնասատուներից գլխավորն առվույտարպեղն է (Փլուոնուս—*phytonotus pasticus*), վարի թրթուրը լափում և բույսի բոլոր տերեւները. մեզ մոտ, դաշտային գոտում, այդ հիվանդությունից սովորաբ օր առվույտի առաջին հունձը կորչում ե: Նրա գեմ կռվելու լավագույն միջոցն առվույտանոցն աշխանն ու գարնանը դիսկավոր փոցխով փոցխելն եւ լավ միջոց են հանդիպանում նաև ձմեռային այրումը, առաջին հունձը վաղաժամ կատարելն ու հնձած առվույտը վնասատուի թրթուրների հետ

միասին դաշտից անհապաղ հեռացնելը Հետագա հնձերը սովորաբար ազատ են լինում այս վասատուի ից:

Մարգարիթն.— Վորոշ տարբիներին մարգաթիթեռի թըրթուրների մասսայ ոկան հայտնվելը մյուս բույսերի (հակնդեղի, բանջարեղենի և մյուսների) թվում առվույտին ել մեծ վասա և պատճառում: Այս թըրթուրի գեմ ող այքարելու համար առվույտը սրսկում են փարիփյան կանաչով ու մկնդեղախառն նառիխոնով:

Առվայշի սերմակեր (Brucophagus funebris) վասա և պատճառում սերմերին: Այս միջատն իր ձվերն առվույտի գեր չհաստացած սերմերի մեջ և դնում: Նրա գեմ կռվելու նպատակով, հանձնարարվում ե, նախ՝ կրակ վառել վարակված հողամասերի վրա, առուների շուրթերին, ցանկապատերի յեղրաշերտերին ե, առաջ միայն չվարակված սերմեր ցաներ: Ուրիշ վասատուներ ել կան, վորոնք համեմատարար աննշան վասա են հացնում առվույտացանքերին, վորոնց շարքին և պատկանում յերեքնոր կի արմատակերը և այլն:

Կրծողները.— Առվույտի թշնամիներն են հանդիսանում մըլիները, սիմորները (ցւուկի), առնետները և այլն Սրանք լափում են առվույտի արմատները, և դրանից ել բույսը վաշնչանում և Նրանց գեմ կռվելու լավագույն միջոցը բները ծմբածխածընով կամ քլորապիկրինով թըրջած բամբակով վարակելն ե: Այս գաղերի հոտից վերոհիշյալ կրծողներն արագությամբ վաշնչանում են: Նրանց գեմ մկնդեղով թունավորված հացանատիկներ կամ խմորագնդիկներ տալու միջոցն ել են կիրառում, բայց այդ միջոցառումը լոկ այն դեպքում ե լավ, յեր այդ շատ խնամքով և կատարվում և անխտիր բոլոր բները թունավորված հատիկներ են գցվում: Վորտեղ հնարավոր ե, դաշտերը կամ արտերը ծածկում են ջրով, վորի հետևանքով կրծողներն իրենց բների մեջ խեղդվում են: Այս միջոցը նրանց գեմ կռվելու լավ միջոցառումներից մեկն ե հանդիսանում, յեթե միայն ցանքերը ջրահեղձելու հարմարություններ կան (ջուր ու սելլեֆ):

Առվայշի նիվանդուրյունները.— Առվույտը յենթակա յե զանազան սննդային հիվանդությունների: Նրանցից ամեն մեկն առանձին առած՝ աչքի ընկնող վասա չի հացնում առվույտին, սակայն այդ հիվանդություններից մի քանիսի հարակցությամբ բույսը նկատելի չափով տուժում ու վասվում է:

Արմատափթախոր (Ozonium omnipinorum) նարնջագույն թելերէ կերպարանքով յերևան և գալիս առվույտարմատներէ:

մրաւ Այս հիվանդության համար բնորոշ են վոչնչացած բույսի վրա տառաջացած կլոր բծերը:

Տօղունի բակտերիալիմտոսումբ (*Pseudomonas medicaginis*) առաջ և բերում ցողունի ստորին մասի դունափոխություն (գեղարձուց մինչև սեպանալը): Ցերքեմ այս հիվանդությունն արմատներին ել և անցնում է Այս հիվանդությունը մի քանի տարվա մեջ սոստիկ զարդանում և Հանձնաբարդություն և վաղ դարնանը չառցածրից հնձել առվույտը, հենց վեր նրա վրա այդ հիվանդության նշանները յերեսն:

Ժանգակալումը (*Uromyces striatus* տերևների վրա յերեան յեկող կարմրավուն և այլ գույնի բծիկներն են):

Ելրացողը (*Erysiphe trifolii*)—*Մնկային հիվանդություն* և, վորի ժամանակ առվույտատերեների վրա սպիտակ խալուկ և առաջ դալիս:

Կեղծ ալրացողը (*Perenospora tritoli*) տերևները վոլորում եւ Այս հիվանդության ժամանակ տերևների սուորին յերեսին դարչնազույն կամ մանիչակագույն բծեր են յերեան դալիս:

Անտրակենողը (*Colletotrichum trifolii*)—*Տերևների ու ցողունների բծակալումն և Բծերն սկզբում լինում են կարմրավուն, առաջ գորշ գույն են առանում:*

Դեղնակալման առաջն առնելու համար հանձնաբարդում և անմիջապես հնձել դեղնակալած առվույտանոցները, վորոնք դրանք հետո նորմալ զարդացում են ունենում:

ԿՈՐՆԳԱՆ (Յըպարշտ — *Opozuchis sativa* L.)

Առվույյափ ու յերեքնուկին նման կորդաննն ել ունդավորների այն ընտանիքին և պատկանում, վորոնք ողից յուրացրած աղոտի միջացով հողը հարստացնելու ընդունակություն ունին։ Կորնդանն ել բազմամյա բույս և և առվույյափ նման յերկար տարիներ (4—10 տարի, յերբեմն ավելի շատ) կարող ե անել մինչև յուղամասի վրա Կորնդանը գերադասում ե կրային հողերը։ Ըստ վորում դյուրությամբ ընդունում ու հաշտվում է չոր ու քարքարու հողերի հատ Շատ լավ և անում մերգելային թույլ հողերում կամ սակավ քերի կավճային լանջերին, վորտեղ առվույյան ու մյուս կերարույյաները հաջողություն չեն գտնում։

Կորնդանի մշակույթի տարածումը Խ. Հայաստանում տնտեսական ահազին նշանակություն ունի, վորովինեաւ այս մշակույթը հնարավորություն և ընձեռում նպատականարմար ձևով ոգտագործելու չոր քարքարու ու անպետք հողերի այն հոկայական տարածությունները, վորոնք ուրիշ վոչ մի մշակույթի համար պիտօնի չեն, վորոնք ներկայումս վոչ մի արժեք չունեն և անհարմար են նույնիսկ խաշնարածության կարիքների համար։

Այսպիսի հողեր շատ կան Մեսանի ավազանում, Լենինականի շրջանում և այլ ուր, վորտեղ կորնդանը, մասամբ ել իշտավույտը, իրենց յերաշտակայուն ու սակավապես հատկությունների շնորհիվ, տարածման արժանի շատ արժեքավոր կերարույյան են։ Այսպիսի հողերի վրա ուրիշ կերարույյանը դարձացնելու մասին խոսելն անդամ ավելորդ ե, այնինչ կորնդանը նման քարքարու ու անբերը հողերում թե հնձվում ե և թե վորպիս լավագույն արսա և ծառայում Ցեղ հենց այս հանդամանըն ե, վոր Հայաստանի լեռնային պայմաններում հատուկ արժեք և տալիս կորնդանի մշակույթին ու մեծամեծ հեռանկարներ և բաց անում նրա տարածման ու գարզացման առաջ։

Կորնդանի արոտն անասուններին վարուսուցք չի առաջացնում, ինչպես առվույյափ ու յերեքնուկի արոտի ժամանակ և լինում։

Բացի դըանից, անրերը հողերը 5—6 տարի և ավելի կորնդանի ցանքսի տակ մնութիւն ոյնքան են բարեւավվում, վոր միանդամայն պիտունի յեն դառնում հացաբույսերի, կարտոֆիլի, վուշի և ուրիշ մշակույթների համար։

Կորնդանը հիանալի մեղրատու բույս է։ Մեր նախալիունային ու լեռնային պայմաններում այս հանդամանքը հակա-յական նշանակություն և սուսնում, վորովհեան կորնդանի մշակույթի շնորհիվ այդպիսի քարքարոս շրջաններում մենք ձեռք ենք բերում մեղրատու բուսականությամբ ծածկված վիթխորի տարածություններ։

Այս ամենին պետք է ավելացնել նաև այն, վոր բարձրադիր ու յերաշտաշատ շըր-ջաններում, վորաեղ անտառացումը դժվար կամ անկարելի յեւ ձյունաջրերի հոսանքը պահելու գործում կորնդանը մի վորոշ չափով կարող է փոխարինել անտառին՝ նորաստելով այդ ջրերի գետամակերեսային հոսանքի նվազեցմանը։ Նրա արմատները թափանցելով հողի խորունկ շերտերի մեջ՝ կնուպաստեն խոնավությունն անտեղ մտնելուն, վորպիսի խոնավությունը, չորսւմ յան ժամանակ, հետագայում հաջողությամբ կողտազործի կորոգունը՝ խորաթափանց նույն արմատների միջոցով։

Բացի լավորակ ու բավականաշափ կերամիչոց սոսնալոց և բացի մեղրատու հատկություններից, ամենայերաշտաշատ տարի-



Նկ. 2. Կորնդան

ներն անգամ, յերբ ընական խոռոչը համարյա այլքում վռչնաշնում են չորսթյունից, կորնգանը բերք և տալիս կորնգանի ցանքերը տնտեսական ուրիշ նշանակություն ու արժեք ել ունեն:

Կորնգանից նոր պղատված հողերն աղոտաղերով հարստացած, ուժեղ, հանգստացած ու շատ մաքուր, այսինքն՝ մոլախոտերից գերեւ են լինում, հետեաբար՝ կորնգանից հետ հողի մեջ լավագույն պայմաններ են ստեղծվում հացարույների մշտկության համար:

Այս ամենից պարզ է, վոր մեր ունեցած՝ այժմ համարյա անողութ, քարքարու հողերի անազին ֆոնդը գլխավորապես կորնգանի մշակույթի տարածման միջոցով պետք և ոգտագործվի:

Սերմերի պակասությունը պետք և հողացվի վայրի կորնգանի սերմեր համագեղեցով ու նրանց արհեստական բազմացմամբ: Այս միջոցով եաբեկի կլինի արագորեն լավացնել մեր անհարժեք հողերի հսկայական տարածությունները: Տեղական սերմերի արտադրությունն անհրաժեշտ ուժեղ թափով կաղմակերպել նույն պատճեռով, վոր հեռուներից բերված կորնգանի սերմը շուտ և կորցնում իր թարմությունը և արդեն 2-րդ տարում 50%—ով կորցնում և իր ծլունակությունը:

Կարնգանի նկարագրությամբ.—Վայրի վիճակում կորնգանը մեր մոտ հանդիպում և լնանային շրջաններում: Բնական վիճակում նա հանդիպում է նուև Խ. Միության հարավային մասի շատ շրջաններում, Յեվրոպայի հարավային մասներում: արևելքում նա հասնում և Բայկալ լճի մերձակայքին:

Կորնգանի հիմնարժությունը սմ հաստության և հասնում: Նա 6 մմոր ու ավելի խորությամբ թափանցում և հողի մեջ: Կորնգանը հիմնական առվույտաբաժանից ավելի ուժեղ ճողավորում և ունենում: 30 սմ խորության գրա նա մենաթվով ոժանդակ արձաններ և արձակում: Արմատավղիկից առնում են բազմաթիվ ցողուններ, վրոնք 40—70 սմ բնակչությամբ ուղիղ տեսք ու ածուր կազմ ունեն Կորնգանի արձատավղիկին առվյունություն ավելի թույլ և խորանում հողի մեջ, այս պատճեռով ել նա ավելի զգայուն և ձյունազուրկ ու ցուրտ ձմռան հանդեպ վոչխարը, վոր շատ ցածրից և կը ում խոտը, մասում և կորնգանի արմատավղիկը, վորի հետեանքով բռնածածկոցը նոսրանում ե: Այս նկատի առնելով միամյա կորնգանը, մանավանդ վոչխարի ու այծի արտադրանել չի կարելի:

Կորնգանի տերեներն անզույդ-փեռքածե են, 13—25 թերուլ

ու մեկ տերեկիկով՝ վաստիկի ծայրին։ Վարդագույն ծաղիկները
5—12 մմ յերկարություն ունեցող ուղիղ ու համափթիթ հուրբան
են կաղմառմ։ Պտուղները՝ ունդերը վասպաձև են, ցանցավոր մա-
կերեսաղվ։ Ռւնդը, վոր չի պատռվում, միասներժ է։ Սերմերը ըաց
դորջավառն դույն ունեն, գեղնա-կարմրավուն ու սև գույնը սերմի
վատորակ լինելու եցույց տալիս։

Կորնզամի ցանելը։ Ցանելուց առաջ սերմահեկիչ կայանում
սահմանում են սերմերի ծլունակությունն ու տնտեսական պիտա-
նիությունը, քանի վոր մի տարի պատկած սերմերը $50^{\circ}/_0$ -ով կորց-
նում են իրենց ծլունակությունը։ Ցանցասներմի մեջ գոտնված
ախտախառնուրդը $40^{\circ}/_0$ -ից ավելի չպետք ե լինի։ Ցեթե կորնզանի
ցանցաներմի 100 հատիկից 80-ը ծլուն է, ապա $40^{\circ}/_0$ -այլին ախ-
տախառնուրդի ժամանակ այդպիսի սերմի տնտեսական պիտա-
նիությունը $70^{\circ}/_0$ պիտի հաջվելի Այս միջինն ծլունակության տոկոսն
և համարդատմությանը իսկ այդպիսի սերմն ել պիտանին՝ ցանելու համար։

Կորնզանի գարնան ցանքը վաղ պետք ե կատարել վարով-
հետեւ նրա փայտացած պատրանը պետք ե ուռչի—պատովի և պա-
տի իր մեջ պարունակված սերմը։ Սրա համար ըստականաշագի
խոնավությունն և պահանջվում, ուստի սերմերը 1—2 օմ խորու-
թյան մեջ պետք ե ցանել, վորպեսզի նրանք խոնավ հողում դաշն-
մին։ Կորնզանը ծլուն և սերմելուց 2—3 շաբաթ անց,
Միեն արագուցնելու համար, ցանելուց առաջ յերբեմն սերմերը
թրջում են. այս գեղցրում կորնզանը ցանելուց մի շաբաթ հետո
ծլուն եւ Շաբացանի ժամանակ մի հեկտար հողում սերմում
են 100—160 կգ կորնզան, իսկ անխառն շաղացանի ժամանակ
սերմի ծախսումը համապատասխան չափով ավելանում, 130—190
կիլոգրամի յե համառում։ Շաբացանի ժամանակ սերմը գցում են
2 օմ խորության մեջ, իսկ շաղացանի ժամանակ սերմը ծածկե-
վում և ցաքանելու միջոցով, ըստ վորում ավելի լավ ծածկելու
համար ցաքանելը յերկու անգամ և կատարվում յերկայնու-
թյամբ ու լայնությամբ։ Վորպեսզի սերմերը պահանջվածից
ավելի խոր հողաշերտերում չթաղվեն, ցանելուց առաջ հերկած
արտի յերեսը փոցիսելով մեկ անգամ ուղղում—հարթում են։ Պա-
տրյանից ազատելու դեպքում կորնզանի սերմերը համարյա առվույ-
տասներմի չափ մանր են, այդ պատճառով ել պահանջվում և շատ
խոր չցցել նրանց, իսկ ցաքանելն ել կատարն վոչ շատ ծանր
դործիքների միջոցով։

Ցերաշտաշատ վայրերում, մասնավորապես լեռնային մեր

շրջանների անջրդի հողերում, ավելի լավ ե կորնգանն առանց ծածկոցաբույսի ցանել: Չորային տարիներին ծածկոցացանցը դժվարացնում է կորնգանի դարձացումը, իսկ այս հանդամանքը նվազեցնում և նրա բերքատվությունը նաև հետապա տարիների ընթացքում:

Վառոզվող հողերում կորնգանը ցանդում են դարնանը, ծածկոցաբույսի հետ միասին: Աշխանացանը հաճախ տուժում և ձմեռույթին ցրտահարությունից: Բայց յեթե հողն ամառվանից լավ մշակված և ու բավականաչափ խոնավություն և պարունակում իր մնջ, կորնգանը կարելի յի ցանել ոգոսառությունը ըսկերին, վորպեսզի մինչև ձմռան վրա հասնելը նրա ծիլերն ամրակալեն: Աղբարայի (Նախկին Ղղլղոչի) ցըտնում 1926 թվի հունիսին մենք կորնգան ենք ցանել վորը մինչև ձմռան գալը շատ լավ արմատակալել եր և մի քանի տարի շարունակ հրաշտվի բերք եր տալիօ:

Կորնգանի արտից լավորակ խոտ ստանալու համար պետք են ցանքը խիտ կատարել: այս դեպքում շատ ավելի նույը ցողուն ունեցող խոտ և ստացվում, քան նոսրացանք ժամանակ և լինում: Իսկ սերմ ստանալու նպատակով կորնգան ցանելու ժամանակ պետք է դերադասել նոսրացանքը, յեթե միայն հողը համեմատաբար մաքուր և աղատ և մոլախոտերից: Նոսրացանքից ավելի լավ վորակ սերմեր կարելի յե սպասել քան խոտացանն և տալիս Ցանելու առաջին արտում անասունի արտօին արգելք պետք և դնել, վորպեսզի կորնգանն ազատորեն արմատակալի:

Կորնգանի առաջին հունձը ցանքի յերկրորդ տարումն և կատարվում: Միայն այդ հնձից հետո, այն ել առակախոտն անելուց հետո յե, վոր կարելի յե անասուն թողնել կորնգանի արտը, յեթե միայն այդ չափազանց անհրաժեշտ եւ:

Կորնգանը գարնանացան գարու կամ ցորենի հետ նույն հողում ցանելու դեպքում, նախ աշխանը պատրաստած ցելում պետք և սերմեր, գարնանացան հացարույսը և ապա նրա վրայից ցանել կորնգանը:

Խառնացանի ժամանակ ծածկոցային բույսի սերմաքանակը մի յերրորդով պակասում է: Յեթե սովորաբար մի հեկտար հողում ցանում են $1\frac{1}{2}$, ցենտներ գարի, ապա խառնացանի ժամանակ (կորնգանի հետ) ցանում են 1 ցենտներ: Այդ դեպքում կորնգանի սերմաքանակի պահանջն էլ և նվազում: հեկտարին

Է¹/₄ ցենտների գորխարնն ծախսվում է 1—1¹/₄ ցենտներ կորնգառնի սերմ:

Ետղացանի ժամանակ կամ իրունի սերմիչով ցանելիս ձանձկոցարույսն ու կորնգառն սերմնըն իրար հետ լսվ խառնում և ապա ցանում են Իսկ շարքացանի դեպքում նախ սերմում են ծածկոցարույսը, ապա կորնգառը՝ շաղացան կամ նույնպես շարքացան են անում, Ներշին գեղքում կորնգառն ի շարքերը ծածկոցարույսի շարքերին հակառակ ու դղությամբ են դասավորում:

Ետղացանի ժամանակ շարքացանի խորիկների վրա ծանրոցներ են հաղցնում, վորզեսպի նրանք ավելի խոր թաղվեն ողի մեջ:

Կորնգանի խնամքը.—Կորնգանի մշակույթի ամենագլխավոր խնամքը ցանցները մալուխոտերից ու նրանց զարգացումից զերծ պահելու և Մոլախոտերը դյուրությամբ են խեղղում կորնգանին, մանավանդ իր աճման առաջին տարին։ Այս բանից խուսափելու համար, ամենից առաջ կորնգանի համար նշանակված հողն աշխանից շատ լսվ ու խոր հերկում, իսկ զարնանը ցանքից տռաջ խնամքով ցագանում են։ Ցեթե այնուամենայնիվ մոլախոտերը բուսնում են, այս ժամանակ դիմում են ձեռնարարդնանին։ Մոլախոտերը հնձել չեն հանձնարարիում, վորովհետև նրանց հետ միասին հնձած կորնգանն ել թույլ և զարգանում վորի հետևանքով խոտարերքը նվազում են։

Ցանքի յերկրորդ տարում կորնգանի խնամքն այն է, վոր մոլախոտերի վերացման ու հողի փխրեցման նպատակով զարնանը կորնգանի արտը 2—3 անգամ փոցխում են։

Կորնգանի բերխանալավորք.—Կորնգանը հնձելու ամենալավ ժամանակը ծաղկման սկիզբն ե, այդ ժամանակ ավելի նուրբ կերպախոտ և ստացվում, թեև լիսկատար ծաղկման շրջանում հընձելիս բերքը վորոշ չափով բարձր և լինում Այսպիսով, ուրեմն, կորնգանի հնձելը չպետք և ուշացնել և այն պետք և կատարել յերբ ըույսը նոր և սկսում պատիճնկալել, վորից հետո խոտը կոչտանում ե, տերեները թափվում են և վատ հատկության ու համարյա անպիտք կեր և ստացվում։ Անասուններին կերակրելուց հետո այլպիսի կերից մեծ քանակությամբ մնացորդ և թափվում։

Հնձելուց հետո կորնգանն ավելի զանգաղ ու վատ և աճում, քան առվույտը Այդ պատճառով, կորնգանի հունձն ուշացնելու դեպքում վոչ միայն կոչտ խոտ և ստացվում, այլև այդ հանգա-

մանցը կարող ե իշխցնել, 2-րդ հնձիք բերքատվությունը հնձիքուացումը կարող է կորնգանի ցրտահարության ու վոչչացման պահանակ ել դառնալ ձմռանը, վորովնետեւ ուշ հնձելու դեպքում, մինչև ձմռան ցրտերի վրա հասնելը. բույսը չի կարող լավ կերպով աճել ու ամբանալ:

Կորնգանը սովորաբար տարեկան մեկ հունիս և տալիս Առաջին տարին բույսն իր արմատներն ու տերեններն և զարգացնում է վոչ մի հունիս չի տալիս Հաջորդ տարիներն անջրդի հողերում կորնգանը մեկ անգամ և հնձում, իսկ ջրարրի հողերում՝ 2 անգամ:

Անջրդի հողերում կորնգանի խոտարերքը տատանվում է 20—35 ցենտների միջին, միջին բերքատվությունը պետք է ընդունել հեկտարից 25—30 ցենտների Զրարրի ու բերրի հողերում կորնգանի խոտարերքը սաստիկ բարձրանում է, և 2 հնձից 60—80 ցենտներ և նույնիսկ ավելի խոտ և ստացվում: Առավելադույն բերքատվությունը ցանցի 3-րդ տարին ե լինում.

Աղջատ հողերում կորնգանը պահպանվում է 15—22 տարի: Չնայած այս յերկարակեցության, բերրի հողերում կորնգանի ցանցից անհրաժեշտ և սպավել 4—7 տարի, վորից հետո հողն ոյլ մշակույթի պետք է հասկացնել: Այս դեպքում 4—7 տարի շարունակ նույն հողը կրկին անգամ կորնգանի չի կարելի հատկացնել վորպեսզի հողն այդ մշակույթով հոգնեցնելու վտանգ չառաջանա, վորպեսի յերեւույթը նկատվում է նաև առվելյան հարատե ցանցերի ժամանակներում:

Կորնգանի բերքահավաքի ձևերն ու առույթները նույնն են, ինչ առվելյանը: Հնձած կորնգանը թողնում են մինչև թաշնելու առաջինանի հասնի, ապա խկույն փոքրիկ շեղջեր են կազմում: Չոր յեղանակին մի որից հետո այդպիսի շեղջերը միացնում—յերկուը մեկ են գարձնում: Հնձելու յերրորդ որը նույնն են կառարում, այսինքն՝ միջին մեծության 2 կույտը միացնում ու մի կույտ են կազմում: Այս վիճակում կորնգանը մնում է մինչև հավաքելն ու գեղ դնելը, իսկ մինչ այդ, գեթ յերկու որը մեկ անգամ, կորնգանի կույտերը չուռ են տալիս, վորպեսի նըրանց տակ աճող նոր ծիլերը չխաղվեն:

Նպաստվոր յեղանակներին և այստեղ մատնանշված ձևով չորացնելու ժամանակ կորնգանը տալիս է կանաչ գույնի և հանելի համ ու հոտ ունեցող լավորակ խոտ, վոր սիրով և ուտում ամեն մի անառուն: Ժամանակին հավաքված կորնգանի խոտը

շատ ոննդաբար և և սպիտակուցի քանակությամբ չի գիշամ տովույտին: Կորնգանի խրձերի ու զեղերի մեջ տերեների կորուստն ավելի թիշ և լինում, քան առվայրոն և ունենում:

Կորնգանի սերմնամեակուլը.—Ամենամեծ սերմնարեցը, ինչպես և խոտաբերքը, կորնգանի ցանքի ժողու տարին և ստացված, իսկ հատուկ սերմ ստանալու համար, լայն շարքերով ցանելու գեղքում, սերմն ստացվում և յերկրորդ տարուց: Սերմացու ստանելու համար հատուկ պահպատ կորնգանը թողնում են, վոր լիսկատար չափով հասունանա, միայն թե սերմերը չթափվեն կամ սերմապատյանները չպատռվեն:

Կորնգանի սերմերը հավաքում են այն ժամանակ, յերբ ստորին պատիճները հասունացած են լինում: Բոլոր պատիճների հասունացման սպասել չի կարելի, վորովհետեւ կորնգանի սերմերը դյուքությամբ թափվում են: Յերգանավաքը կատարվում և մեղենուներով, ըստ վորում ավելի լավ և հավաքած բերքից խրձեր կապի: և այդ ձևով միայն չորացնել:

Չորացնելուց հետո կորնգանի սերմախրձերը դարսում են տախտակապատ կամ ըրեղենա փռած սայլի մեջ և այդպես, առանց սերմահատիկների կորստի, փռսադրում են կայսելու վայրը: Մեկ հեկտարից ստացվող սերմնացանակը տվյալ տարիվ ըերգատվությունից ու ըերգահավաքի ժամանակից ե կախված: Միջին հաշվով հեկտարատեղից 2—5 ցենտներ սերմ և ստացվում:

Սերմնահավաքից հետո կորնգանի ցանքը սաստիկ նսորանում ու մոլախոտերով և ծածկվում, ուստի և նրա հետագա պահպանությունն անշահավետ և դաշնում: Սովորաբար սերմնահավաքից հետո կորնգանի արտը հերկում և նրա տեղն ուրիշ մշակույթ են ցանում:

Ցանքափոխարյուն:—Կորնգանն առվույտի նման մշակվում և բազմազաշա ցանքափոխության մեջ, ըստ վորում նա 3 դաշտից ավելի տեղ չի դրագում, վորովհետեւ ցանելուց 3 տարի հետո կորնգանի բերքը սաստիկ նվազում եւ Ամենից հաճախ կորնգանը ցանքափոխության մեջ պահում են 2 տարի, չնաշված հացարույսերի հետ կոտարած խառնացանք առաջին տարին: Վորոշ դեպքերում կորնգանը ցանքափոխության մեջ թողնում են 1½ տարի՝ առաջին տարին հնձելու, իսկ յերկրորդ տարին արոտի համար, վորից հետո կորնգանի արտը հերկում ու հացարույս են ցանում: Այս ամենն անջրդի հողերի վրա կա-

տարգող ցանքերին և վերաբերում, ջրաբբի հողերում կորնգանը մինուոյն հողերում ավելի յերկար ժամանակ և պահպում:

Կորնգան կարելի յն ցանել նաև ցանքաշրջանային հողաշերտերից դուրս, զորակ կորնգանը կարելի յեթողնել ավելի յերկար ժամանակ, այն ե՛մ մինչև բուսակաղմի նուրբանալն ու բերքատվության թուլանալը: Դրանից հետո կորնգանի զըրաված հողաշերտերը մտնում են ցանքաշրջանառության մեջ, իսկ նրա փոխարն ցանքաշրջանառությունից հանգող դաշտում կրկին արտացանքաշրջանային կորնգան և ցանվում: Ցեմե կորնգանը ցանգած և թույլ ու թափած հողերում կամ դաշտերից դուրս, և այնուղեղ հաջողությամբ աճում ու լավ բերք և տալիս, այդ դեպքում նրան ավելի յերկար տարիներ են պահում ու ոգտագործում: Այսպիսի հողերը 6—8 տարի կորնգանի տակ մնալով բարեկավում են և նրաց մեջ ուրիշ մշտկույթներ վարելն իլ հնարավոր և դառնուում:

Կարնգանի բօնամիներն ու նրանց դեմ կովելը.—Կորնգանին սաստիկ մնանում և մարդաթիթեռի թրթուրը: Շատակեր այս թրթուրը խուռն դանդաղով և արագորեն տռաջ և շարժվում՝ վաշնչացնելով իր ճանապարհին բանջարանոցները, պարտեզները, արմատապտուղները. կերարույսերը և այլն Միայն հասկավոր բույսերն են աղատ մարդաթիթեռի թրթուրի այս հարձակումից:

Այդ աղահ մնանառուի մոտենալն ու տարածվելը նկատելուն պես անհրաժեշտ և փարիզյան կանաչի ու կրի ջրալուծվածք չաղ տալ կորնգանի ցանքատեղի յեղքերին:

Կորնգանին մնաս և հասցնում, թեն ավելի նվազ չափով, կորնգանի զլատկա բենոցայ վորի թրթուրները բռույսի արմատների վրա յեն լինում: Այս հիվանդությունից կորնգանի տերեները յերբեմն վոլորգում, պատիճն կերպարանք են ընդունում:

Կորնգանին վոչ շատ մեծ մնաս են հասցնում նաև մեղրացողը, ժանդն ու լվիճը:

ՅԵՐԵՔՆՈՒԿ (Կլեվար—Trifolium)

Յերեքնուկի դաշտաբուծական տեսակներից գերազանցորեն մշակվում են.

ա) կարմիր յերեքնուկը (Tr. pratense).

բ) չպեղական ։ (Tr. hybridum).

շ) սպիտակ ։ (Tr. repens), վոր արտաքույս և.

դ) մուգ-կարմիր ։ (Tr. incarnatum).

Վերջին տեսակը միամյա բույսերի շարքին եւ պատկանումէ Ռւրիշ՝ ավելի պակաս կարենություն ունեցող տեսակներ մէջ պահանջաներում զեռևս բավականչափ փորձած չեն:

Կարմիր յերեքնուկ. — Այս տեսակն առենակարենորն եւ հանդիսանում բոլոր մնացածների մեջ, գլխավորապես ցանքաշրջանառության մեջ այն մտցնելու հարմարության շնորհիվ, վայրի վիճակում կարմիր յերեքնուկը հանդիպում եւ Յերբուպայում, Հյուսիսային Աֆրիկայում (Ալժիր և այլն), Փոքր Ասիայում, Հայաստանում, Թուրքմենստանում, Միջին Հարավային մասերում Ամերիկայում ու Ասիայի վոչ հյուսիսային մասերում: Յենթադրում են, վոր առաջին անգամ յերեքնուկի մշակույթին հիմք եւ դրվել Միջայում՝ Կասպից ծովից հարավ ընկած ցամացամասում: Այդ կողմերում նաև առվույտն եւ տառջին անգամ մշակության մեջ մտել.

Հայաստանի լեռնամասերում յերեքնուկն առանց վոռոգման չառ լավ աճում եւ կուվա անձրեառատ ու խոնավաշատ շրջանակում, նույնպես և Լենինականի ըարձրագիր վայրերում, Սեվանի ավաղանում և ընդհանրապես լեռնային այն վայրերում, վորտեղ տարեկան տեղումների քանակը 5—600 մմ. ից պակաս չեւ նույն շրջանների ավելի ցածրադիր ու յերաշտաշատ վայրերում միայն ջրաբրի հողերում եւ, վոր հաջողությամբ յերեքնուկը կարելի յեւ մշակել (Եիրակի գաշտ, Արթիկի, Բասարգեջարի, Մարտունու շրջաններ և այլն):

Յերեմիուկի նողապահանջը.—Հողի Նկատմամբ յերեքնուկը համեմատաբար պահանջներու բույսերից եւ նո լավ և զարգանում ավաղակ ավախառն հողերում, ովելի վատ՝ ավաղակավային ու ավաղային հողերում, Կարմիր յերեքնուկը խոնավության շատության շնորհիվ վատ և զարդանում նաև կավային հողերում։ Յերեքնուկը չի տանում հողի մեջ յեղող ավելորդ ջրերի առկայությունը, այս պատճառով նրա մշակույթի համար անընդունելի յեն նաև ջրարքի այն հողերը, վորոնք իրենց միջից խոնավությունը լավ չեն ծծում ու անցկացնում։ Այդպիսի պինդ ու թաց հողերում ձյունասակավ տարիները յերեքնուկը դրությամբ սահչում եւ Այս ամենից վատ, յերեքնուկի խորաթափանց արմատները հաստաշերտ ու մտաշելի հողակազմ են պահանջում։ Այսպիսի հողակազմի մեջ եւ, վոր յերեքնուկը շատ ուժեղ ու մինչև $\frac{1}{2}$ մետր հողի խորքերը թափանցող արմատախօսամ և զարգացնում։

Յերեմիուկի սերմերը.—Յերեքնուկ ցանելիս անհրաժեշտ և ոչշաղրության առնել նրա սերմերի վորակն ու ծագումը Ամենից լավը տեղական սերմերից ողտվելին եւ Խոկ յեթե սերմը զրսից բերել տալու կարիք կա, ապա պետք եւ սերմը ձեռք բերել այնպիսի շրջաններից, վորոնց կիմայական ու հողային պայմանները համապատասխանում են նոր ցանցավայրին, Խորհրդային Հայաստանի ցուրտ ու ձյունաշատ ձմեռ ունեցող լինային շրջանների համար լավագույն սերմեր կարող են համարվել միջինական կամ ավելի հյուսիսային տափաստանների սերմերը։

Հատուկ ուղաղրությամբ պետք և հետևել, վոր մոլախոտակի սերմեր, մանավանդ բաղեղ չլինի, և ընդհանրապես սերմերի ախտակալությունը նվազագույն չափերի հասնի։ Բացի դրանից, ընդունելի չեն վատ ու անժամանակ ժողոված կամ յերկար ժամանակով պառկած սերմերը, վորոնք կարմիր-դարչնաշուն խավար գույն են ունենում։

Թարմ ու ժամանակին հավաքված սերմերը դեղնամանուշակալույն և կարծես թե ճարպապատ—իսայլուն են, Յերեքնուկի նույնիսկ այսպիսի լավ տեսք ունեցող սերմերի մեջ վատ ծլունակություն ունեցող տեսակներ են հանդիպում։ Այս վերջին տեսակի սերմերն են, վոր հողի մեջ դժվարությամբ ուռչող ու ծիլ արձակող պինդ պատյաններ ունեն։ Պնդամաշկ այդպիսի սերմերի ծլելն արագացնելու—հեշտացնելու։ Համար ցանելուց առաջ սերմերը պետք եւ ավաղի հետ հարել կամ քերծել աղակու ման-

բունքով, վորպեսդի սերմապատյանները պատռավին, և ջուրն ու տաքությունը դյուրությամբ թափանցեն գնդի սաղմը. Այսպիսի միջոցների շղմենու զեղքում պնդապատյան սերմերը մի քանի ամիսների ընթացքում, յերեմն ել ցանելու հաջորդ տարին են ծլում:

Սերմերի ծլունակությունն ու մաքրությունը վորոշելիս՝ միաժամանակ հաշվի յն առնում նրանց անտեսական պիտա-նիությունը, այսինքն՝ պարզում են մաքրություն սերմերի տոկոսային հարաբերությունն ընդհանուր սերմակզորի նկատմամբ: Կարմիր յերեքնուկի սերմերի համար 90% -ի ծլունակությունը լազ և համարվում է յուսիսային սերմերի աշնանացանի ծլունա-կությունն ավելի ցածր և լինում, քան գարնանացանի ժամա-նակ: Այս տարբերությունը նրանից և առաջանում, վոր բերքա-հավաքի ժամանակ կիսահասունացած վիճակում ժաղովված սեր-մերը մինչև զարուն լիովին հասունանում են: Մյուս կողմից՝ պնդապատյան սերմերը ձմռան շրջանում՝ վորոշ չափով նրբա-նում են, վորի հետևանքով նրանց ծլունակությունն ավելանում է: Պնդանատիկ սերմերի ծլունակության այդ բարձրացումն այն ժամանակ և տեղի ունենում, ինարկե, յիր սերմերը վոչ թե սենյակի սովորական ջերմաստիճանում, այլ ավելի ցուրտ տե-ղում են պահպան:

Սերմի ընտրության ժամանակ ծլունակությունից զատ նկատի պետք և առնել սերմի անեցողության ուժը, այսինքն՝ թե վորքան միապաղաղ են աճում նրանք առաջին շաբաթվա ըն-թացքում: Արժեքավոր են այն սերմերը, վորոնք միաժամանակ ծլում ու միատեսակ թափով են աճում: այս ե, վոր ապահովում ե նրանց հետագա համաչափ զարգացումն ու բերքատվությունը:

Ցերենուկի ցանելը.—Ցերեքնուկը կամ խառնացան են ա-նում հացաբույսերի հետ, կամ թե չե առանձին են ցանում: Խառ-նացանի ժամանակ հացաբույսերի սերմացանակի նորման 50 տո-կոսով կրնատում են, վորպեսդի յերեքնուկի ծիլերը չխեղղվեն ու պատ անեն: Մեկ հեկտար հողում դուստ յերեքնուկ ցանելու ժամանակ 16—20 կտ սերմ ե գնում, յեթե ծլունակությունը մոտ 85% ե, իսկ անտեսական պիտանիությունը՝ 80% : Խառ-նացանի ժամանակ յերեքնուկի սերմացանակը 11—12 կտ-ի յե համառում:

Ցերեքնուկի խառը ցանքը կատարվում և վագ գարնանը՝ աշնանացան ցորենի վրա, կամ թե չե՝ զարնանացան զարու կամ

վարսակի հետ միասին Աշխանացան ցորենի վըս յերեքնուկը ցանում են, քանի հողը ցրտերի ազգեցության տակ դեռևս փուփր ե և բավական մեծ քանակությամբ խոնավություն և պարունակում իր մեջ, օանքը կատարում են շարքացանով։

Յերեքնուկը գարնանացան հացաշույսերի հետ խառնացան անելու ժամանակ նախ ավելի խորը ծածկոց պահանջող հացաբույսն են ցանում ու ծածկում, ապա միայն սերմում ուժ փոցիում են յերեքնուկը։

Յերեքնուկի սերմերը 1—2 սմ-ից ավելի խորը չպետք ե ցեկ Սերմերը հողածուծկելու համար արդեն ցանած արտը հարդարում են փոցիի հակառակ կողմանց Սովորական շարքացանով յերեքնուկ սերմելու ժամանակ հատուեկները 1—1½ սմ խորությումը են ցցում հողի մեջ, իսկ շարքերի հետագործությունն իրարից 12—13 սանտիմետր են թողնում։ Այս դեպքում մեկ հեկտարին 8 կգ սերմն ել բավական և Ավելի լայնաշար (45—50 սմ) ցանքի ժամանակ հեկտարի համար 3—4 կգ սերմ և պահանջվում։

Յերեքնուկի ծիլերը.—Յերեքնուկի առաջին տերեն ամրողջական ե, իսկ հաջորդ տերենները յետակի յեն, ծայր-յեղբերը՝ լրիվ, վերեի տերենները կարճ, իսկ ներքեինն ավելի յերկար ունի ունեն։ Գլխավոր արմատը չի ճյուղավորվում և ցողունից ավելի արտղ և աճում, լրիվ զարգացման ու մեծության հասնելուց հետո զլամավոր արմատն սկսում է կծկվել ու կարճանալ, վորի հանեվանքով արմատավզիկը թաղվում և հողի մեջ, վորն պաշտպանում և նըան անառուների արշակից պատվելուց։ Արմատավզիկի այսպիսի խորացումը, առկայն, չի ապահովում նըան ձմեռային ցրտահարությունից։

Յերեքնուկի սգտագործումը.—Յերեքնուկն առաջին տարում ամենաեփին բերը չի տալիս, բարենպաստ պայմաններում շատ փոքր քանակությամբ խօս և հնձվում։ Յերեքնուկն առաջին տարին քաղելը ցանկալի չե, վորովհետև այդ տարվա հնձից նա ուժապառ և լինում ու ձմեռը վտանգի յ՛ յենթարկվում, մանավանդ, յերը ձյունը հողմանար և լինում ու գետինը սրբվում եւ Առանձնապես բարեհջող պայմաններում, յերը աշնան յեղանակները տաք ու խոնավ են և գրա չնորիկ յերեքնուկը լավ զարգացած ե, արտի կանաչ յերեսը թեթևակի կերպով կարելի յետուել կամ կարելի յեթոյլ չփոփ արածեցնել այնու Ավելի լավ և թեթևակի հնձել յերեքնուկը, քան թե անառուների արոտ դարձնել, մա-

հավանդ վրչիւարի համար, վոր շատ ցածրից կրծելով ցողունները՝ ձմեռելուց առաջ սաստիկ թուլացնում և բռյուի պաշտպանունակությունը:

Յերկրորդ տարին յերեքնուկը մեկ անգամ հնձվում ու լավ բերք և սալիս է. Միության հարավ-արևմտյան մասերում, նույնպիս և Ամերիկայում ու Յելլոպայում, յերեքնուկի համապատասխան տեսակների ու յերկարատև ամսան շնորհիվ, յերկու բերք և սատացվում, յերկու անդամ և հնձվում: Հաճախ յերկրորդ հնձի փոխարեն, վոր սուաջիննից ավելի նվազ բերք և սալիս, թողնում են, վոր յերեքնուկը սերմակալի ու սերմ հասցնի Այսպես վարդելիս յերեքնուկի ցանքից միայն մի տարի յեն ոգտվում ու յերկրորդ բերքից հատո, լինի այդ խոտով, թե սերմով, յերեքնուկի անզը հերկում և ուրիշ մշակույթի յեն հատկացնում:

Յերեխնուկի վոռօգաւմը.—Մեր լեռնային շրջանների ջրաբրի բոլոր հողերում յերեքնուկը, առանց վարեկ կասկածի, հրաշալի կերպով կարող և անել ու զարգանալ ինչպես վերևում ասվեց, յերեքնուկը լեռնային շրջանների անջրդի հողերում ևլ կարող և լով զարդանալ այն զայրերում, վորտեղ մինուրատային տարեկան տեղումները 5—600 մմ-ից պակաս չեն, որինակ՝ Լոռիս համարյա բոլոր շրջաններում: Այս ամենը թելադրում և մեկ շատ ավելի մեծ ուշադրություն նվիրել յերեքնուկի մշակույթին: Այս շրջաններում, նույնիսկ յերեքնուկի ցանելը մարդագետինների վրա (աօծեա) ավել և հրաշալի արդյունք:

Յերեխնուկի խօսաբերք.—Յերեքնուկը հավաքում են խոտանոր կամ քաղիչ մեքենաներով: Հունձը կատարում են ծաղկման սկզբին Զպետք և սպասել, վորպեսզի յերեքնուկն ամբողջովին ծաղկի, վորոժնետե այդ զեպքումնրա ցողունները սաստիկ փայտանալով՝ սննդանյութերի մի մասը կորցնում են: Փամանակին չհնձված յերեքնուկի մեջ տերենների քանակը պակաս և լինում, իսկ դրա հետեւնքով բերքի վորակն ել և պակասում: Մաղկուն վիճակում հնձած յերնքնուկը 12—13% հում պրոտեյին և պարունակում: հետազայում, ցողունների փայտացման կապակցությամբ, պակասում և սպիտակուցանյութերի տոկոսային բուժանդակությունը:

Բացի դրանից, նույն փայտացման պատճառով նվազում և կերտիստի մարսելիության աստիճանը: Այս դեպքում վոչ միայն սպիտակուցային, այլև մարսելի բոլոր նյութերն ել շոշափելի կորումտ են ունենում: Փորձադաշտերում հաստատված և, վոր

ուղացրած ըերբահավաքն իրոք 2—3 ցենտներով ավելացնում է յուրաքանչյուր հեկտար յերեքնուկի խռատթերքը, սակայն դրանից մեծապես տուժում և կերի վորակը ժամանակից ուշ հնձած յերեքնուկից սակավանունդ, ծղոտաշատ և անասունների համար գժվարամարս կերախոս և ստացվում:

Փորձադաշտերում պարզվել է, որինակ, վոր ուշ հնձած խոտի մեջ սննդանյութերի քանակը կրկնակի պակաս և ժամանակին հավաքած խոտի մեջ յեղածից:

Հնձելու ամենալավ ժամանակն այս է, յերբ յերեքնուկի թփերն իրենց մեծումասնությամբ ծղակել են սկսում, Յերբենմ հունձը կարելի յե հետաձգել մինչև յերեքնուկը լիակատար ծողկման հասնի, բայց վոչ մի գեղքում հունձը ծաղկելուց հետո չպետք է կատարվի, յեթե նողասակը կերախոս ստանալին է:

Հնձելու ժամանակ պետք և պարզանալ տերենների կորսալից, վորի համար անհրաժեշտ և խռատֆել հնձած յերեքնուկն անտեղի զուռումուռ տալուց Տերենները պաշտպանելու համար, հնձած յերեքնուկը նույն որը ևեթ ձիափոցխերով հավաքում են շեղչերի, ^{1/2} որ թողնում են, վոր ցամաքի, ապա յեղաններով շրջում են, վորպեսզի չորանաւ Այս ձևով չորացող խռոց մի անգամ ել շրջելուց հետո բարդ են գնում:

Եերեննուկի սերմթամօսկուրյունը.—Մերմ ստանալու նորատակին հատկացված յերեքնուկացանքը մինչև սերմահավաքը հոգատար խնամք և պահանջում: Ամառվա ընթացքում անհրաժեշտ և փխրացնել հողը և մաքրել մոլախոտերը, յեթե սերմանոցը շարքացան և, ապա պետք և կավել ֆասատների դեմ և ապահովել ծաղկինների բեղմանվորումը, վորի համար անհրաժեշտ և շատացնել մողունների թիվը և հարմար տեղադրություն առ մեղվանուններին:

Սովորաբար սերմեր ստանալու համար յերեքնուկի հատուկ ցանք չեն կատարում, այլ սպազործում են գոյություն ունեցող ցողնքերից ընտրված հողամասերը Մի շաբթ վայրերում յերեքնուկի հենց առաջին հունձը թողնում են սերմի համար, սակայն նման դեպքերում սերմատվության որդյունքներն անբավար են լինում: Անհրաժեշտ և սերմի համար պահել յերկու տարեկանից վոչ ջահել յերեքնուկի յերկրորդ, այս ե՛ աշնանացանի բերքը, Այս գեղքում ուժեղանում և նաև ծաղկինների բեղմանվորությունը, վորովհետեւ այդ ժամանակ դաշտերում սովորաբար ծաղկինները քիչ են լինում, և մեղունները հյութ հավա-

ըելու համար մեծ խմբերով դեպի կորնգանի ծաղիկներն են զիմում:

Անըստեղա և նախորոք վորոշելը թե ավյալ յերեքնուկը կարգ և գոնե բավարար չափով սերծ տալ տնտեսությանը: Այս խմանալու համար պետք է ժամանակին ստուգել, թե սերծ կմ արդյոք յերեքնուկի արդեն սերմակալած գլխիկների մեջ:

Յնըր ծաղիկներն արդեն դժգունել ու թառամել են սկսում: այդ ժամանակն արդեն նկատվում է, յեթե այն ճպանելով զուրս են հանում զլիսիկից: Սերմեկն այդ պահին զեռւս կանաչ ու փափառեկ և լինում և մտաերի արանքում դյուրությամբ հզմվում է: Յերեքնուկացանը տարրեր մտաերից մի քանի տասնյակ սերմանդիկներ այս ձևով փորձելուց հետո, դյուրությամբ կարելի յե մտավոր գաղափար կազմել սպասվելիք սերմանքերի մտակն Յնըր այդպիսի ստուգումը յերեան բերի, վոր յուրացանչուր սերմանդիկների մեջ ըսկ 2—3 սերմանատիկ կա, ապա ավելի լավ և այդպիսի յերեքնուկն անմեջապես հնձել, քանի զոր նրա սերմանքերը շատ նույլ և լինելու:

Այս յեզանակով սերմակալության համար հարմարագույն յերեքնուկը ընտրելուց հետո հետագա հոգար սերմանավագի հարմարագույն ժամանակը վորոշելը պիտի լինի սերմանտեսություն վարողի համար:

Վորպես ընդհանուր կանոն՝ յերեքնուկի սերմանավագ այն ժամանակ են կատարում, յերբ ըույսը ծաղկաթափվում է, և նրա զլիսիկներն սկսում են գորշանալ Յնըր այդ ժամանակ մի քանի սերմանդիկներ ավելի մեջ ճման, ապա դեղին գույնի և արդեն ամըցած սերմեր կստացվեն, վորոնց մի ծայրը վորոշ չափով մանելակագույն կլինի: Հենց այդ ժամանակ է, վոր պետք և հավաքել սերմանքերը, ուշացումը սերմանթափության պատճառ կարող և դաշնալ:

Յերեքնուկի սերմանավագը նույն ձևով և կատարվում, ինչպես առվույտինը, վորի մասին իր տեղում մանրամասնորեն առջած է:

Յերեքնուկասերմի պահելը: — Սերմերի պահպանության անըստեղա պահանջն այն է, վոր չտուժի նրանց ծլունակությունն ու մաքրությունը: Սերմերի պահելու տեղը չոր պետք և լինի և անցքեր չունենա, վորպեսդի խոնավության թափանցումից զերծ մնա, ինչպես և ազատ լինի մկների և ուրիշ մնաստուների հարձակումներից: Նույնիսկ այսպիսի լով պայմաններում

գերաղաւնելի յե յերեքնուուկի վորակավոր ու թանգարժեք սերմերն ամուր պարկերի մեջ պահել, վորովճետե միայն այդ դեպքում նրանք կորուստ չեն ունենա, լավ կողանվեն ու չեն կորցնել իրենց հատկությունը:

Յերեխնուկի նիվանդուրյունները.—Կարմիր յերեքնուուկը մեծ մասամբ անկային հիվանդությունների յե յենթակա: Այսուղ մենք կհիշատակենք այդ հիվանդություններից ամենակարևոր ները:

Յերեխնուկի սերեվների նիվանդուրյուններն են՝ տերեագորշացումը (*Pseudoperiza trifolii*), աւարծակալումը (*Polythrincium trifolii*), ալրացողը (*Erysiphe polygoni*), կեղծ ալրացողը (*Peronospora trifoliorum*), յերեքնուկաժանղը (*Uromyces striatus*).

Յերեխնուկի արմանները.—Վարժկվում են արմատափտախառով (*Rhisoc tonia violacea*), Յողունը յերեքնուկ յենթակա յե յերեքնուուկի քաղցկեղի (*Cleovera- rak-sclerotinia trifoliorum*), վորնիր սև կնձիկներով դյուրությմար ճանաչվում եւ Այս հիվանդությամբ վարակված յերեքնուկացանքն աստիճանաբար ընդարձակվող ճաղատամերկագետնի վերածվելով՝ ըռչնչանում եւ Քաղցկեղով հիվանդացած յերեքնուկի թուփը դեանից դուրս քաշելիս արմատավզիկի մոտից, այսինքն՝ բույսի միտած տեղից: Իրովում եւ Քաղցկեղի դեմ պայքարելու միջոցը յերեքնուուկի սերմերը ֆարմալինի լուծվածքով ախտահանելն ե (1000-ին 1^{1/2}), յեթէ մաքուր սերմերը ջոկերն անկարելի յեւ:

Յերեխնուկի անթաքնող. (*Colletotrichum trifolii*) հիվանդությունը ցողունների վրա յերեքացող կարմիր քեների ձևով և ըսկավում, բծերն, իրենց ծավալով աստիճանաբար մեծանում ե, վերջինքարջո, ամրող ցողունը բանում են. դրանից ել ցողունը վոչքնչանում եւ Անտրակնողը շատ վարակիչ եւ միջատների միջոցով կարող ե մի դաշտից մեկ ուրիշը տեղափոխվելը հիվանդության տարածումը սերմերի միջոցով ել և կատարվում: Այս պատճառով՝ անտրակնողի դեմ կովելու միջոցներից մեկն ել յերեքնուուկի սերմից քլորանդիկի (սուլմայի) լուծվածքով ախտահանելն ե (1000-ին 1 բաժին):

Ցանքի մեջ յերեքնուուկի քաղցկեղ կամ անտրակնող յերեւն գալուց հետո՝ վարակված արտում անզաղն չորս տարի շաբունակ այլմ յերեքնուուկ ցանել չի կարելի:

Յերեքնուուկի ամենավտանգավոր բուսապարագիւը բաղեղն ե, վոր ինքն անմիջականորեն հողից սնունդ հայթայթել չի:

կարողանում, այլ ծձռւմ եւ յերեքնուկի հյութերը։ Այս պարագիտի սերմերից յերեքնուկի ցանքն աղատելու համար հատուկ մեջնայի («կուսկուտա») միջոցով սերմազառւմ են կատարում, իսկ յեթե, այնուամենայնիվ, յերեքնուկացանքի մեջ բաղեղ ե յերեան դալիս, ապա այդ նույն տեղերում պետք և նավթ լըտնէլ ու վարակված յերեքնուկն ամրողջովին այրել։ Այսպես չանելու զեղաքում բաղեղը կտարածի ու կդրավի ամբողջ արտը, կփչացնի ամբողջ բերքը, իսկ յերկրորդ տարին վարակված այդ արտում վորեն ուրիշ բերք ել չի ստացվի։

Ալրացողով վարակված յերեքնուկը պատաժ և լինում արանձան խավուկով, վորի յերեան վալուց շատ չանցած, յերեքնուկի տերենսերը զեղնում ու շրանում են։ Ալրացողով վարակված յերեքնուկացանքը չի կարելի թողնել, վոր սերմակալի, այլ կարելույն չափ չտապ կարգով պետք ե հնձել՝ վորպես կերպարագործելու համար։

Ալրանման ցող համարյա ամեն տարի ել պատահում ե, ուկայն մեծ չափերի չի հասնում։ Վարակման սկզբում հանձընարարվում և յերեքնուկը սրսկի ծծմբագույնով կամ այնպիսի նյութերից պատրաստված լուծվածքով, վոր ծծումբ և պարունակում իր մեջ, յերբեմն այս հիմնադրության դեմ սովորական սողայի լուծվածք ել են սրսկում։ Ողնում ե նաև հանքային պարաբրացումն ու մօխրապարաբրացումը։

Կեղծ ալրանման ցողի ժամանակ յերեքնուկի տերեների վրա դեղնավուն բծեր են գոյանում, վորոնք տերեկի մասը բորբոսախավուկով են ծածկում։ Ժանգակալության ժամանակ յերեքնուկի տերեների ու ցողունի ներքնի յերեսների վրա կլորածե բարձիկներ են յերեսում, վորոնք կարծես թե դարչնապույն փոշիով պատած են։ Այս յերկու պարագիտների դեմ պայքարելու միակ միջոցը կանոնավոր ցանքափոխություն սահմանելն ե։

Յերեքնուկին վնաս ե հասցնում նաև *Orobanch minor*, վորը պարագիտային ծաղկաբույս ե և սպրում ու սնվում ե յերեքնուկի արմատների հաշվին։ Նրան վոչչացնում են նախ քան դադարերությունը և, մյուս կողմից՝ աշխատում են, վոր նա չտարածվի սերմերի հետ։

Յերեքնուկը թշնամիներ ունի նաև միջատների շարքում։ Նրանցից հայտնի յեն հետևյալները։

Յերեքնուկի արմատակեր (*Hylastinus obscurus*).—Այս մի-
եռարույներ—3

չտամի թրթուրը կըծում և յերեքնուկի արմատանցքերը, վորից
բույսը ստատիկ տումում և յերբեմն ել բոլորովին վոշնչանուած
և Պայքարելու միջոցը յերեքնուկի առաջին հնձից անմիջաւ-
պես հետո արտը հերկելն ե, վորի ժամանակ բույսը հետ միա-
սին վոշնչանուած են նաև բոլոր թրթուրները: Յեթե յերեքնու-
կացանքի հերկելը չափազանց ուշանում ե, այն ժամանակ թրթ-
թուրները լիովին կըարգանան ու հասուն միջանելը կղաւանա՞-

Յերեքնուկատերելի կնճրավոր (*Phytomyzus punctatus*).—Այս
փոքրիկ բզեզի թրթուրը վաղ դարնան սկսում և ուաել կարմիր
յերեքնուկի տերեները: Նրա հասցրած ֆասոն անհնչան և և միայն
այն ազդեցությունն ունի բույսի վրա, վոր լոկ ուշացնում, հետ
և զցում նրա հասունացման պրոցեսի ավարտումը:

Յերեքնուկատմակ (Dasyneura leucopiniaeola).—Սա յերկթե,
մանր ճանճուկ ե, վոր իր ձվիքը ծաղիկների վրա յե գնուում: Սրա
թրթուրը ֆասում և ծաղկաբաժակը, վորի պատճառով սերմ չի
ստացվում: Այս ֆասուսուի դեմ պայքարելու համար դարնան,
վաղաժամ հնձուած են յերեքնուկը, այսպիսով, նախ քան լրիվ դար-
գացման հասնելը թրթուրների մեծ մասը վոշնչանում ե: Յեթե
յերեքնուկից սերմ ստանալու ցանկություն կա, այդ դեպքուա
տուաշին հունձը վաղ են կստարում, վորոնազի ավելի ուշ ծաղկող
յերեքնուկի յերկրորդ բերքից սերմ առնեն: Այս միջոցառում-
ների կիրարկությամբ նկատելի չափով նվազում և յերեքնուկա-
մոծակի պատճառած ֆասու:

Յերեքնուկի սերմեկեր (Bruchophagus funebris).—Ան ու-
մանը միջատ ե, թրթուրը զարգանում և յերեքնուկի սերմերի մեջ
և ուսումն և նրանց ամբողջ միջուկը, բացի կոչտ պատյանից: Այս
յեղանակով դատարկված սերմերից յուրաքանչյուրը կլոր ծա-
ռնի, վորտեղից մեծացած միջտարը դուրս և յեկեր Պայքարը
միակ միջոցը զարնանը յերեքնուկացանքն անասունների կողմէից
լավ արածեցնելն ե. վաղաժամ կատարած հունձն ել և ոգնում

Յերեքնուկի խոտավոր (Hypsorygia costalis).—Դարչնագույն
մանրացեցի թրթուրն և այս, վորը յերեքնուկի չոր խոտն և ու-
տում: Ամենամեծ ֆասու դեղերի ու խոտանոցների ստորին
շերտերին և հասցնում: Այդ շերտերի վրա աղ ցանելը նվազեց-
նում և խոտավորդի կողմից համառող ֆասուները: Ողնում և նաև
դեղերը համեմտարար բարձր տեղերում, այն և ցողունների կամ
հարթակի վրա դնելը:

կենդանիներից յերեքնուկին վաստում են մկներն ու կռ-
պինջները:

Եվեղտիրան յերեքնուկ (*Trifolium hybridum*).—Յերեքնուկի
արև տեսակն էլ լավ կերարույս ե, և կարմիր յերեքնուկի կողքին
լայն տարածում պետք ե գտննի, մանավանդ ամենաբարձր լեռ-
նային վայրերում, զորուեղ նաև մեծ հաջողությամբ աճում ու զար-
դանում և նույնիսկ այնպիսի հողերում, զորոնց մեջ կարմիր
յերեքնուկն ամենենին հաջողություն չի գտնում: Եվեղտական
յերեքնուկը կարմիր յերեքնուկից ավելի քիչ պահանջկոտ և հողի
նկատմամբ նա հաջողությամբ աճում և խռնավ ու սառը հողե-
րում, չորացրած ճանատեղերում և կավային ու ավտակ-կավա-
խառն ծանր հողերում, նաև դժվարությամբ և դիմանում ավաղա-
յին ու ավաղախառն հողերին: Եվեղտական յերեքնուկը լավ և դի-
մանում ցրտերին, դրա հակառակ՝ կարմիր յերեքնուկի համեմա-
տությամբ նաև ազելի զգայուն և չորությունը չի տանում: Չոր-
ի իմայով աչքի ընկնող շրջաններում ավելի լավ և յերեքնուկ
ամենեվին չցանել, այլ այն փոխարինել առվույտով, կորնգանով
և այլն:

Եվեղտական յերեքնուկի ցողունները բարձր ու ճուղաշատ,
փոքր ինչ կռացրած թփեր են ունենում: Մաղիկները դրսից
վարդագույն, բնկ ներսից համարյա սպիտակ են: Այս և պատճա-
ռը, վոր կարմիր յերեքնուկից տարրերելու համար նրան վարդա-
գույն ել են անվանում: Եվեղտական յերեքնուկի տերենները կարմ-
րադրույնի տերեններից ավելի յերկարագուն, ավելի ջլոտ են ու
վոշ մեծ յեղբատամներ ունեն: Նրա ատամները կարմրագույնից
կաշճ են, միջուկավոր, բաղմանյուղ. 50—70 սմ յերկարությամբ:
Եվեղտական յերեքնուկը պատկերու հակում ունի: Այդ պատճառով
ավելի լավ և յերեքնուկի այս տեսակը տիմոֆիելի յեվկայի հետ խառը
ցանել: Նա անասունների արոտին ավելի լավ և դիմանում, քան
կարմիր յերեքնուկը, առանձնապես լավ և հարմարվում վոռոգ-
վող մշակութին: Եվեղտական կամ վարդագույն յերեքնուկի մեկ
առավելությունն ել այն ե, զոր հաջողությամբ աճում և նաև
այն հողամասերում, զորտեղ կարմիր յերեքնուկը հողը հոգնեց-
րել ե, և զորանդ վերջինս այլն չի աճում: Քարնանը շվեղտա-
կան յերեքնուկը կարմրագույնից ավելի ուշ և բարձրանում:
Յերեքնուկի այլ տեսակներով հոգնեցրած և կարմրագույնի հա-
մար անպետք ու խռնավ, ճաճացած հողերում աճելու իր ունա-
կության, նույնապես և յերկրակեցության շնորհիվ, շվեղտական

յերեքնուկի նշանակությունը վերջնը նկատելի չափով սկսել եւ բարձրանալ:

Եզիդական յերեքնուկը փոքր ինչ դաշնավուն համ ունի, վորի պատճառով անսովոր անսառուն սկզբում հանույթով չե, վոր ուսում և այն:

Նրա սերմերը բազականաշափ մանր են կարմրագույնից: Սերմերը ձիթականաշափուն գույնի յեն, խակ յեթե բավարար չափով հասունացած չեն, նրանք զեղնականաշագույն են սուանում:

Եզիդական յերեքնուկի հնձելու ժամանակաշրջանը կարմրագույնի համեմատությամբ ավելի յերկարատես ե, վորովհետեւ նրա ցողուններն անընդհատ աճում ու ծաղիկ են տալիս: Սովորաբար հանձնաբարպիւմ և հունձը կատարել լիակատար ծաղիման շրջանում, ըստ վորում բարենպաստ պայմաններում յերկու հունձ և ստացվում: Մեկ հեկտարից ստացվում է 3—5 տոննա յերեքնուկախոռ: Մեկ անգամ հնձվելու դեպքում շվիդականի բերքը սովորաբար կարմրագույնից ավելի բարձր և լինում, վերջինի համեմատությամբ շվիդական յերեքնուկի սննդավետությունն ել բարձր ե, նրա նվազ փայտացող ցողուններն ավելի շատ սպիտակուց են պարունակում իրենց մեջ:

Յպիտակ յերեքնուկ (Trifolium repens).—Յերեքնուկի այս տեսակը, վոր արոտերեքնուկ ել և կոչվում, անփոխարիննելի կերախոտ և արոտավայրերի համար: Նա չափ լավ և դիմանում անասունների արոտին ու չի վախենում վոտնահարումից: Արոտերեքնուկը դալարուն ու բազմանյուղ ցողուն ունի, վորն արմատակալում ու նոր արմատախոտեմ և տալիս այն տեղերում, վոր տեղ ցողունի գեթ մի մասը սեղմվում կպչում և հողին: Արոտերեքնուկը կլորաձև զլիխիկ կազմող սպիտակ ծաղիկներ ունի: Շաղկականթը յերկար ե, տերենները կարմիր յերեքնուկից մի փոքր մանր, լայն-ձվաձև ու մանրատամ են: Ունդը տափակ և յերկարավուն, 3—4 սերմիկով: Մշակության մեջ արոտերեքնուկը յերկամյացեսամյա բռւյա ե, խակ նրա վայրի տեսակն ավելի յերկարակայց և (4—5 տ.): Սպիտակ յերեքնուկն աղքատիկ ու խոնագ հողերի հետ ավելի լավ և հարմարվում, քան կարմրագույնը, նա ամեն տեսակի հողերում ել աճում ե, միայն թե բազականաշափ խոնավություն լինի: Արոտերեքնուկի ծաղիկներն անասունը չի ուտում, դրա շնորհիլ ել նրա ինքնարեկղմագորումն անընդհատ չարունակվում ե: Փոքր ինչ ավելի խոնավ հողերում արոտերեքնուկը հենց բնական ճանապարհով տարեցարի զար-

դանում ու տարածվում եւ Նա հաջողությամբ և աճում նաև սպիրալատ վայրի ըրում. հաճախ հանդիպում է այդինքում: Յու Փորաթթվային պարարաւացումը շատ ուժն է կերպով և ներդում սպիտակ յերեքնուկի աճեցողության վրա: Նա կալիումի ու բարագման պահանջ եւ զգում, բայց սրա ազդեցությունն աշխատ է և մեծ չեւ Անասնաբուի կարիք ունեցող տնտեսությունների համար սպիտակ յերեքնուկը լավագույն արոտաբույնն է հանդիսանում: Սպիտակ յերեքնուկն անխառն վիճակում յերեք չեւ սնը մուռում է, այլ ցանում են կարմրագույնի ու տիմոֆեյեվլայի հետ միասին: Ցանում են նաև բնական մարգագետիններում, վարպետի վորակապես բարձրացնեն նրանց խոտակաղողը:

Խնջուս տամեց, սպիտակ յերեքնուկը համարյա միջտ վորես խոտաբույնի հետ խտան են ցանում: Հեկտարին պահանջվում է 8—12 կտ սներմ, միանդմ սներմածը յերկար տարիներ մնում ու տարածվում եւ Սերմերի ծղունակությունը 77^0 օ-ի, իսկ մաքրությունը 96^0 օ-ի յեւ հասնում: Հասած սներմերը կարմրագույն են, խակերը՝ պղնձա-վարգագույն, իսկ գերհասունացածները՝ մուղդարչնակույն: Մեծությամբ այդ սներմերը գիշում են կարմրագույնին ու գերազանցում շվեդականին: Մլունակությունը (լավ պահպանելու ժամանակ) տեղում է 2—3 տարի: Սպիտակ յերեքնուկն առանձին խնամք համարյա թե չի պահանջում, յեթե ցանքը մոլախոտերից մաքրելու անհրաժեշտություն չկա: Սպիտակ յերեքնուկը վորպես մեղրատու բույս ել և գնահատվում: Շվեդականին ու կարմրագույնի նման յերեքնուկի այս տեսակն ել մեղուների աջակցությամբ ուժեղացնում է իր բեղմավորությունն ու սներմակալումը: Հետեւապես, սպիտակ յերեքնուկի սներմատվությունը մեղուների ու բզեզների առատությունից եւ կախված է տատանվում է 300—600 կտ-ի սահմաններում: Անշուշտ մեծ դեց են խաղում նաև կլիմայական պայմանները:

Սպիտակ յերեքնուկի սներմանավաքն այն ժամանակ են կատարում, յերբ նրա գլխիկները գորշանում են, իսկ սներմերը բացդեղին գույն են ստանում:

ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՎԻԿ (Յոհան Արքան—Vicere sativa)

Վիկի միամյա գարնանացան բռւյս ե, պատկանում և ունշառվորների ընտանիքին։ Մաղիկները մանուշակագույն են, յերբեմն ել կարմիր ու մասամբ սպիտակավունու Նրանք հատ-հատ, հաղ-մագեապ նաև զույգ-զույգ նստում են տերեածոցում, կարճ կան-թերի վրա։

Վիկի պատիճները բավականաչափ մեծ քանակությամբ սերմ են պարունակում իրենց մեջ։

Վիկի սերմահատիճները փոքր ինչ տափակացած են, սուլո-րաբար մուգ դունավորումով (պատահում և նաև սպիտակամերժ տարատեսակ)։ Անման ժամանակ՝ սերմարլթակները մնում են հողի մեջ։

Վիկի ցողունը, վոր 35 սմ ավելի բարձրության և հունում ու մատղազ ժամանակ ուղիղ վեր և բարձրանում, հետագայում կունում ե, ուստի և հենարույսի (խոռնացանի) կարեք և զգում։ Հայաստանի լեռնային շրջաններում վիկն առանց հենարույսի (գարռ կամ վարսակի) ցանել չի կարելի, ինչպես մի քանի դեպ-քերում, ծանոթ չինելով նրա մշակույթին՝ ցանել են։ Վիկն այս դեպքում փառմ ու վշանում ե, իսկ նրա բերքահալաքը չափա-դանց դժվարանում ե։

Վիկի ցողունն ու տերենները մազանման նուրբ հյուսվածք ունեն։ Տերենները բաղկացած են հակառակ-ձվամել, բութ յեղբա-մորությամբ 5—8 զույգ տերենիկներից, վորոնք վոլորուն վեր-ջազիս ունեն։ Յերկրորդական տերենիկներն ատամնավոր ու ձվա-ձեւ-նշտարանման են։

Վիկի արմատը միջուկավոր և ու վոչ շատ զորեղ, կաղմար-մատների համեմատությամբ խիստ մեծ գերակշառություն չունի։

Վիկի հոսունացման ժամանակաշրջանը բավական կարճ և նրա ծիկները շատ չեն վախենում ցրտերից, ուստի նրա մշակու-թյամբ հեռավոր հյուսիսում ել կարելի յե զրագվել։

Վիկի աշնանացան տարատեսակն ել կա, վոր մեծ ցըտերի-

շի դիմանում, և սատի և անպեսք և ցուըտ շրջանների համար ։
Ծրակըին ավելի լավ թաղ զիկն և դիմանում (vicia villosa), վորը
նաև ավաղային կամ ու զիկ և կոչվում է վիկի այս անսակը
լավ անունն և ստացել, վորովհետեւ նրա ցողունն ու տերները
խիտ մազմզուկներով են ծածկված։ Այս տարատեսակը կարելի
յև ցանկը թե գարնանը և մենաշնանը ։ բայց վորում այս յերկու
դեպքում ել զիկի մշակության նպատակը յերեք ե.

ա) ծաղկման ժամանակ հնձէլ՝ կանաչ կեր կամ խոտ ստա-
նալու համար։

բ) թողնել մինչև լեռկատար հասունանալը՝ ուրմ ստանալու
համար։

գ) սպասպործել սիլս պատրատելու համար։

Վիկի-կերային առավելությունները հաւառեկ ուշադրու-
թյան են արժանիք ։ Հնորհիվ այդ տառավելությունների, նա պետք
է պատվաստվի ու տարածվի վերազանցությունը լեռնային լոշան-
ների խորտնակութեւնների ու կորանակությունների ջրաբրի
հողերի օանքափոխության մեջ։

Լենինականի ջրանի, Սևանի սվազանի ու նույնանման
այլ վայրերի ջրաբրի հողերում հեկտարից 40—60 ցենտներ չոր
զիկախոտ և ստացվում։ Ավելի բարձրադիր լեռնամասերում,
որինակ՝ Աղբարայի, Ապարանի և ուրիշ ջրաններում, վորանց
լինուրտային տեղութերի տուրեկան քանակը 500—600 մմ-ից
պակաս չե, գարնանացան վիկն առանց վոռովման ել շատ լավ
սնում է։ Այս ջրաններին մերձակա՞ լենինականի, Արթիկի ու
այլ ջրաններում հանգստացող հողում առանց վոռովման դար-
նունացան վիկ չպետք և ցանել, վորովհետեւ վիկախոտի բերքն
անշան կլինի, մյուս կողմից՝ խոնավասեր վիկը սաստիկ կը որաց-
նի հանգստացող հողը և ամառային յերաշանիրից հետո վիկա-
տեղը ցելնիս այնպիսի չոր ու ահազին կոշտեր կստացվին, վոր
նունց փշընը շատ դժվար կլինի և ընդհանրապես պահանջման
ձևով հողն աշնանացան ցորենի համար մշակել-նախապատրաս-
տեն անկարելի կրակնաւ։ Այս պատճառով նման ջրանների ան-
ջրդի հողերում հանգստացող արտը կամ խամը պետք և ցելի
ու անքուր վիճակում թողնելը

Գարնանացան վիկի սլամանցն առ կիման ու նողմկազմը.—
Վորսես զարգացման կարճաւան ժամանակաշրջան ունեցող
բռւյս վիկը մեծ պահանջներ չունի. նա ավելի յև ձովում զեակի
ցրտաշօւնչ հյոււկու, քան մյուս էնբարսութերը։ Ավելի հյուսվա-

ընկած զայրերում կամ մեր բարձրալւեային շըջաններում սեր-
մերի չնատունանալու դեպքում վիկը կարելի յն ոգտագործել

վրապես կանաչ կեր ու չոր խոռ, կամ վորպես սիլոսանյութ:

Վիկի ծիլերը մինչև - 3^o ու - 4^o ցրտերից չեն վախենում.

Նա խոնավություն և սիրում և խստապահանջ չի տաքության
ու հողակազմի նկատմամբ Համարյա ամեն տեսակի հողերի վրա
ել նա աճում է, այսպես, որինակ՝ անդոր, անտառային, կիղա-
հողային, ավագախառն, նոր մշակվող կուսական, կամախառն ու
նույնիսկ սառը կավային հողերում: Վիկի ցանքերը հաջող չեն
դնում միայն ավագային
հողերում, ինչպես նաև այն
հողերում, վորոնց ստորեր-
կրյա ջրերը չառ մոտ են
գետնի մակերեսին: Վիկը
բավականաչափ դիմանում
և ուժապառ և աղքատիկ,
նույնիսկ աղտօնու հողե-
րում, յիթե նրանց գոմադ-
րով փոքր ինչ պարարաց-
նում են, և յիթե աղտօնու
հողերը խռնագությամբ բա-
վարար չափով ապահովված
են: Կրի ներկայությունը
հողի մեջ վորոշ չափու
նպաստավոր և վիկի հա-
մար, միայն թե հողը չո-
չինի:



Նկ. 3. Դարչունացան վիկ

Խալեռնային մեր շրջաններում ավելի լավ և վիկը ցանել վառողու-
մով ապահովված ցելերում: բարձր-լիւնային վայրերում նույնը
կարելի յն անել անջրդի ցելերի վրա: Ծելի ու վիկի ցանքի հա-
մար նշանակված հողն ավելի լավ և աշնանը հերկել

Դոմադըն ել ազելի լավ և աշնանը դաշտ կրել, իսկ յթե
տնտեսական պատճառներով աշնանն այն չի կատարվել, ապա
գոմադըն պետք և դաշտ հանել ձմեռն ու վաղ գորնանը:

Արդեն ապվեց, վոր վիկը պատկող բույս եւ Այս իսկ տառ-
ճառով վիկն անպայման ցանում են վորեն ուրիշ բույսի հետ իխո-

Վիկախոնու կամ կանաչ
կեր ստունալու համար նո-

ւալեռնային մեր գանել վառողու-
մով ապահովված ցելերում: բարձր-լիւնային վայրերում նույնը
կարելի յն անել անջրդի ցելերի վրա: Ծելի ու վիկի ցանքի հա-
մար նշանակված հողն ավելի լավ և աշնանը հերկել

սին, վորպեսզի այս վերշինի ցողուններին հենվելով՝ վիկը գետնին շղառելի ու չփափի։ Սովորաբար վիկը խառնացան ևն անում գարու կամ վարսակի հետ։ Այսպիսի խառնացանը նուև այն առավելությունն ունի, վոր առանց նվազեցնելու վիկի բերքատվությունը գարու կամ վարսակի բավականաչափ հաջող ըերք և տալիս Յեզ այս շնորհիվ այն հանգամանքի, վոր վիկն իր խորաթափանց արմատներով հողի ստորին շերտերից և սնաւնդ քաղում, իսկ վերին շերտերն ազատորեն ոգտագործում են գարին կամ վարսակը։ Այս առավելությունից զատ՝ նկատված ե, վոր խառնացանն ավելի քիչ և յենթակա ֆնասատուների հարձակման, Բայց դրանից, խառնացանից ստացված խոտն ավելի լավ և ավելի արագ և չորանում։

Ցանկանեմի ընտցությունը։—Լավ ըերք ապահովելու նպատակով ցանելու համար պետք է ընտրել լավ ծլունակություն ու անտեսական պիտանիություն ունեցող սերմեր։ Ցանելուց ուստի վիկի սերմերը՝ մաքրում են հողակտորներից, մոլախտերի սերմերից, դարմանից և ուրիշ խառնուրդներից։

Սերմազտումը ցանքն ազատում և մոլախտերից ու բարձրացնում և բերքատվությունը։ Սերմերի ընտրությունն ընձևական անտեսակավորիչով են կատարում, իսկ զտված սերմերը՝ մանր ու խուզորի բաժանելը՝ տրիերով։ Բայց նախքան արիելի կամ ունձուկություն միջցոցով զտելընտրելը, սերմերը՝ նախապես մաքրում են քամարի միջոցով։

Շարքացանը կարելույն չափ վաղ և կատարվում, վորովհետեւ վիկը ցրտերից չի վախենում, այսինչ խոնավության մեծ կարիք և զգում։ Այս նկատի ունենալով՝ չի կարելի անտեղի թույլ տալ, վոր դարձնելը հողը չորանա և դրանով իսկ պատճառ շառնա վիկի խառնացանի անման ուշացմանը։

Վիկի ցանքը պետք է կոտարի; շարքացան, վերջինս ցանքը շատ ավելի արագ ու համաչափ և կատարում, ցան ձեռքի շաղացանը։ Բայց դրանից, մեջենացանի ժամանակ սերմի $10-15\%$ ինյողություն և ստացվում։

Սերմերի նոմակը կախված ե ցանքսի յեղանակից, նույնապես և հողից ու նրա մշակությունից։ Շարքացանի ժամանակ հեկտարին ցանում են $90-100$ կգ վիկ ու $50-80$ կգ դարի։ Ցանելուց հետո, նայած ողի ու հողի տաքությանը, վիկը $7-12$ որվա ընթացքում ծլում է, իսկ $45-55$ որից սկսում և ծաղկել։

Կանաչ կերի խնդիրն ամրող ամառվա ընթացքում կարգա-

վարելու համար յերբեմն սերմելիք ամբողջ վիճը վրչ թե մեկ անգամից, այլ 10-որյա ընդհատութեարով են ցանում, վորպեսողի յերկարացնեն նրա աճեցողության ու հասունացման տևողությունը։ Նպաստավոր ու ջրառատ պայմաններում, կամ բավարար շափով տեղումների առկայության դեպքում, վիճացանի ժամանակաշրջանը չօրս տանուրյակով կարելի յերկարացնել և այսպիսով տեսուսությունն ումբողջ ամառը ըստացքում ապահովիլ կանաչ կերպէ»

Վիճիցանքը հատուկ խնամք համարյա թե չի պահանջում։ Միայն յերբեմն վաստ մշակված հողում կամ աննպաստ յեղանակների առականության ժամանակ այդ ցանքը կարող և այնպիսի սոլախտերով ծածկվել. վորոնք նրանից արագ ու առաջ են առում, մանավանդ վոր վիճին առաջին շրջանում զանդադ եր զարգանում. Այսպիսի մոլախտերից հայունի յեն կծկութը (Raphanus raphanistrum) և զաշտամանունիխը (Sinapis arvensis) նուան դեպքերում արտը պետք ե քաղհանել, այլապես խռարերքը շատ թույլ կլինի. Ոգնում և նաև վիճը ժամանակից առաջ հընձելը, այս զեպքում մոլախտերը զրկվում են սերմակալինու համապարությանից, ժամանակից առաջ հնձելու դեպքում վիճն արագութեն ուժնացնում և իր հետագա աննցողությանը և հաջողությամբ հաղթահարում ու խեղզում և մոլախտերի մեծ մասին:

Վիճի խոտանավաքը. — Խոտ ստանալու համար վիճը հնձել են սկսում ծաղկման առաջին շրջանից և շարունակում ու վերջացնում են մինչև առաջին պատիճների հայտնվելը։ Ցերի վիճը ցանված և ցերում և նրանից հետո ցորենի աշխանացանն և կատարվելու, ապա հունձն ավարտելուն պես խկույն պետք և հերկել, հողը, վորպեսպի նրա մեջ յեղած խոնավությունը պահպանվի։ Վիճն իր մեջ մեծ ցանակությամբ ջուր և պարունակում և այս պատճառով ել շատ դանդաղ և չորանում. Դեռ դեղերը չհավաքած դաշտի վիճատեղը պետք և հերկվի՝ աշխանացանի համար հողը պարարտացնելու նպատակով։

Վիճախռառը խնամքով ու լավ պետք և չըրացնել, այլապես դեղ դնելուց հետո նա կփչանա:

Վիճացանքը մեկ հեկտարից 30—100 ցենտոներ չոր վիճախռուտ և տալիս։

Կատարված փորձերի համաձայն յերաշտաշատ ջրչանակում վիճից աղատված հողերի վրա կատարած աշխանացան ցորենն ավելի սակագարերք ե, քան մաքուր և ելք հողն բում։ Առնավ շրջան-

ներում այդ տարրերում յունը մեղմանում կամ բոլորովին անհայտանում է, իսկ ավազու հողերում ու ավելի խոնազ կրիմայում դեկտ ցանքից հետո հացարու յսերի բերքը մաքուր ցելում կատարված ցանքերից ավելի բարձր և լինում:

Վիկը փառես կանաչ կեր.—Այս նպատակի համար վիկը հընձում են տանակության կարիքների համաձայն և այդ կարիքի պահանջած ժամանակներին։ Մեկ հեկտար վիկատեղից 10—15 տոնն կանաչ կեր և սատացվում։ Կանաչ կերի համար վիկն ըսկը-սում են հնձել նոր ծաղկելու ժամանակից մինչև պատիմաները ըլու ները Յեթե վիկը հացարույսերի հատկացված ցելատեղում չեն ցանքում, այդ դեպքում, կանաչ կերի ոգուագրծությունն ամրող ամսավաճառի բաշխութեաւ համար, վիկի ցանքը 7—10 որվա ընդհատումներով են կատարում։

Վիկամերի մօտկալյըր.—Խնչպես վիերում ասվեց, սերմ ստանալու համար ավելի լավ և վիկը սերմել պարնանացան հացարույսերի հետ խառը։ Այս դեպքում հողը պետք է հիմնովին մշակել աշնանը, իսկ գարնանը վրկնավար անել ու ցաներ Այսպիսի դեպքերում վիկացանքը դոմադրով չեն պարարտացնուած, վորով-հնան աչս վիերջինը դանդաղեցնում ե վիկի հասունացումը։ Վիկելի լավ և պարարտացումը կատարութեամբ սուագերթուսֆատով՝ հեկտարին 200—300 կիլոդրամի սահմաններում։

Խանացանի համար առնում են 100-ական կգ վիկի ու դարու կամ վարսակի սերմ, յերբեմն ել գարու կամ վարսակի սերմը նույնիսկ միքիչ ավելի յեն վերցնում, վորովկազի այն ավելի ուժեղ հենարան լինի վիկի համար, առանց հենարանի վիկը պահպում և դրա հետևանքով փշանում ե։

Ցանքը կատարում են շարքացանով, ըստ վորում ավելի լավ և վիկն ու հացարույսը (գարին կամ վարսակը) ցանել վոչ թե միաժամանակ, այլ մեկը մյուսից անմիջապես հետո, այսինքն՝ նախ սերմել վիկը և ապա հակառակ շարքերով ցանել գարին կամ վարսակը։ Այսպես ցանքած սերմերն ավելի լավ ու ավելի համաչփորեն են տեղազրվում հողի մեջ։

Գարնացանացան վիկի հասունացումը բավականաչափ դանդաղ և ընթանում, յերբ ներքենի պատիմաներն արդեն պատրաստ են լինում, վերըն մասը դեռ շարունակում ե ծաղկել։ Այս պատճառով վիկի հետ խառնացան կատարելու համար պեաք և ընտրել դար և կամ վարսակի վոչ վարդանաս տեսակներ։ Վաղահաս վարսակը, որինակ՝ շվեյցարակ, անձրնա տեսակը, անպետք և խառ-

հացանի համար։ Նո չուտ և հասունանում ու թափվում, և այդ իսկ պատճառով հարմար հենարան չի կարող լինել զիկի համար։

Վիկի խառնացանի բերքահավաքն այն ժամանակ են ըսկ-սում, յերբ արդեն ստորին պատիմները գորշացած ու չորացած են լինում։ Թե սերմի և թե կերարույսի համար ամենաարժեն-քաղոր հատիկներն այդ ստորին պատիմների մեջ են գտնվում։ Վիկի հնձում են մանգաղով, գերանդիով ու խոտանար մեջենայով։

Հնձելուց հետո վիկը թողնում են, վոր թոշնի, ապա ըստ հարկի մի անգամ շրջում, բարդ են դնում և առանց խուրձ կապելու կրում են կալատեղը։ Վիկի կալսած հատիկները շափա-գանց թաց են լինում (20°/0), ուստի անհրաժեշտ ե սերմացուն փակլ բրեդենտի վրա կամ գետնին, վորպեսզի լավ չորանա-

Բարենպաստ պայմաններում մի հեկտար ցանքից 12—18 ցինաներ սերմանատիկ ե ստացվում։ Վիկասերմը չոր ու ազատ ոգափոխության ունեցող շենքերում են պահում։ Յեթե վիկա-սերմը վորպես կեր ե ոգատպործվելու, այդ դեպքում կալսելուց հետո նրան չեն զատում իտունացան գարուց կամ վարսակից, իսկ յեթե սերմացուի ու վաճառքի համար ե, այն ժամանակ տրիերով վիկասերմը ջոկում-առանձնացնում են։

Սպիտակուցով հարուստ վիկասերմերը սովորաբար վորպես անառնի կեր են օգտագործում։

Վիկի վնասառուները.—Մոլախոտերից վիկի աճեցողության հենց առաջին շրջանում ֆեասում ու խեղղում են՝ կծկվուկը, դաշ-տամանանեխը, շաղգամը, վայրի կուլացորենը, պյուլուն ու բա-ղեղը կամ պատատուկը։ Նրանց դեմ հետևյալ ձևով են պայքա-րում։ Յերբ վիկը ծլում ու 2½—3 սմ բարձրանում ե, այդ ժա-մանակ նրա ցանքատեղը փոցխում են, վորի հետևանքով մոլախո-տերը մասամբ վոչնչանում են։ Յեթե վորոշ մոլախոտեր շարու-նակում են մեծանալ ու մնասել վիկացանքին, այդ դեպքում ցանքականաչի դրուխը կտրում—խուսում են։ Այս գործողությունը յուրաժամանակ կատարելու դեպքում խառնացանը զորեղանում ու խեղղում է կողմնակի բոլոր բույսերին, նրանց շարքերում նաև մոլախոտերին։

Միջաներից վիկի մատղաշ շրջանում մնասում ե շերտավոր կարճակնճիթը, վոր կրծում ե առաջին տերեները և դրանով ել զանգաղեցնում ե բույսի զարգացումը։ Յերկարակնճիթի թը-թուրն ել և վիկահատիկին մնասում։ մնասում են նաև կանաչ բիերը։

վեկին մեծ զատ և հասցնում լիինը Այս վնասատուն ծծում
և բռւյսի ամենաքնքուշ մասերի հյութը և միաժամանակ իրենից
դատվող մեղրանման հյութով փակում և տերեների մանրիկ ու
սովորական աշքի համար անտեսանելի այն ծակոտիները, վորոն-
ցով ըստ յսերի շնչառությունն և կատարվում: Լվիճն ամենից շատ
չող յեղանակներին և զարգանում ու տարածվում: այդպիսի ժա-
մանակ անհրաժեշտ և խսկույն ևեթ հնձել վիկը, վորպեսզի գոնե-
տակախռտի բերքը քիչ թե շատ հաջող լինի: Լվիճից զաված
հյութով աղտոտված կամ ալրացողով ու ժանդով վարակված վի-
կախռտը միայն փոքր քանակությամբ և ուրիշ կերերի հետ խառ-
նելով՝ կարելի յե տալ անասուններին, այլապես նրանք վնասակար-
կարող են լինել այս վերջինների համա-

ԽԵՐՎԱԼԻՑ (Դօնիկ Խուլիս)

Խշառվույտը մինչև վերջին ժամանակներս վորպես մօլոխուան էր հայունի: Նրա մշակույթով չերին զրադվում դիխավորապես այն պատճառով, վոր յուրահատուկ հոտի ու դառնության պատճառով անասունները հրաժարվում եյին այդ խոտե ու տեղուց

Խ. Միության մեջ իշառվույտն անում և ամենուրեք՝ հոգու մարզերում, նահապարհներին, անմշակ թաղնված խամերում և այլն:

Ամերիկայում վերջին 15 տարվա մեջ իշառվույտի մշակույթն արտասովոր արագությամբ առաջնում եւ Զնայած յուր ցողունների կողտությանն ու յուրահատուկ հոտին: Ամերիկայի մի քանի նահանգներում չատ դնութերում իշառվույտը հրաժարակից սկսել և զուրս մզել կերաբույյսերի աշնապիսի արժեքավոր մշակույթները, ինչպիսին յերեքնում ու տագույտն են:

Իշառվույտն աչքի յե ընկնում իր յերաշտակայնությամբ, ուստի շատ հարմար և չոր շրջանների համար:

Հողակազմի նկատմամբ իշառվույտը պահանջնոտ չե, նա կարող և անել վոչ միայն հին ու հոգնած վարեկանողերում, այլ նույնիսկ ավագուս ու քարքարոս հողերում, աղուտներում, նա մեծ պահանջ և դգում կրային մասերի:

Իշառվույտը չատ արժեքավոր բույս դուրս յնեկավ հատկապես արոտավայրերի համար: Ի՞նչպես պարզվել ե, անսառնոր մի քանի որվա ընթացքում ընտելանում և նրան և այնուհետեւ թե վորպես արոտ և թե վորպես չոր խոտ նույնքան ախորժակով ու հաճույքով և ուտում այն, ինչպես և յերեքնում ու տագույտը:

Առվույտի համեմատությամբ այս բույսը նվազ պահանջնոտ, բայց ավելի բերքառատ և նաև անջրդի հողերում:

Հյաստանի լեռնային շատ շրջաններում իշառվույտն առանց վոռոգման կարող և հաջողությամբ աճել ու զարգունալ այնպիսի վայրերում, վորաեղ առվույտը միայն ջրարրի հողերում և մշակվում: Կարելի յե ընդունել, վոր իշառվույտը կորնդանի հետ միասին ու նրան համանափասար կերպով կարող և մշակվել լեռնային շրջանների չոր ու քարքարոս այն բոլոր վայրերում, վոր-

անդ շողերը համեմատաբար թույլ են ու միջնուղաղային տեղում
ները բավարար:

Իշակպույտի բնական սերմանման դյուրության հետևան-
ցով հնարավոր և ասանց խոչոր ծախսեցի ապահովել նրա մըշա-
կույթի տարածումը

Հայոստանի մատու-
արուտավայրերում:

Վերջապես անհրա-
մեշտ և մատնշել իշակ-
ությունի անվորաբինի-
լի մեկ ռւրիշ հատկու-
թյունը—նրա հիյա-
նալի մեղրատվու-
թյունը:

Ենք այս բույսը
մոդնվում են, վոր ձաղ-
իկ ու սերմակալի, այդ
ժամանակ մեղուները
նրանից ահագին քա-
նակությամբ մեզը
քաղելու հնարավո-
րություն են ստա-
նում:



Նկ. 4. Իշակպույտ

Ամերիկայում՝ իշակվույտի արագ տարածման ազդակներից
մեկն ել նրա ցանքերը մեղքաբուծության կարիքների համար
ոգտագործելով և յեղեր Յերաշտ տարիներին, յերր մեղրահավաքը
թույլ և լինում, ստացված նվազ բերքն ապահովող մեղրատու-
րույսների մեջ իշակվույտն առանձնապես արժեքավոր ե դառնում։

Ամերիկայում տղուտներն այլ մշակությունների համար նախա-
պատրաստելու նպատակով մի քանի տարի չարունակի իշակվույտի
տակ են թողնում, վորն այդպիսի հողերում հաջողությամբ անե-
լուց ու բերք տալուց զատ, աստիճանաբար նվազեցնում և նրանց
մեջ գտնված աղների քանակը։

Արոտավայրերի խոտակաղմի մեջ մտնելով՝ իշակվույտն
ավելացնում ե կովերի և ուրիշ ընտանի կաթնատունների կիմք,
առանց փորուռուցք հիմքանդություն առաջացնելու նրանց մեջ։
Մնացած անտառներն ել հանույցով են արածում իշակվույտը,

վոր, արոտից զառ, ոգտագործվում են նաև խոտ պատրաստելու համար։ Այս նպատակով իշառվույտը հնձում են ծաղկման ըսկդր-նական շրջանում և դրանից նույնիսկ մի քիչ առաջ, վորով-հետեւ նրա ցողուններն ավելի շուտ են փայտանում։

Ժամանակին ու ինամբով հավաքված, տերևները պահ-պահած իշառվույտը վոչ մի բանով չի պիծում առվույտախոտին։

Ավելի լավ ե իշառվույտի ցանքն առաջին տարին արոտի հատկացնելու յերկրորդ տարվա առաջին բերքը հնձել վորպես խոտ, իսկ յերկրորդ բերքը թողնել սերմակալության համար։ Ամերիկայում իշառվույտը հենց առաջին տարին հնձում են՝ դնա-հատելով այդ ժամանակ ստացված խոտի նըրությունն ու բարձր վորակը։

Իշառվույտի հունձը գետնից մի քիչ բարձր պետք ե կա-տարել, վորովնետն ավելի ցածրից հնձելու դեպքում բույսի հե-տագա զարգացումը նկատելիորեն տուժում եւ Այդ նրանից ե առաջանում, վոր իշառվույտի նոր ընձյուղները բուանում են վոչ թե՛ արմատավզիկից, ինչպես առվույտինն ե, այլ ճյուղավորվում են ցողուններից, վորոնք ցածր հնձելու ժամանակ ամբողջովին կտրվում են։

Խօսավայը կանաչ պարտացման համար։—Ծնորհիմ գետնի յերեսին ունեցած ահազին մասսայի, ողից մեծ քանակությամբ ազոտ առնելու կարողության, հողի մեջ գտնված գժվար լուծվող հանքանյութերն ոգտագործելու ունակության, հողի խորքերը թափանցող հզոր արմատասիստեմի, վոր քայլայելով նպաստում ե հողի փխրեցմանն ու թափանցելիությանը, այս ամենի շնոր-հիկ իշառվույտը մեծ նշանակություն ե ստացել կանաչ պար-տացման գործում։

Կանաչ պարարտացման համար իշառվույտի առաջին տար-վա ցանքն աշնանն են հերկում, իսկ յերկրորդ տարին՝ պար-նանը, յերր բուլու 10—20 ամ բարձրացած ե լինում։ Իշառ-վույտով կատարած կանաչ պարարտացումը $1\frac{1}{2}$ —2 անգամով բարձրացնում ե ցորենի, մայիսի, արմատապտուղների և առվույ-տի բերքը։

Պարարտացման ուժի տեսակետից իշառվույտը չի դիշում գոմաղըին, իսկ ազոտի քանակությամբ նույնիսկ դերազանցում ե նրան։

Ցերկամյա սպիտակ խօսավայ (Mellilotus alba Desr.).—Իշ-առվույտի այս տեսակի ծիլերը բնական վիճակում վաղ գարնան

են դուրս դալիս և առաջին տարվա ընթացքում մինչեւ 60 մմ բարձրության են հասնում Յերկրորդ տարում յերկրամյա այս բույսի ցողունները 11½—2 մետր և նույնիսկ ավելի բարձրություն են ունենած ։ Գլխավոր մսոտ արմատն առաջին տարին յերկրարում ե 60—90 սանտիմետր և ավելի, իսկ նրա վերին մասի հաստությանը նույն ժամանակամիջոցում մոտ 2—2½ մմ ե հասնում, Յերկրորդ տարվա դարնանն իշառվույաց շատ զաղ և սկսում բոյ քաշել յերկրու շաբաթով ավելի շուռա, քան սովորական առվույտը։

Անեցողության առաջին շրջանում իշառվույացը սովորական առվույտի նման է և նրանից այն բանով և տարբերվում, վոր նրա տերենները գլխակոր չեն և դաւը համ ունեն Առվույտի ու պատճառավոր ուրիշ բույսերի նման նրա արմատների վրա ել բակտերիաներ պարունակող պալարներ են գոյանում։ այդ բակտերիաները էլեանում են ողի մեջ գանդող ազատ բորակածինը և դրանով հարստացնում հողը։

Սպիտակ իշառվույացի հասունացած պատճենները ցանցավոր մոկերնես ունեն։ Պատճենների մեծ մասը մեկական սերմ և պարունակում իր մեջ, ըայց պատահում են նաև յերկու, յերեք և նույնինի չորս սերմ ունեցող որատիններ, իշառվույացի սերմերը շատ մեծ են ու նման սովորական առվույտի ու յերեքնումկի սերմերին։ Նրանք գեղին դռւյն, դառը համ և առանձնահատուկ ու բաժական դուրսեկան բուրմունք ունեն, վորը բույսի բուրք մասիրի մեջ ել տարածված և և վորը կումարին կոչվող հատուկ նյութի առկայության հետևանք եւ Այս հատկանիշով սպիտակ իշառվույացի, սերմերը կարելի յե զանազանել մյուս բոլոր սերմերից։

Խօսովաւրի ցանքը.—Իշառվույացի սերմերը կարելի յե կատարել շաղացան կամ շարքացան՝ աշնանը խոր հերկած և վաղ դարնանը լավ ցածրանոն հողում Յեթի իշառվույացն անխառն վիճակում են ցանում, ապա ցանքը շատ զաղ են կատարում, այսինքն, յերբ հողը դարնանը նոր միայն չորանալ և սկսում և յերբ աշնանավարի ցածրանելը կարելի յե դառնում։ Աշնանացանի վրա կատարվող խառնացանը վաղ դարնանը, ցեխախառն հողի մեջ և առանց ցածրանելու յեն անում։ Իսկ յեթի ցանքն ուշունում ե, այդ դեպքում աշնանացանը ցածրանելու հետ միաժամանակ են կատարում այն Գարնանացանի վրա իշառվույան

այն ժամանակ են սերմում, յերբ հացարույսը հողով արդեն ծածկ-
ված է լինում. այս գեղագում խառնացանը մի անգամ ել ցա-
քանում կամ տափանում են:

Խառնացանի ժամանակ հեկտարին 12—20 կգ պատիճանան
արզած սերմ ե գնում. իսկ պատիճապատյանների մեջ պանված
սերմ ցանելիս՝ մի փոքր ավելի. Անխառն ցանքի ու շարժացանի
ժամանակ սերմապահանջը մինչև 32 կգ-ի յե հասնում, իսկ շար-
ժացանի ժամանակ նույն պահանջը կրկնակի չափով կը ճառապիւմ ե:

Անջրդի հողերում ցանվող սերմի քանակը շաղացանի ժա-
մանակ 12—16 կգ-ի կարելի յե իջեցնել (յեթե սերմնը լով
պըտիված են). Պղըտած սերմից հեկտարին 8—12 կգ տվելի յի
պահանջվում:

Ցանկալի յե նախապես սերմնը ձեռք բերել վայրի իշտո-
վույտից և ապա այն բազմացնել անտեսության մեջ.

Իշտամպույտը ծլում և 7—10 որվա ընթացքում, իսկ բարե-
նպաստ պայմաններում՝ 5-րդ որը. Ակղրում ծիլերն աճում են
վուշ միապաղադ ու զանշաղ. Արմատները, ընդհակառակին, արա-
գորեն են աճում. Առաջին վեց շաբաթիւա ընթացքում արմատ-
նները 3—4 անգամով ավելի յեն լինում գետնի յերեսին գտնված
լուսածավալից:

Սոլախոտակալած հողերում առվույտը պետք ե սերմել լավ
շարքով, զորդեսզի կարելի լինի դյուրությամբ և ավելի լավ
քաղնանել մոլախոտերը, վորոնք իշտամպույտի աճման առաջին
շրջանում խեղդում են նրա ծիլերը. Բավականաչափ զարգանա-
լուց հետո իշտամպույտն ինքն և խեղդում մոլախոտերին, և նրա-
նից ազտովող արտերը սովորաբար գերած են լինում մոլախո-
տերի տարածումից:

Խօսվույթի խոտարեմք.—Խոտի համար իշտամպույտը հնձում
են, քանի գեռ նրա ցողունները գալար են ու չեն կոչացել:
Հնձելու ամենալավ ժամանակը բույսի բողբաջակալելու սկիզբն
ե, Հնձելիս պետք ե հետևել գորպեսզի տակնախոտը 15—20
սանտիմետրից ցածր չթողնվի. այսպիս պետք ե անել վորպեսզի
բույսը կրկին արագորեն աճի ու յերկրորդ հունձը տակում շուտ
ծաղկի սերմահավաքի համար:

Սղիտակ առվույտի տարեկան ընդհանուր բերքն առվույ-
տուրերից պակաս ե լինում, սակայն անցրդի հողերում նրա

բերքն ավելի բարձր է իշխավույտի ընթացքը բարձր և նաև յերես-
նուկի հեկտարներից:

Անջրդի հողերում սպիտակ իշխավույտի բերքը տատանվում
է 30—60 ցենտների միջև (ամեն մեկ հեկտարից): Զբարը հո-
ղերում այդ բերքը նկատելիորեն բարձրանում է՝ համեմով
85—100 և ավելի ցենտների:

Եերկում յա սպիտակ իշխավույտը սովորական առվույտից
ավելի շահավետ և այն տեսակի ենք, վոր նա վաղաճամ հողա-
շերու կրկնակի արագությամբ և կազմում և արդպիսով հնարա-
վորություն և ընձեռում ավելի մեծ տարածությամբ ու բարձր
բերքատվությամբ հող հատկացնելու հացահատիկների մշակու-
թյանը:

Սերմանավահքը.—Սպիտակ իշխավույտի սերմը յերկրորդ
տարիա բերքեց և առնում: Այդ տարին առվույտացանքը նախ
արածեցնում կամ հնձում են, ապա յերկրորդ բերքը թողնում
են, վոր սերմակալի: Սերմանավաքն այն ժամանակ են կատա-
րում, յերբ պատիճների յերեք քառորդն արդեն գորշացած և լի-
նում: Սերմանավաքի * ուշացումը սերմաթափության պատճառ
և դառնում:

Սերմ առնելու նպատակով իշխավույտ հավաքելու ժամա-
նակ ավելի լավ և ոգտագործել ինքնանեա կամ խուրձառուիչ մե-
քենա, բայց վոչ զերանդի, վոր անպետք և այդ նպատակի հա-
մար: Փոքրասարած ցանք ունենալիս սերմաթափությունը նվա-
զեցնելու համար ավելի լավ և բերքը հավաքել վաղ առավույտն
կամ յերեկոյից առաջ:

Կալսելը.—Իշխավույտի կալսելը հարսար և կատարել ըերքն
արտից ըերելուն պես Յեթե հարկադրած են նախքան կալսելը
դեղ գնել, ապա այնպես պետք և արվի, վոր զեղերը պաշտուան-
ված լինեն անպատճ յեղանակների ազդեցությունից, իսկ սեր-
մերը՝ թափվելուց, Փոքր տարածություններից ստացված վոչ
մեծաքանակ բերքը փայտերով են ծեծում: Սերմանանությունն
ուս յեղանակով կատարելիս անհրաժեշտ է քամհարել, պատիճա-
հատել ու տեսակավորել իշխավույտը, քանի վոր փայտակալման
ժամանակ մեծ չափով պատիճներ և վոչ թե դուժ սերմեր են
ստացվում: Սովորաբար գործ են ածում հացահատիկների կալ-
սիչներ, ըստ վերաւմ նախքան կալսելն իշխավույտի խրձերը շատ
լավ չորացնում են:

ԱՆԳԻՍՏԱՑՈՐՆՈՒԿ (Կոստը-նզօտիկ—*Bromus Inermis* L.)

Անգիստացորնուկը խոտադդիների ընտանիքին պատկանող յերկարամյա բույս է, վոր մինչև յն տեղում 10—12 տարի, իսկ միջին հաշվով 5—6 տարի շարունակ կարող և աճել վայրի վիճակում նա ամենուրեք հանդիպում է.

Անգիստացորնուկը շատ ցողուններ ունի, նոպաստվոր պայմաններում այդ ցողուններն 80—100 սմ և ավելի բարձրության են հասնում, հարուստ և մերձարմատային տերևներով, ծովառնները վերջանում են անքիստ հուրանահասկերով:

Ծորնուկը շատ բնարմատներ (ստորերկրյա ցողուններ) ունի, վորոնք միասին առած 30—40 սմ արամագիծ ունեցող ճիմ են կազմում: Բնարմատները չեն խորանում հողի մեջ՝ նրանք յուրաքանչյուր ցողունաճյուղից բաժանվող թելաշպտ ու յերկար արմատներն են, վորոնք հողի խորքերն են թափանցում. նրանք 1—1½ մետր խորության են հասնում, վորանդից և բռւյսի համար անհրաժեշտ խոնավություն են առնում: Այս բանի շնորհիվ անգիստացորնուկը նեացած բազմացյա խոտազդիներից ավելի յերաշտակայուն եւ նա սաստիկ ցրտերին ել շատ լավ պիտ մանում եւ սաւասմանիցից չի վոչչանում: Ծորնուկն իր հղոր արմատասիտեմի շնորհիվ հաջող կերպով մնունդ եւ քաղում հովի թե վերին և թե ստորին, ամենատիպ շերտերից, յերկու յերեք տարում աճում, զորեղանում և խիտ ու հուսկու ճմակալություն և տայիս:

Այսպիսի հատկություններն են, վոր անգիստացորնուկը ընտիր արոտարույսների շարքն են դասում:

Կիմայական ու նօդային պայմանները.—Անգիստացորնուկը հաջողությամբ հարմարվում ու լավ աճում է չորային այն շրջաններում, վորտեղ ամառային ամիսների շոգերն առանձնապես բարձր ջերմաստիճանի շեն հասնում: Ծորնուկը շտգ ու խոնավ կլիմա չի առնում: Նա լավ է աճում բերքի, կավային ու կավախան, ինչպես և ավագային հողերում, վորոնք պետք են ինեւ արմատաթափանց, փուլիր ու լավ ողանցումով: Ճահճացած կամ վողողվող տեղեր անգիստացորնուկը չի սիրում. դժվարությամբ

և ընտեղանում համեմատած աղուաներին։ Այս ամենի հետ միասին ցորնուուկը հողակաղմին նկատմամբ խստապահանջ չեւ և հաջողութ, ամու անում և վատուժ ու հոգնած հողերում, միայն թե նրանց լուի մշակված ու նախապարաստված լինեն ցորնուկի համար։ Հերկը կատարում են աշնանը՝ 15—18 սմ խորությամբ։ Դարձանը, ցանելուց առաջ, հողի լերեաը խնամքով պետք և ցածանվի։ Ավելի լավ և ցորնուկի համար հատկացնել միջնահերկ բուացանքից աղատված հողամասերը, վորոնք մոլախոտերից գրեթե զերծ են լինում։

Բուգականաչափ տեղում—

Ներ ունեցող զբջաններում ցորնուկը խառնացան են անում կարնանացան դարու, ցորենի ու վարսակի հետ Յերաշտաշատ շրջանանքում ավելի լավ և ցորնուկը ցանել առանց հացաւատիկային բուսածածկոցի (ավելի լավ և սերմել առվուրսի հետ խառը)։ Դարձանանացանը կարելույն չափ վաղ պետք և կատարելու։

Անցիստացորնուկը շարքացանով սերմելը դժվար է, այս պատճառով ել սուվորաբար ձեռքի ջաղացանով են սերմում։ ըստ վորում մինչ այդ շարքացանով սերմած են լինում խառնացան հացարույսը։ Այս դեպքում ցորնուկասերմերը հողածածկ են անում շարքացանի հակառակ ուղղությամբ։ Փոցիսը ծանր չպետք և լինի, վորպեսզի սերմերը շատ խորը չթաղվեն հողի մեջ։

Անցիստացորնուկն աշնաննուկը կարելի յեւ ցանել, յեթե յեղանակները խոնավ են։ Լեռնային մեր շրջաններում ցորնուկի աշնանացանը պետք և կատարվի ոգոսառոսի 14-ից սկսած մինչև սեպտեմբերի 15-ը, այսինքն՝ կարելույն չափ վաղ։ Վորպեսզի մինչև ձմռան դալը բույսը բավականաչափ արմատակալի և ամբանա հողի մեջ։

Ցանկացելի վարակը.—Խառնացանի ժամանակ հեկտարին



Նկ. 5. Անցիստացորնուկ

16—32 կդ ցործնուկասերմ և ցանվում: Արոտի նպատակով ցործնուկ ցանելու ժամանակ սերմաքանակը 1½—2 անդամով ավելացնում են, վորովնեսու վորքան խիտ և բռնակաղմբը, այնքան ավելի շուտ կարելի յե այն ոգտագործել վորպիս արոտ: Չուռ ցործնուկացանի ժամանակ սերմաքանակը կարելի յե միջին ավելացնել, մոտավորագես 40—55 կդ-ի հասցնել. ըստ վորում յերաշտաշատ շրջաններում այդ քանակությունը 32 կդ-ից ավելի չզերքի և լինի:

Անբիստացունուկի ցանեմանամբ:—Առաջին տարում ամրող ինսամքը մոլախոտերի վոչնչացումն եւ Դրա համար, մինչև ծաղկելու արմատը հնձում են, վորպիսողի մոլախոտերը վոչնչանան, իսկ ցործնուկը դորոշու Անբիստացորնուկն առաջին տարին բերք չի տալիս. յերկրորդ տարվա գարնանը ցործնուկացանքը մեկ-յերկու անգամ թեթև փողխերով ցաքանում են, վորպեղի հողը փխրանա, խոնավությունն ավելի պահպանվեն ըրա մեջ և ողն ավելի հեշտությամբ թափանցի դեպի բռւյսի խոր թաղվար արմատները: Յերրորդ ու հետագա տարիները ցաքաննելը զգիգ-զագ սիստեմի ծանր փողխերով են կատարում:

Ցործնուկացանն առանց ցաքաննելու թողնելու գեղքում բերքատվությունը 4-րդ տարվանից սկսած սաստիկ ընկնում եւ Բույսի կենսունակությունը վերականգնելու համար 3—4 տարին մեկ անգամ 5—10' ամ խորությամբ դիկսահերկ են կատարում (կամ սկարիֆիկատորով), վորից ցործնուկի աճեցողությունը խիստ մեծանում է:

Ցործնուկացանքն իր ամենամեծ բերքը 3-րդ տարում և տալիս: Սերմացուի համար, վորպիս ամենաբարձր ձլունակությունն ապահովողի, վերջին յերեսի բերքն են ոգտագործում:

Խոտ ստանալու համար ցործնուկը մինչև ծաղկի լն են հընձում. այդ ժամանակ ցործնուկի հուրաններն ուղղվում ու դեպի զանազան կողմեր ճյուղեր են արձակում: Զարգացման այս շրջանում ցործնուկից ամենալավ, քնքուշ ու սննդավիտ խոտն և ստացվում. դրանից զատ, արագ բարձրացող ու լավ տակնախոտ և բարձրանում արոտի համար: Մաղկելուց հետ հնած խոտը կոչու և ինում ու նմադ սննդավիտ:

Յերաշտաշատ շրջաններում անքիստացորնուկի բերքը տառանվում է 12—32 ցենտների միջև: Վոռոգման պայմաններում բերքատվությունը բարձրանում է մինչև 50—60 ցենտների:

Անբիստացորնուկի սերմամշակույթը նույն է, ինչ մինչև այժմ նկարագրված պատիճապորներինը՝ առվույտինը, կորնպանինը և այլն:

ԴԱՇՏԱՓԼԵՌՆ (Tenuifolium—Phleum pratense L.)

Խոտազդիների ընտանիքում դաշտափլեռնը բազմամյա կարևորագույն բույս է։ Վայրի վիճակում նաև ամենուրեք հանդիպում է՝ Յեղրոպայում, Սիրիում, Կովկասում և այլուր Չեայածայս բանին՝ նրա մշտկությունը վոչ թե Յեղրոպայում, ոյլ Ամերիկայում և սկիզբ առել Յենթաղրգում է, վոր այս բույսն իր «տիմոֆեյնվկա» անունը Տիմաֆեյ Հենդենից է ստացել, վորը նրան տարածել է Ամերիկայում (1840—1850 թթ.), 1860 թվին այս բույսի սերմերը «տիմոֆեյնվկա» անվան տակ Աֆրիկա յեն ուղարկել են։

Ամերիկյան ծաղում ունեցող աճուննն է, աճաւ, վոր այս բույսը բալոր յերկրներում կրում է։

Յեղրոպայի հյունիսային յերկրներում այս բույսը տարածվեց Անգլիայից սկսելով, այդ ժամանակ ել պարզվեց, վոր նոր ճանաչված բույսը Յեղրոպայում ամենուրեք վայրի վիճակում աճում է։

Յեղրոպայի հսկայական յերկրներում այս բույսը տարածվեց Անգլիայից սկսելով, Այդ ժամանակ ել պարզվեց, վոր նոր ճանաչված բույսը Յեղրոպայում ամենուրեք վայրի վիճակում աճում է։

Դաշտափլեռնը կամ տիմոֆեյնվկան ել, վորովեմ բազմամյա խոտազդի բույս, մեծաքանակ ցողուններից բաղկացած թուփ և ծողունները ծածկված են տերևներով, իսկ նրանց ծայրը վերջնում և զլանածն, հասկանման հուրանով, վոր վոչ այլ ինչ է, յեթե վոչ մեկը մեկին շատ մոտիկ զետեղված ծաղկափթիթ կամ համածաղկում, վորի մեջ սերմերն են զարգանում։

Դաշտափլեռնի (տիմոֆեյնվկայի) արմատները համեմատաբար շատ խորը չեն զնում (80—90 սմ), Վորովեմ խոտազդի, իր աճման համար նաև մեծ քանակությամբ ազդանունդ և պահանջում։

Կիմայական պահանջները.—Դաշտափլեռնը խոնավ շրջաններում և լավ աճում. իսկ ստամիկ չորտության չի դիմանում։ Հայաստանում նաև կարող և անել համեմատաբար բարեխառն կլիմա ունեցող լեռնային շրջանների ջրարրի հողերում (Եիրա-

կի դաշտ, Անանի ավագան և այլն), ինչպես նաև ազելի բարձրադիր ըրջանների անջրդի հողերում (Ազրաքա և այլն), Վերռհիշյալ և նրանց նման բոլոր ըրջաններում գաշտափլնոնը պետք է կարմիր յերեքնուուկի հետ խառը ցաներ Այսպիսի խառնացանը հանձնաբարելի յե ամբողջ կոռվա խոնազ ըրջանում, վորտեղ նման ցանքը լավագույն կերախառնուրդ կտա:

Դատավիճոնի նողուպտնանջը.—Այս խոտարույսն իր լավագույն բերքը կավախառն ու կավային հողերում և տալիս, մասնավանդ յեթե նրանք թարմ ու հարուստ կազմ ունեն Նա հաջողությամբ և աճում նաև չորացված ճաճճառողերի մեջ, իսկ ավագանողներում հաջողություն չի գտնում Յերեմին խոնավ մարդադետիններում դաշտափլնոնը ցանում են առանց հողը նախարկեալ մշակելու՝ ուղղակի ճմառողի մեջ։ Հաճախ այսպիսի ցանքից հետո դաշտափլեռնը դուրս և վաճում մնացած բոլոր խոտերին ու լավ բերք և տալիս։

Խոնավ ու բերքի հողերում դաշտափլեռնը շատ լավ և աճում։ Նրա ցողունների բարձրությունը 1—1¹/₄ մետրի յե համում, իսկ չոր հողերում ցաղունները կես մետրից բարձր չեն լինում։ Նրա թփակալությունն ել հողակաղմից ու նրա մեջ դանդած խոնավության չափից և կախված։

Լավ ու պարաբա հողերում դաշտափլեռնն աճում և հաջող բերք և տալիս 8—10 տարի և ամելի։

Դատավիճոնի ցանքը.—Այս կերարույսը սերմում են աշխանացան ու գարնանացան հացարբույսերի հետ խառը, ինչպես և առանձին՝ աշխանը կամ գարնանը։ Աշխանացան ցորենի հետ սերմելու ժամանակ նախ ցորենն են շարքացան անում, իսկ նրանից հետո խոտացանիչով սերմում են դաշտափլեռնը, վորի վրա լավ և գարնանը կարմիր յերեքնուուկ ցաներ քանի վոր դաշտափլեռնը թռոյլ և զարգանում և առաջին տարին բերք չի տալիս, այսինչ գարնանացան յերեքնուուկն առաջին տարին լավ արոտ, կամ թե չեն հունձ և տալիս Մատնանցված ձեռդ կատարված խոտացանում յերկրորդ տարին ել մենակ յերեքնուուկ և հնձվում, իսկ հետադա տարիներին արդին ամբողջ խոտաբերքը միմիայն դաշտափլեռնից և բաղկացած լինում։

Շատ լավ արոյունք և ստացվում նաև դաշտափլեռնի ցանքից, յերբ հողի հողատար մշակությամբ հնարավոր և լինում ազատել ցանքերը մոլախոտերից։ Այսպիսի պայմաններում

ցանքի հենց հաջորդ տարվանից դաշտափլեռնի հիանալի բերք և ստացվում:

Դարնանացանը կարելույն աչփ վաղ, բայց և ցամաքած հոգում են կատարում. ըստ վարում ցաննուց հետ արտը տաշխանում են. Աշնանացանի վրա սերմած դաշտափլեռնը կարելի յև հոգածածէ չանել. ոյզպիսի ցանքը կատարում են վաղ գարնանը, հենց վոր ձյունը վերանում և դաշտերում ման գալը հնարավոր և դառնում:

Յեթե դաշտափլեռնն աշնանն են սերմում (ծորենի հետ խոնացան), ապա այդպիսի սերմուն աշնանացանի հոգածածէն լումից յերեք—չորս շարաթ հետո յեն կատարում, վորպիսպի դաշտափլեռնի չափազանց ուժեղ ու մեծ խոտածածէը չխեղպի աշնանացանին:

Անխոռն գարնանացանը լավ և կատարել յերեքնուուկի կամ առվույտի հետ՝ ջրարրի հոգերում, ինչպես և այն դրանների անչըրդի հողերում, վորուսդ տեղումները բավարար են:

Անխոռն ջաղացանի դնապօւմ հեկտարը համար 12—15 կգ սերմ և պահանջմում, իսկ ջարքացանի ժամանակ՝ 8—12 կգ (յեթե սերմերի ծլունակությունն 90%/₀ ե, իսկ մաքրությունը՝ 97%/₀). Այսից կերարույների հետ միասին ցանելու ժամանակ մեկ հեկտար ցանքի համար սերմերի հետեյալ նորմաներն են վերցնում. դաշտափլեռն՝ 9—11 կգ ու յերեքնուուկ՝ 7—9 կգ, կամ թե չեղաշտափլեռն՝ 7—9 կգ, կարմիր յերեքնուուկ 8 կգ ու շվեդական յերեքնուուկ 3½ կգ:

Դաշտափլեռնի սերմածածէնը մեկ-յերկու սանտիմետրից ավելի խոր չպետք և անել, մորովհնատե ամելի մեծ խորությունից նրանց ծիլ արձակել ու գետնի յերես դուրս գալ չեն կարող.

Դաշտափլեռնի խոտանավագր. — Այս խոտարույսը հասկակալան վերջում են հնձում. ուշացըած բերքահավաքի ժամանակ ցողունները կոպտանում ու սպիտակուցանյութեր չատ են կորչում. Խոտարերքը հողակազմի ու կլիմայի կապակցությամբ փոփոխվում ու տառանվում եւ Այսպես, որինակ՝ Յնվրոպայում մեկ



Նկ. 8. Դաշտափլեռն (աշմափելիուս)

Հեկտորի բերքագանակը 45—80 և ավելի ցենտներ է, Ամերիկա-
յում՝ 35—50 ցենտներ, իսկ մեղ մոտ՝ 25—30 ցենտներ և ավելի: Ամերիկայում վտառզման պայմաններում ու պարտապացչած հո-
ղերում դաշտափոնների խոտաբերքը 100 ցենտների յե հանում:
Աւրիշ խոտաբույսերի հետ խառը ցանած դաշտափոննը
հիանալի արոտ և անասունների համար: Անխառն վիճակում նա
անպետք և մշտական արոտավայրերի համար: Նրա ցանքերը
գերազանցորեն աշնանն են արտօնեցնում, վորովհետև այդ ժա-
մանակվա արոտը չի լինասում հաջորդ տարվա բերքին, ոյնինչ
դարձան արոտը վատ և անդրադառնում նրան հաջորդող ժամա-
նակաշրջանի բերքի վրա: Սովորաբար դաշտափոննի ցանքը յեր-
կու տարի հնձում են, իսկ մեկ կամ յերկու տարի և նույնիսկ
ավելի վորպես արոտ են ոգտագործում, վորից հետո արտը հեր-
կում և ուրիշ մշակույթի յեն հատկացնում:

ՍՈՐԳՈ (ՆԵԴՐԱԿՈՐԵԿ (Sorgo—Andropogon Sorghum Bro)

Սորգոն կամ հնդկակորեկը խոտազգիների ընտանիքին պատկանող միամյա բույս է, վորի մի քանի փոփոխակաների հայրենիքն Աֆրիկան և, իսկ մյուսներինը՝ Ասիան Աշխի յև ընկնում յերեք տարափոփոխակ՝ ճյուղատարած, վնաշախիտ և կորատարած կամ ջուռար, վորի խոտափունչ հուրանում է դորանում եւ

ճյուղատարած սորգոյից չոթիքներ ու ամելիներ են պատրաստում, նրա սերմերը վատ դարձանում ու վորպես կողմնակի կեր են գործածվում. ցողունները ծառայում են վորպես վառելիք, կտուրաների ծածկոց՝ յեղեղնի փոխարեն, և այլն. Այս նույն փոփոխակի տարատեսակն եւ շաքարատորգուն, վորի ցողունների մեջ մեծ քանուկությամբ յեղեղնաշաքար կա, և այս պատճառով ել շաքարատորգոն ամենաարժեքավոր տարատեսակներից մեկն եւ

Սորգոն շատ յերաշտակայուն բույս է, այս տեսակիտից նուավելի դիմացկուն եւ շոգերի նկատմամբ, քան յեղիպտացորենը.

Արտաքին տեսքով սորգոն շատ նման է կորեկին, այս պահանով նրան նեղբակորեկ ել են կոչում:

Նրա ցողունը 2—2¹/₂ մետրեարաչափ բարձր է. տաք յերերներում այս բարձրությունը 6—7 մետրի յև համեմում. Ցողունները 1—2 սմ հաստություն են ունենում:

Սորգոյի արմատախատեմը չափազանց զարդացած է. Դրաշնորհիք է, վոր նա խիստ շոգերին ել դիմանում է. Այդ հատկությունը լիովին ոգտագործելու համար սորգոն պահանջում է, վորպեսզի հողն առնվազն մեկ մետր խորությունը մշակված ու դյուրաթափանց լինի. Սակայն սորգոյի հզոր արմատներն իրենք ել են փիրացնում ու մշակում հողը, վորի հետեւանքով սորգոյից պատված տարածություններում հացարույսերը հիանալի ըերբ են տալիս:

Սորգոն իր տերեածոցերից ընձյուղներ եւ արձակում, վորոնք պետք եւ հեռացվեն. Ընձյուղահատումը լիովին թուլատրելի յև կերասորգոյի, բայց վոչ յերբեք շաքարատորգոյի նկատմամբ:

Սորգոյի ցողունները դեղնականաչ գույն ունեն, իսկ սեր-

մերը գանազան գույշնի յեն լինում։ Միջին-ասիական կորա-
տարածք կամ ջռ. հարը սպիտակ գույշնի ու ձվաճե սերմեր ունի,
շաքարասորդոն կարմրագորչ ե, իսկ դուրբա կոչված ատրատե-
սակը կարմրագույշ ե.

Հողի նկատմամբ սորդոն ավելի պահանջկու չե, քան յեպիպ-
տացորենը-մայիսը.

Սակայն ծանրակազմ, կավային, սառն ու հարթավայրերի հողերը
շե սիրում։ Նրա համար շատ լավ և ավագա-սեանողային ու հե-
ղեղարեր-փուխը հողակազմը, աճում և նույնիսկ աղուտներում ու
ավաղանողերում։

Հողի մտակարյունը.—Սորդոյի համար հողամասն աշնանն են
հերկում՝ 20—25 սմ խորությամբ։ Սակայն ավելի լավ և նախա-
պես 10—12 սմ խորությամբ կեղևատել հաղը, զորպեսզի ամառվա-
շնթացքում իշխող տեղումներն ամբողջին հողի խորքերում, մո-
լուխոտերը ծլեն ու հետագա մշակությամբ նաև կարուքար թրթուր-
ների հետ միասին ժամանակին վոչնչացվեն։ Ցերկորող հերկն
ավելի խոր կերպով կատարում են հոկտեմբերին ու ցելք թունում
են ձմռան ձյունի տակ։ Հողի չորանալու գել կռվելու նպատա-
կով գարնունը հերկաշերտերի ուղղությամբ մնկ անգամ փոցիում
են, վորից հետո կուլտիվատորներով հոկառակ ուղղությամբ հողը
փորեցնում և վերջապես, կրկին անգամ ցանքանելով՝ հողն
ուղղում ու համահարթում են ցանքի համար։ Ցեմե այս ամենից
հետո ցանքից առաջ դաշտը կրկին մոլախոտավ ծածկված լինի,
առաջ բազմախոփիկ գութանահերկով պետք և վոչնչացնել մոլա-
խոտերը։ Այս մանրահերկի ժամանակ գութանահերի շրջաթերը
հանում են, զորպեսզի հողաշերտերը սաստիկ չըրջվեն և այսպի-
սով հողը չափազանց չցամաքեցնեն։

Յամի ժամանակը.—Սորդոն, ինչպես և սուզանախոտը, մա-
յիսը, կորեկը, ուշ են սերմում, այսինքն, ցանում են այն ժամա-
նակը, յերբ հողը լույ տաքացած է լինում։ Աերմերը շատ լավ
ծլունակություն պիտի ունենան, վորպիսի հանողամանցը սեր-
մովերանսկիչ կայտանում ստուգիած պետք է լինի։ Լավ սերմերն
85—90%—ի ծլունակություն ունեն։ Սորդոյի սերմերն աճեն են
սկսում, յերբ ողի տաքությունն արդեն ~100%-ի յի հասնում (Ցելս.
ջերմաչոփով), ըստ վորում հողն ել բավականաչափ տաքացած
պետք և լինի։ Անբավարար տաքությունն ունեցող հողում սոր-
դոյի ծիլերը կամ անամաշափ են դուրս դալիս, կամ թե չե ամե-
նելին չեն աճում։ Բացի զրանից, չուտ ցանելու ժամանակ՝ առ-

րիմ վերջին ու մայիսի սկզբին պատահող ծեզացրաերը մեացնում
են սորգոյի քնքուշ ծիկերը:

Այս ամենը հաջվի առնելով՝ մեր լեռնային շրջաններում՝
Շիրակում, Ըեանի ավագանում և այլն, մի կողմէց անհրաժեշտ ե
սորգոն վաղ ցանել, վորապեսդի նրա հասունացման շրջանը կո բե-
լույն չափ յերեւրատն լինի, և, մյուս կողմէց՝ նկատի առնելով
այդ շրջանների յերկարատն, ցուրտ ու անձրևաշատ գարունը,
պետք ե կարելույն չափ հետաձգել սորգոյի ցանքը մինչև մայիսի
սկիզբը և նույնական մինչև մայիսի 15 ը:

Լեռնային շրջանների համար վաղահաս տարատեսակներ
պետք ե ընտրել վորովիօնին վաղացան ու վաղահաս, 80—120 որում
բերք ավող ևսթթանման սորգոն և հանդիսանում, ևմայլու տե-
սակը 110—140 որում և հասունանում, իսկ մեացած տեսակները
150—160 որգա ժամանակամիջոց են դահանջում իրենց հասու-
նացման համար Այս վերջին տեսակին ե պատկանում ևսումնելի կոչված նարնջագույն շաքարասորգոն, իսկ խոռազգիներից՝ կաֆ-
րակնը. Սորգոյի այս տեսակները նախալեռնային կամ դաշտա-
յին տաք շրջաններում են ցանում:

Ցանքը. — Կանաչ կերի, խստի ու սիլոսի համար սորգոն ցանում
են անխառն ու համատարած. ըստ վորում գերաշասելի յեն շա-
քարատեսակները (վաղացան նարնջագույնը և այլն), վորոնք
ավելի քնքուշ ու տերեաշատ ցողուններ ունեն. Այս տեսակներից
մեկ հետաք հոգում 24—32 կղ սերմ են ցանում:

Լայնաշաքը՝ 60—70 սմ ընդմիջումներ ունեցող ցանք են
կատարում, յերբ սորգոյից հասիկ կամ քաղցրահյութ են ուղում
ստանալ. Այդ ժամանակ մեկ հետարում 12—20 կղ սերմ են
ցանում. Սերմածածկն այս գեղցում, նայած հողաշերտի խօնա-
մությանը, 2—4 սմ խորությամբ են անում. Սորգոյի բազմամյա
տեսակն ել կա (S. halepcense), վորը միայն արտացանքագալուում
կամ թե չե թափած հողամասերում կարելի յե ցանել, վորովնեռն
այդ տեսակն իր ուժեղ արմատների շնորհիվ արագորին տարած-
վում ու հողը մոլախուռում եւ.

Ե. Հայաստանի լեռնային շրջանների անհարմար ու քար-
քարոս հողերում կարելի յե փորձել բազմամյա սորգոյի ցան-
քերը վոչ թե կերախոս ստանալու համար, այլ արոտների բու-
սակազմն ուժեղացնելու նպատակով:

Խնամքը. — Ցանելուց 6—10 որ անց սորգոն ծլում ե, այդ
ժամանակ անհրաժեշտ և արտը 2—3 անգամ վոցինել, վորը ծի-

լերին զոչ մի նվաս չի հասցնի, բայց կփխըացնի հողը, կնպաստի խոնավության պահպանմանը և կոչնչացնի մոլախտերը։ Հետագա խնամքը միջարքային մշակությունն եւ, վոր կատարում են «պլանետ» միջնահերկիչներով՝ ամապատճենացրում 2—3 անգամ։ Միաժամանակ թիերի նոսրացում և կատարվում՝ 18—35 սանտիմետր արանք թողնելով, նայած սորգոյի մշակության նպատակին (հատիկի կամ շաքարի ստացում), Ցողունների շաքարատվությունը մինչև 50%—ով ավելացնելու համար հանձնարարվում և կաթնահոսության ժամանակ հուրանները կտրել։ Համացանցերը չեն նոսրացվում, բայց մոլախոտերը իխստ զարգանում են, այս ժամանակ սորգոն 30—35 սմ բարձրության համեմին տմբողջ արար հնձում են, վորից հետո սորգոյի անեցողությունը ստուիկ ուժեղանում և և նա խեղզում և մոլախոտերին Բաղմամյա սորգոն լոկ մի պահանջ՝ մոլախոտերից մաջրվեռու պահանջ և զգում, լավ ե նույնապես յեթե մոչ ամեն տարի, դռնե տարեմեջ բազմամյա սորգոյի ցանցը միջնահերկ արմի։ Ավելի լավ արդյունք և ստացվում, յերբ բազմամյա սորգոյի ցանքատեղը հերեկելուց հետո վարսակի կամ վիկի խանացան են անում։ Ամերիկայում այդ մշակույթների բերքահավաքից հետո կրկին հարցողվում և բազմամյա սորգոյի մեկ կամ յերկու խոսարերք ստանալ։

Բազմամյա սորգոյի միջին խոտարերքը մեկ հեկտարեց չորս տոնն և լինում, յերեմն այդ բերքը շատ ավելի մեծ քանակության և հանում, մասնավանդ, յերբ դումադրային կամ հանքային (ազուտային) պարարտացում և կիրապավում։

Բազմամյա սորգոյի վերաբաժան անառունները և հատկապես խողերը հանույթով են ուտում։ Ցերերեմն նրա ցանքադաշտը ձմեռամուտին հերկում են, վորպիսդի սորգոյի վերաբաժաններից անառունի կեր ստանան։

Բազմամյա սորգոյի մշակության ամենահարմար վայրերը տաք շրջաններն են, ցուրտ շրջաններում ձմռան սառնումանից հերք վոչնչացնում են նրանց։

Լավ հողերում բազմամյա սորգոն տարվա տաք ամիսներին 2—3 անգամ հնձում են։

Կանաչ կերի մշակույթի ժամանակ մեկ հեկտար սորգոն 250 ցենտաներ և նույնիսկ ավելի կանաչ մասսա յե տալիս Արտաք համար նրա ցանքը հողամասերի բաժանելով աստիճանաբար են արածեցնում։

Առգոն մինչև 30 ցենտր սկզբաները և տալես

Շաքարածշակույթի ժամանակ սորզոյի մեկ հեկտարի բերքից 15 ցենտներ շաքար կամ մինչև 20 ցենտներ քաղցրահյութ և ստացվում:

Սորգոյի խոտանավաքի ժամանակավաքի ժամանակ տմենից առաջ հուրաններն են կտրում, ապա միայն հնձում են այն՝ գետնից 20 սմ բարձրությամբ, վորպեսզի տակից բռւյսն արագորեն անի ու յերկրորդ հունձ տա Ավելի՝ ցածրից հնձած սորգոն վատ տնեցցողություն և ունենաւ Հունձը խոտանար մեքենայով են կատարում։ Հնձած սորգոն յերեք որ թողնում են, վոր թոշնի, նետո ձիումոցիներով հավաքում են չեղակույտերի մեջ, վորպեսզի վերջնականապես չորանա Դրանից հնտո սորգոյի խոտը 6—7 որ բարդ են դնում և միայն շատ լավ չորանալոց հնտո կրում ու դեղ են դնում, Հանձնաբարպում և սորգոյի զեղակներում մեջնմեջ զարու ծզռտ փանը, վորն իր մեջ և հավաքում և ամելորդ խոնավությունը և այսպիսով սորգոյի խոտը պաշտպանում և փչանալուց Դիլագլուխներն ել ձդուով ծածկում են, վորպեսզի թրջվելուց պաշտպանեն այն:

Մեկ հեկտար ցանքից 150—170 ցենտներ սորգոյի չոր խոտ և ստացվում։ Այդ խոտն անասուններին կարենի յետալ կտրած կամ առանց մանրացնելու թողերի չարցման ժամանակ կերահատիկի մի ճասու սորգոյի խոտով են փոխարինում, այս զեղաքում խոտը նախորք մասրում ու տաք ջրի մեջ խաչում են։ Դարձացած սորգոն կոչու կերախոտ և տալիս։

Սորգոյի կտմաչ կերի մշակույթը։—Այս նպատակի համար սորգոն սկսում են հնձել հուրունները դուրս դալու ժամանակից մինչև բռւյսի մեկ մետր բարձրության հասնելը կամ մինչև սերմերի լիովին հասունանը։ Սորգոն կանաչ կերի համար ոգտագոծելու ժամանակը հուրանները դուրս դալուն հաջորդող յերկու յերեք շաքաթվա ժամանակիցն ե, վորի ընթացքում կերը դեռևս հյութալի յել լինում։ Այդ ժամանակից հնտո սորգոն կոչամանում ու, վորպես կանաչ կեր, այլևս անպետք և դառնում։ Տնտեսությունն ավելի յերկարատես ժամանակ հյութալի կանաչ կերով աղահովելու համար սորգոյի ամբողջ ցանքը մի վօրոշ ընդհատումներով, որինկ՝ տասնորյա ընդմշիռումներով են կտարբում կամ թե չե վագանաս և ուզ հասնող մի քանի տեսակներ են ցանում, վորպեսզի կանաչ կերի համար պահանջվող հունձն ել զանազան ժամանակներում և աստիճանաբար կատարեն։

Մեկ հեկտար սորգոյի ցանքը յերեք շաբաթվա ընթացքում կարող է կերպարել 20-30 դրույտ անառուն, իսկ հաջող բերքատվության ժամանակ՝ նույնիսկ այդ թվից ել ավելի: Սորգոյի կերպարմանն անառուներին առտիճանաբար են ընտելացնում, վորպեսզի խուսափած լինեն նրանց հարավոր փորուռուցքից: Անառուների բոլոր տեսակները, նրանց չարքում նույնություն ու թաշունները, սորգոյի կանաչ կերը հաճույքով են ուստամ:

Անգլան վարպետ սիրոսանյօւք.—Այս նպատակի համար սորդոն կաթնահասության ժամանակ են հավաքում Սորդոյի սիլոսացումն ավելի լավ և սոցայի, կերպությունի ու սորդոյի հետ ցանկող ուրիշ բույսերի հետ միասին կատարել Սորդոյի կերպարի սիրոսանին առաջարկությունը աստիճանաբար են մարժեցնում:

Παραπομβή θωσκού μετρήσεων προστατευτικού πλήρους απορροφής σε πάγκο θωσκού μετρήσεων προστατευτικού πλήρους απορροφής.

Բեկոն ստանալու համար խողեր չխղացնելու ժամանակը սորբոն համարյա թե դարձն համահավասար արժեքով և դորձագրվում, և ստացված խողամիսը մայիսով չաղացրած խողամույց ավելի լավ և լինում: Թռչուններն ել հանույցով են ուսումնորդոյի հատիկները նույնիսկ առանց մանրելու, իսկ մանրացրած հատիկները տայտրին ել կարելի յետ տար:

Սորդոյի հատիկային մշակույթը և հնարավոր և տարածել մեր դաշտային ու նախալսռնային շրջաններում, ինչպես նաև լուսամասերի վրոշ վայրերում, լոկ այն պայմանով, վոր այդպիսի տեղերում սորդոյի վաղահաս տեսակներ քանիվեն:

Վերոնիկյալ ըսլոր տվյալներից տեսնում ենք, վոր մասնաւորապես լեռնային շրջաններում, սակավահողության ու հատիկային բույսերի բազայի անբավարար լինելու անհոգությամբ, սորբոն չափաղանց արժեքավոր ու անփոխարինելի մշակույթի և մեր անասնապահության գրագաղման համար:

ՍՈՒԴԱՆԱԽՈՌԻ (Ծուճակ—*Andropogon sorghum sudanensis*).

Սուդանախորի հայրենիքն Աֆրիկան և Սուդանի անապատը, վորտեղ տաք և շոր կլիմայում նա վորպես մոլախոտ և աճում է աչքի յի ընկնում վորպես յերաշտակայուն կերաբույս Աֆրիկայից սուդանախոռը միայն 1909 թվին ներմուծվել և Ամերիկա, վորտեղից 1915 թվին Վ. Վ. Տալանովն այդ բույսը Խ. Միռություն և բերել, Այդ թվին սուդանախոռն առաջին անգամ ցանվել և Դնեպրովեարովուկի փորձադաշտում 1921 ու 1924 խիստ չորային տարիները թափած բույր կերախոռերն ու հացարույսերը կամ վոչչացան յերաշտից, կամ չնչին բերք ավելի, իսկ սուդանախոռի բերքառվությունը պահպանվեց 15—25 ցենտների սահմաններում: Բարեհաջող տարիները նրա հեկտարաբերքը 40—60 ցենտների յի հասնում:

Սուդանախոռը միամյա բռւյս և, ունի շատ հզոր արմատախօսեմ ու բարձր (մինչև 2 մետր բարձրության հասնող) ցողուններ՝ դարձացած տերևածածկով ու հուրանաձև ծաղկափնյով:

Սուդանախոռի թուփը շատ ցողուններ ունի. խոնագ տարիները նրանց թիվը 20—80-ի յի հասնում, ցողունների հաստությունը մի փոքր զորեղ և կորեկից, բայց և շատ բարակ և սորպոյից. Նրա ցողուններից միանգամայն քնքուշ ու մննդավետ խոռ և սառցուում: Ցողունն իր ներառում հյութալի փափկոն ունի:

Սուդանախոռը արամախօչաձն բեղմապարզովով բռւյսերի թվին և պատկանում: Նա դյուրությամբ տրամախօչվում և սորպոյի հետ: Այսպիսի տրամախօչումը տալիս և միանգամայն նորը, յերեքն յերեք մետր բարձրություն ունեցող բռւյս: Յերբ սուդանախոռի ցանքանախառակը սերմ ստանալն և, այդ ժամանակ, տրամախօչումից խուսափելու համար, այն պետք է սերմել սորպոյի արտերից ^{2/4}—1 կիլոմետր հեռավորության վրա:

Սուդանախոռի սերմերի հասունացման համար 140—180 որ և հարկավոր, այսինքն՝ սորպոյի վաղահատ ու միջին տեսակ-հոտարույսեր—6

Ների պահանջած ժամանակից ավելի, համարյա յերկու անդամ ավելի մեր գարնանացանների պահանջածից, վորոնց հասունացման համար 90—105 որ և անըլաժեշտ:

Սերմատվության համար սուզանախոտը մեղ մոտ միայն դալտային գոտում կարող է աճել ու գարգանալ, իսկ կերպախոտի, սիլոսի և արոտի համար կարելի յէ ցանել նաև լեռնային շրջան ներում:

Հողակազմի նկատմամբ սուզանախոտը պահանջկոտ չե. Նա կարող է աճել ամեն տեսակ հողերում, սակայն նրա համար հատկացված հողն ազատ ու մաքուր պետք է լինի մոլախոտերից: Սուզանախոտը մոլախոտերից առանձնապես տուժում ու վախենում է անման առաջին շարաթների ընթացքում, յերբ նրա ծիւլը թույլ են աճում ու գարգանում: Արմատախոտեմի հետագա գարգացումից հետո սուզանախոտը մոլախոտերին ել և հաղթահարում:



Նկ. 7. Սուզանախոտ

Հողամօնկաւմը. — Սուզանախոտի ցանքին հատկացված հողը դեռ աշնանից 18—20 սմ խորությամբ հերկում ու թողնում են ձյունի տակ: Գարնանը հերկը յերկու անգամ ցացանում են, վորպեսզի հողը փափուկ մնա և նրա մեջ ամրագած խոնավությունը պահպանվի: Սուզանախոտի ցանքն ուշ և կատարվում, այն զուգադիպում է կորեկի ու յեղիպտացորենի ցանքաժամանակին: Մինչև ցանելու ժամանակը

հասնելը հերկած հողամասում մոլախոտեր են աճում, վորոնց վրչնչացնում են կամ թեահան արված բաղմախոփիկ դութաններով կամ եքստերպատորներով: ցանելուց առաջ հողը կրկին ցացանում են:

Լեռնային շրջաններում սուզանախոտի ցանքը մայիսի սկզբներին պետք է կատարել Մեկ հեկտար շարքացանի համար պահանջվում է մինչև 36 կգ սերմ, իսկ լայնաշարքի ժամա-

նակ՝ 7), — 15 կը Սերմածածկի խորությունը 3—4 սմ, իսկ խռնավ հողերում մինչև 5—6 սմ են անում:

Թաղնանն ու շարքերի փխրացումն այն ժամանակ են անում, յերբ ձիւերը յերնում են. 70 սմ լայնություն ունեցող շարքերում քաղնանը ձիազգանետներով կամ տրակտորային շղթայագործիքներով են կատարում. Առաջին քաղնանից յերկու-յերեք շարք անց յերբ մոլախոտերը կրկին ուժեղանում են, յերկրորդ միջնահերքն են կատարում:

Խոս ու կանաչ կեր ստանալու համար ավելի լավ ե սուզանախոտի համացանք անել, վորովհետեւ այդ գեղցում համակավասր ու խիտ բռւսածածկ և հյութալի խոս և ստացվում: Լայնաշերտ շարքացանի ժամանակ բերքը բարձր և լինում, բայց վտա հատկություն ու կոչտ խոս և ստացվում:

Սուզանախոտը հնձում են ծաղկեան սկզբին կամ հուրանահեր արձակելու ժամանակաշրջանում, այդ ժամանակ ե, վոր լավվրակ խոտ և ստացվում, և, մյուս կողմից բույսը՝ կրկին անում ու զարգանում ե հաջորդ բերքի համար Սուզանախոտը 2—3 հունվար և տալիս, յեթի միայն նախորդ հունձը փոքր ինչ վաղ ե կատարվում:

Սորգոյի ու յեպիպտացորենի նման՝ սուզանախոտը վորպիս սիլոսանյութ ել և գործածվում: Ավելի լավ ե նրա սիլոսացումը կատարել ունդավոր բույսերի հետ:

Սերմ ստանալու համար սուզանախոտը 55—65 սմ իրարից հետո ձգվող լայն շարքերով ցանում և ամառվա ընթացքում 2—3 անգամ միջնահերկ են կատարում Սերմեր ստանալու համար բերքահավաքն այն ժամանակ են կատարում, յերբ վերեկ հուրանահերն արդեն հասունացած են լինում, ավելի ուշացած բերքահավաքը սերմաթափության պատճառ կարող ե զանար:

Սուզանախոտի մի հեկտարից 8—10 ցենտոներ սերմ և ստացվում:

ՍՈԴԱՐ (ՎԵՆԳՐԱԿՈՐԵԿ—Mogar Panicum italicum)

Մոգարը միամյա, յերաշտակայուն խոտ ե, բայց այն կարելի յն մշակել նաև հատիկ ստանալու համար, վորպիսի հատիկ ներից ձափար են պատրաստում:

Ա. Միության մեջ մոգարի մշակությունը լայն ծավալում և ստացել հարավային մասներում, վորտեղ առանձապես նրա յերաշտակայուն հատկություններն են գնահատում:

Ա. Հայաստանում մոգար կարելի յն ցանել Շիրակում, Աեղանի ավազանում և այյն Յեղ քանի վար այդ վայրերում ամառային անձրևները սակագ են, ուստի անհրաժեշտ ե հատուկ ուշադրություն դարձնել վորպեսպի ձմեռային ու գարնանային բավականաչափ առատ տեղումներից ամբարված խոնավությունը կարելույն չափ յերկար ժամանակ պահպանվի հսղի մեջ. Այդ խոնավությունն ել բավական կլինի հիշտատակված շրջաններում մոգարի բավարար բերք ստանալու համար ինսկ յեթե ամառվա ժամանակաշրջանում մի-յերկու անգամ ել լավ անձրև տեղա, այդ դեպքում մոգարի խոտի լիաստար բերքն ապահոված կլինի:

Այս նկատի առնելով անհրաժեշտ ե հսղ տանել, վորպեսպի մոգարի մշակույթը լայն տարածում ստանա լեռնային շրջանների անջրդի հողերում: Նրա մշակույթը շատ նման ե կորենելի մշակույթին, վորին մեր ազգաբնակչությունը քաջ ծանոթ ե. այդ պահճառով ել նրա տարածումն արագ թափ ու մեծ ծագալ կարող ե ընդունել, վորե կնորաստի խոռացանության ցանկալի ընդակամանը:

Մոգարը չոր ու տաք կլիմայի բույս ե. խոնավ ու ցուրտ կլիմայի մեջ նա հաջողությամբ անել ու դարձանալ չի կարող: Նա շատ լավ դիմանում է չորսության, վորպիսի հանգամանքը մոգարը շատ արժեքավոր կերպույս ե գարմանում մեր լեռնային յերաշտաշատ շրջանների համար:

Լիակատար հասունացման համար մոգարը միջին հաշվով 103 որ ե պահանջում, ըստ վորում այդ ժամանակաշրջանը տա-

տանգում և 95—120 որվա միջև Առաքերքը ստանալու համար միջին հաշվով 81 որն և լ բավական պետք է համարել՝ 60—115 որվա տատանումներում:

Մոգարը սկսած զայխն, ավաղային ու ավաղախառն ավելի թեթևակազմ հողեր և սիրում նա չի դիմանում աղուտների և կավային, ու կավախառն ժանը հողակազմին, վորի մեջ կամ ամենին բերք չի տալին, կամ թե չեն վատորուակ ու փոքրաքանակ խոտարերք և տալիս Կորեկի նուան մողարն ել լավ մշակված ու մոլախոտերից աղատ հողեր և սիրում: Մոգարի ցանքերը մոլախոտերից աղատ լինելու անհրաժեշտ պահանջ ունեն բույրի, աճեցողության առաջին շրջանում, յերբ նրանց թույլ են ու դյուրությամբ խեղզվում են մոլախոտերի մեջ:

Մոգարանողի մօտակությունը:—Հողի մշակության աշխատանքներն աշխանից պետք և սկսել, այդ միջոցով պետք և կարելու, չափ խոնավություն ամբարել հողի մեջ, մաքրել ցանքատեղը մոլախոտերից և այլն. աշխանահերելը կատարվում է 18—20 սմ խորությամբ: Ավելի լավ և լինում, յերբ նախ քան աշխան այդ խոր հերկ անելը ցանքատեղը մանրագութաններով 6—8 սմ խորությամբ կեղնատում են: Այս միջոցով նախորդ բերքից հետո մնացած խոնավությունն ավելի հաջողությամբ և պահպանվում: Բացի դրանից, այս զեղքում ամառվա վերջիրից տեղացող անձրեների խոնավությունն ել ավելի զյուրությամբ և ամբարվում հողի մեջ, և մոլախոտերն ել վոչնչացվում են: Վորպեսզի հողը չըրանա, վաղ դարնանը, հենց վոր դաշտային աշխատանք կատարելը հնարավոր և գառնում, հողաշերտերը չընդ գործիք ներով, կուտիվատորներով կամ խիտ ատամնավոր փոցխով մողարի ցանքատեղը փխրացնում և ապա ցածրանում են: Այսպիսի մշակությունը վաղորոք են կատարում, վորպեսզի մինչև ցանելը հողը կանոնավոր կերպով նստի: Ցեթեւ մինչև ցանք կատարելը մոգարին հատկացված հոգամասը մոլախոտերով և ծածկվում, այդ դեպքում ցանքից առաջ մոլախոտերը պետք և վոչնչացնել՝ բազմախոփիկ զութաններով կամ փոցխելու միջոցով: Ցանելուց առաջ կատարվող այսպիսի մշակությունը նկատելի չափով նվազեցնում և հետագա ժամաները, վորովնետեւ այդ ժամանակ մոլախոտերը չեն կարսղանում ֆլատել մոգարի ցանքերին, իսկ յերբեմն ել բարհանելու, կարիքն ամենափակ վերանում եւ:

Մօգարի ցանելը:—Այս կերպույսի ցանքը կորեկի նման դարնանացան բոլոր մշակույթներից հետո յէ կատարվում, վո-

բովհետև ծեփացրտերին նա չի դիմանում և սառը յեղանակ չի տանում: Հաջող զարգացման համար մոգարը պահանջում է, վոր հողը բավականաչափ տաքացած լինի, իսկ յեղանակն արդեն կոտրված լինի դեպի շոգերը: Ծեփացրտերն ու տաք յեղանակները մեծապես դանդաղեցնում են մոգարի աճեցողությունը, այնինչ այդ նույն ժամանակին մոլախոտերը զարգանում ու խեղդում են մոգարի մատուդ ծիրերը:

Մոգարը կարմիք յե ցանել, յերբ հողի ջերմաստիճանը 12—15°-ի յե հասել վորպիսի տաքության բացակայությունը սերմերի փշացման պատճառ կարող ե դադար:

Մոգարը սերմում են շաքարացնով կամ ձեռքով շաղացան են անում: Առաջին դեպքում հեկտարին 16—20 կտ սերմ և պահանջվում, իսկ շաղացանի ժամանակ՝ 24—32 կգ: Մոգարի սերմերը պետք ե հավաքված լինեն վերջին բերքից և թարմ լինեն՝ 85—90%: Ֆլունակությամբ Այս հանդամանքն ստուգված և վերացված պիտի լինի սերմահակիչ կայանի: Կողմից:

Մոգարի սերմերը յերկար պատկերուց ծլունակությունը կորցնում են, Յերկու տարվա սերմերի ծլունակությունն արդեն նկատելիորեն պակասում ե, իսկ ավելի հին սերմերը (չորրորդ տարվանից սկսած) միանդամայն անպետք են գտնում սերմացուի համար, վորովհետև նրանց ծլունակությունն աննկան չափերի յե համում:

Մոգարի սերմը շատ մանր ե, ուստի ցանելու ժամանակ նրա հողածածկը 2—3 սմ-ից ավելի խոր չպետք լինի: Սերմ ստանալու նպատակով մոգարը շաքարացն պետք ե անել՝ 50—60 սանտիմետր լայնություն ունեցող շաքերով, այս դեպքում մեկ հեկտարի համար 12—16 կտ սերմն ել բավական կլինի: Շարքացան մոգարի քաղանենելը ձեռքի կամ ձիաքարը պլանետներով են կատարում, ըստ վորում ամրող ամառվա ընթացքում մեկ կամ յերկու քաղանենը բավական կարելի յե համարել:

Շաղացան մոգարի խնամքն ու մշակությունն այն ե, վոր խտակաղմ հողերում անձրևների հետևանքով կեղեակալում առաջացած դեպքում տապանավոր գլուխների միջոցով կեղեները փրչում են:

Մոգարախոսի բերքանակամք.—Լավորակ կերախոս ստանալու համար մոգարի հունձը պետք ե կատաքել, յերբ այդ բույսի հուրաններն սկսում են դաւրս գար Ավելի լավ և դրանից ել քի առաջ սկսել հունձը, վորովհետև ըերքահավաքի ուշացման ժա-

մանակ կոչտ ու նվազ հյութալի խոտ և ստացվում։ Հնձած մոռ
դարը յերկու որ թողնում են արտում փայտած, վորպեսպի ցա-
մաքի. դրանից հետո լավ շեղջում ու մի քանի որ ել այդպես են
թողնում, վոր չորանաւ Մոգարը վերջնականապես չորացնում են
բարդերում, վարից հետո միայն կրում են անտեսություն ու դեղ
դնում։

Բարեհաջող պայմաններում մեկ հեկտար մոզարացանքը
մինչև 65 ցենտներ չոր խոտ և տալիս, իսկ նըս միջին բերքա-
տվությունը 24—32 ցենտներ են հաշվում։

ԲՈՎԱՆԴԱԿԱՆԻՑ

Առվաւյտ	3
Կորնգան	32
Ցերեքնուկ	41
Գարնանացան վիճ	56
Բջառվաւյտ	62
Սուդանախոռն	81
Մազար	84



Պատմ. ինքնազգեր՝ Ա. Դաշտակյան

Սբուղը Դարձնելու Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐ Խ 9-50

203

www.bjp 176

approx. 1500

Հանձնված և պատդրսթյան 1935 թ. գիտական 15-ին
Սուբրազման և առաջնորդության 21-ին

ԳՅՈՒՂՂԱՐԱՏ ՏՎԱՐԱՆ. ԵՐԵՎԱՆ, ՆԱԼԻՆԴՅԱՆ 50

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002629

ЧИСЛО 80 ЧИМ.

A II
24074

264.



61

ГР. АРУТИОНЯН

КОРМОВЫЕ ТРАВЫ

СЕЛЬХОЗГИД

1935

ЗРИВАНЬ